Թեմա	Հարցի համարը	Հարց	Պատասխան
Օրենսդրություն	1	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, եթե ՀՀ Կենտրոնական բանկի մյուս նպատակները հակասում են իր հիմնական նպատակներին, ապա ՀՀ կենտրոնական բանկը պետք է առաջնությունը տա	ՀՀ-ում դրամի փոխարժեքի կայունության ապահովմանը
			ՀՀ բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության, բնականոն գործունեության ապահովմանը
			ՀՀ-ում մակրոտնտեսական կայունության ապահովմանը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	2	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են.	ՀՀ-ում մակրոտնտեսական կայունության ապահովումը
			ՀՀ բանկային համակարգի կայունության ապահովումը
			ՀՀ-ում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	3	Նշել սխալ պատասխանը. Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպությունում ստուգում իրականացնելիս վարկային կազմակերպությունը պարտավոր է	ապահովել ԿԲ վերստուգող խմբի անարգել մուտք և ելք վերստուգվող վարկային կազմակերպության շենք կամ նրա առանձին ծառայողական տարածքներ, այդ թվում՝ սերվերային և համակարգչային, ծրագրային ապահովման այլ սենյակներ,
			ԿԲ վերստուգող խմբին տրամադրել վարկային կազմակերպության հաճախորդներից և մասնակիցներից ստացված բողոքները և առաջարկությունները,
			ԿԲ վերստուգող խմբին հատկացնել աշխատանքային տարածք, որն ապահովված է աշխատելու համար բավարար պայմաններով, ինչպես նաև տեխնիկական, կապի և այլ անհրաժեշտ միջոցներով,
			կատարել վերստուգող խմբի ղեկավարի և անդամների ցանկացած պահանջները:
	4	Վարկային կազմակերպությունները չեն կարող թողարկել.	բանկային վկայագրեր,
			փոխանցելի մուրհակներ,
			հասարակ մուրհակներ,
			արտոնյալ բաժնետոմսեր:
	5	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող ստեղծվել.	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպաիրավական ձևով,
			բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևով,

			առևտրային կոոպերատիվ ընկերության կազմակերպաիրավական ձևով,
			լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպաիրավական ձևով:
	6	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը, բացառությամբ խնայողական միությունների, կարող է ստեղծվել, որպես.	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
			բաժնետիրական ընկերություն,
			առևտրային կոոպերատիվ ընկերություն,
			տնտեսական ընկերակցություն:
	7	Ու՞մ կողմից կարող են սահմանափակվել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ֆինանսական գործառնությունները.	ՀՀ արժեղթերի հանձնաժողովի կողմից,
			ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից,
			ՀՀ կենտրոնական բանկի կողմից,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	8	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը վարկային կազմակերպության գործունեության համար կարող է սահմանել սահմանափակումներ	թույլատրելով նրանց կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների մի մասի իրականացումը,
			արգելելով նրանց կողմից օրենքով սահմանված բոլոր ֆինանսական գործառնությունների իրականացումը,
			սահմանափակելով այն անձանց շրջանակը, որոնցից վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ ներգրավել,
			սահմանափակելով այն անձանց շրջանակը, որոնց շրջանակում վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ տեղաբաշխել
	9	Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության գործունեության համար սահմանվող սահմանափակումները պետք է նույնը լինեն.	բոլոր վարկային կազմակերպությունների համար,
			միևնույն տիպի վարկային կազմակերպությունների
			միևնույն ֆինանսական գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունների
			միևնույն կազմակերպաիրավական ձևով ստեղծված վարկային կազմակերպությունների համար:

	10	Նշել սխալ պատասխան. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների տիպեր (խմբեր) են համարվում.	խնայողական միությունները,
			յիզինգային կազմակերպությունները,
			ֆակտորինգային կազմակերպությունները,
			որպես վարկային կազմակերպություն վերագրանցված կազմակերպությունները:
	11	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության տիպեր (խմբեր) չեն համարվում.	վարկային միությունները,
			խնայողական միությունները,
			ներդրումային ընկերությունները,
			ֆակտորինգային ընկերությունները:
	12	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեություն է համարվում, որպես ձեռնարկատիրական գործունեություն.	ավանդների ներգրավումը
			վարկերի տրամադրումը
			վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը (բացառությամբ ներդրումային հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերի),
			փոխառությունների ներգրավումը
	13	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միությունները դրամական միջոցներ են ներգրավում.	Հայաստանի Հանրապետությունից,
			բացառապես իրենց մասնակիցներից,
			իրենց մասնակիցներից, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից,
			միջազգային կազմակերպություններից:
	14	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միությունները դրամական միջոցներ են ներգրավում իրենց մասնակիցներից	իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից և դրանք տրամադրում իրենց մասնակիցներին և այլ անձանց,
			իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից և դրանք տրամադրում իրենց մասնակիցներին,
			և դրանք տրամադրում նրանց, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց,
			և դրանք տրամադրում նրանց:

	15	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, արգելվում է վարկային կազմակերպության լիցենզիա չունեցող անձանց կողմից «Վարկային կազմակերպություն» բառակապակցության կամ դրա ածանցյալների օգտագործումը	հրապարակային օֆերտայում,
			գովազդներում,
			ճիշտ պատասխանը նշված չէ
			գովազդներում, և նմանատիպ գովազդ իրականացնողներին աջակցումը:
	16	Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը հաստատվում է	ՀՀ կենտրոնական բանկի կողմից,
			վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի կողմից,
			ՀՀ ֆինանսների նախարարության կողմից,
			վարկային կազմակերպության գործադիր մարմնի կողմից
	17	Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգով, չի սահմանվում վարկային կազմակերպության	միջոցների ներգրավման և տեղաբաշխման մեթոդները
			գործունեության տեսակը, ոլորտը,
			գործունեության կարգը
			կանոնադրական կապիտալի չափը:
	18	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը վճարվում է.	Կենտրոնական բանկում բացված ընթացիկ հաշվին,
			ՀՀ տարածքում գործող առևտրային բանկում բացված ընթացիկ հաշվին,
			օտարերկրյա առևտրային բանկում բացված ընթացիկ հաշվին,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	19	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը վճարվում է.	Կենտրոնական բանկում բացված ընթացիկ հաշվին,
			այլ վարկային կազմակերպությունում բացված կուտակային հաշվին,
			օտարերկրյա առևտրային բանկում բացված կուտակային հաշվին,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	20	Նշել սխալ տարբերակը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գրանցումը և լիցենզավորումը մերժվում է, եթե.	ամբողջությամբ վճարված չէ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը,

			վարկային կազմակերպությունը դրան նախորդող մեկ տարվա ընթացքում խախտել է հիմնական տնտեսական նորմատիվներից գոնե մեկը
			վարկային կազմակերպության գործունեության վայրը չի համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջներին,
			վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք չեն ստացել Կենտրոնական բանկի համաձայնությունը
	21	ԿԲ-ն գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությանը կամ մերժում է դրա գրանցումը և լիցենզավորումը օրենքով սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից	երկու ամսվա ընթացքում,
			երկու շաբաթվա ընթացքում,
			մեկ ամսվա ընթացքում,
			15 օրվա ընթացքում:
	22	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ.	ՀՀ պետական ռեգիստրում նրա գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու պահից,
			Կենտրոնական բանկում գրանցվելու պահից երեք օր
			Կենտրոնական բանկ գրանցման դիմում ներկայացնելու պահից,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	23	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե՝	ներկայացվել են կեղծ տեղեկություններ,
			ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ,
			վարկային կազմակերպության ղեկավարները չեն ստացել Կենտրոնական բանկի համաձայնությունը,
			վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք չեն ստացել Կենտրոնական բանկի համաձայնությունը
	24	Նշեք սխալ տարբերակը. ԿԲ-ն մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե՝	ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,
			ներկայացված փաստաթղթերը թերի են,
			ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն,
			վարկային կազմակերպության ղեկավար անձինք անցյալում վարկային գործունեությամբ չեն զբաղվելը:
	25	Վարկային կազմակերպության լիցենզիան տրվում է՝	տաս տարով,
			երեք տարով,
			հինգ տարով,

			անժամկետ:
	26	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Վարկային կազմակերպության լիցենզիան չի կարող՝	օտարվել,
			գրավադրվել,
			այլ անձանց տրվել օգտագործման,
			անվավեր ճանաչվել:
	27	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը վարում է տրամադրված լիցենզիաների գրանցամատյան,	որը անվճար տրամադրվում է Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր բանկերին և վարկային կազմակերպություններին
			որը բաց է հասարակության համար,
			որում ներառվում են բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ,
			որում ներառվող տեղեկությունների տրամադրման կարգը սահմանում է կառավարության նորմատիվ ակտերը գրանցող կառավարության լիազորած մարմինը:
	28	ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունը կարող է ՀՀ տարածքում կամ օտարերկրյա պետություններում բացել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք կարող են գործել	ՀՀ ԿԲ դրանց գրանցման դիմումի ներկայացման պահից,
			ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորման պահից,
			ՀՀ պետական ռեգիստրում գրանցման պահից,
			ՀՀ ԿԲ-ում գրանցման պահից
	29	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման կարգը սահմանվում է.	Կենտրոնական բանկի ներքին իրավական ակտերով,
			Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով,
			Կենտրոնական բանկի անհատական բնույթի իրավական ակտերով,
			բոլոր պատասխանները սխալ են:
	30	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման դիմումը Կենտրոնական բանկը բավարարում կամ մերժում է.	երկու ամսվա ընթացքում,
			երկու շաբաթվա ընթացքում,
			մեկ ամսվա ընթացքում,
			մեկ ամսվա ընթացքում, սակայն Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ դիմումի քննության մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել:
	31	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի գրանցման դեպքում Կենտրոնական բանկը տալիս է.	գրանցման վկայական
			համապատասխան լիցենզիա,

			հաշվառման վկայական,
			իր համաձայնությունը:
	32	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի գրանցման դիմումի մերժման դեպքում Կենտրոնական բանկը	ետ է վերադարձնում դիմումը վարկային կազմակերպությանը,
			եռօրյա ժամկետում հիմնավորում է իր որոշումը,
			մերժման հիմքերի մասին հնգօրյա ժամկետում տեղեկացնում է վարկային կազմակերպությանը,
			ետ է վերադարձնում դիմումը և մերժման հիմքերի մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է վարկային կազմակերպությանը:
	33	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի գրանցման դիմումը, եթե՝	ներկայացվել են կեղծ տեղեկություններ,
			ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ,
			ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն,
			մասնաճյուղի հիմնադրումն աննպատակահարմար է:
	34	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող.	տրամադրել երաշխիքներ,
			ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,
			մատուցել ֆինանսական խորհրդատվություն,
			գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ:
	35	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել	բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով,
			բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով,
			բացառապես սպառողական վարկեր և փոխառություններ, իսկ ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով,
			բոլոր պատասխանները սխալ են
	36	Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության իմաստով սպառողական վարկի կամ փոխառության տրամադրում է համարվում այն գործարքի կնքումն ու կատարումը, որով	պարտապանը ստացված միջոցները կարող է օգտագործել ինչպես սպառողական, այնպես էլ ձեռնարկատիրական նպատակներով,

			պարտապանը ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես սպառողական նպատակներով, որոնք կապված չեն իր ձեռնարկատիրական գործունեության հետ,
			պարտապանը ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես ձեռնարկատիրական նպատակներով,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	37	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող.	տրամադրել վարկեր և փոխառություններ,
			իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն,
			մատուցել ֆինանսական գործակալի ծառայություններ,
			տրամադրել երաշխիքներ:
	38	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությանն արգելվում է իրականացնել	առևտրային գործունեություն,
			արտադրական գործունեություն,
			պարտքերի հետստացման գործունեություն
			ապահովագրական գործունեություն:
	39	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային կազմակերպության.	գործադիր տնօրենը,
			վերստուգիչ հանձնաժողովի անդամները,
			գլխավոր հաշվապահը,
			մասնաճյուղի կառավարիչը:
	40	Նշել սխալ տաբերակը. Վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային կազմակերպության՝	խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները,
			գործադիր տնօրենը, նրա տեղակալը,
			գործադիր տնօրենը, նրա տեղակալը, վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները, մասնաճյուղի գլխավոր հաշվապահը, մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալը,
			վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները:
	41	Նշել սխալ տարբերակը. Վարկային կազմակերպության ղեկավար չեն կարող լինել.	դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք,
			դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք,
			սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք,

			անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես վկաներ
	42	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ չեն կարող լինել՝	դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք,
			սնանկ ճանաչված և չմարված պարտավորություններ ունեցող անձինք,
			քրեական գործով որպես կասկածյալ, մեղադրյալ , վկա կամ ամբաստանյալ ներգրավված անձինք
			ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանափակ գործունակ ճանաչված անձինք
	43	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված անձանցից որի որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները չի սահմանում ՀՀ կենտրոնական	վարկային կազմակերպության վարչության նախագահի տեղակալի,
			վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի տեղակալի,
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալի,
			կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի:
	44	Նշված պնդումներից որն է սխալ. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի,	անձը կարող է վարկային կազմակերպության ղեկավար աշխատել Կենտրոնական բանկում գրանցվելու պահից,
			վարկային կազմակերպության ղեկավար գրանցվելու համար անձը պետք է ունենա վարկային կազմակերպության ղեկավարի որակավորման, մասնագիտական համապատասխանության վկայական,
			վարկային կազմակերպության ղեկավարի գրանցումը կատարվում է դիմելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում,
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամների որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշները և կարգը սահմանում է Կենտրոնական
	45	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները պարտավոր են իրենց կանոնադրության մեջ պարտադիր ներառել դրույթներ.	տնօրենների խորհրդի և վերստուգիչ խմբի ֆունկցիաների տարանջատման վերաբերյալ,
			արտաքին աուդիտի իրականացման մեխանիզմների վերաբերյալ,
			հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների ներկայացման սկզբունքների վերաբերյալ,
			գլխավոր հաշվապահի և գլխավոր ֆինանսական մասնագետի ֆունկցիաների վերաբերյալ:
	46	ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պարտավոր չեն ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանը ներկայացնել՝	գործադիր տնօրենի փոփոխությունը,

			կանոնադրությունում կատարված փոփոխությունները,
			վարկային կազմակերպության վարկային վարչության պետի փոփոխությունը,
			վերստուգիչ հանձնաժողովի անդամների կազմում կատարված փոփոխությունները:
	47	Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել.	վարկային կազմակերպության հիմնադիրների նախնական համաձայնությամբ,
			Կենտրոնական բանկի և ՀՀ արդարադատության նախարարության նախնական համաձայնությամբ,
			առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության,
			միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:
	48	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշանակալից մասնակցություն ունեցող անձ է համարվում վարկային կազմակերպության	ընդհանուր կապիտալի 10 և ավելի տոկոս մասնակցություն ունեցող անձը,
			կանոնադրական կապիտալի 10 և ավելի տոկոսը գերազանցող մասնակցություն ունեցող անձը,
			հիմնական կապիտալի 10 և ավելի տոկոսը գերազանցող մասնակցություն ունեցող անձը,
			ճիշտ տարբերակը նշված չէ:
	49	Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով նշանակալից է համարվում վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում մասնակիցն ունի կանոնադրական կապիտալի	տաս և ավելի տոկոսը կազմող մասնակցություն,
			տասնմեկ տոկոսը գերազանցող մասնակցություն,
			մինչև տաս տոկոսը, սակայն Կենտրոնական բանկի կարծիքով այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հնարավորություն ունի կանխորոշել վարկային կազմակերպության կառավարման մարմինների որոշումները,
			մինչև քսան տոկոսը կազմող մասնակցություն:
	50	Նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար ՀՀ ԿԲ կողմից սահմանած կարգով փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից, Կենտրոնական բանկը քննում է դրանք	մեկամսյա ժամկետում, որը կարող է ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցվել, բայց ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով,
			եռամսյա ժամկետը չգերազանցող ժամկետում,
			մեկշաբաթյա ժամկետում,
			տասնօրյա ժամկետում:
	51	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը մերժելու դեպում Կենտրոնական	դիմումը ետ է վերադարձնում դիմողին

			եռօրյա ժամկետում հիմնավորում է իր որոշումը,
			մերժման հիմքերի մասին հնգօրյա ժամկետում տեղեկացնում է դիմողին, ընդ որում, այդ ժամկետը կարող է ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցվել, բայց ոչ ավելի, քան 5 օր ժամկետով:
			մերժման մասին որոշում կայացնելու պահից տասնօրյա ժամկետում ծանուցում է դիմողին:
	52	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը, եթե՝	անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն,
			անձը ճանաչվել է սնանկ և ունի չմարված պարտավորություններ,
			անձը քրեական գործով ներգրավված է որպես մեղադրյալ կամ վկա,
			անձը վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրվելիք միջոցները Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով ձեռք է բերել ոչ օրինական ճանապարհով:
	53	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը, եթե՝	անձը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ
			անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն,
			անձն այլ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունի,
			տվյալ գործարքն ուղղված է, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը:
	54	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ներքոհիշյալ անձանցից որը չի համարվում վարկային կազմակերպության հետ կապված անձ.	վարկային կազմակերպության գործադիր տնօրենը,
			վարկային կազմակերպության ղեկավարի հետ փոխկապակցված իրավաբանական անձը,
			վարկային կազմակերպության բաժնետեր հանդիսացող ֆիզիկական անձը, որի մասնակցությունը վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում կազմում է 5 տոկոս և չունի օրենքով սահմանված այլ ձևով վարկային կազմակերպության որոշումները կանխորոշելու իրավունք,

			վարկային կազմակերպության հետ փոխկապակցված ֆիզիկական անձը:
	55	Վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքների իմաստով իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե	սպասարկվում են կամ ունեն հաշիվներ միևնույն առևտրային բանկում,
			նրանցից մեկը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին,
			նրանցից մեկի գործադիր տնօրենը հանդիսանում է մյուսի՝ նման պարտականություններ կատարող անձ,
			բոլոր պատասխանները էլ ճիշտ են:
	56	Նշել սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքների իմաստով ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե	միևնույն ընտանիքի անդամ են,
			աշխատում են վարկային կազմակերպության միևնույն ստորաբաժանումում,
			գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,
			վարում են ընդհանուր տնտեսություն:
	57	Նշեք սխալ տարբերակը. Վարկային կազմակերպության հետ կապված են համարվում վարկային կազմակերպության	կապիտալում մասնակցություն ունեցող անձինք,
			կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ համագործակցող անձինք,
			կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված անձինք,
			ղեկավարների հետ փոխկապակցված անձինք:
	58	Նշեք սխալ պնդումը.	ԿԲ-ն կարող է սահմանել տուգանք վարկային կազմակերպության ղեկավարների նկատմամբ՝ ԿԲ-ի վերստուգումներին խոչընդոտելու համար,
			ԿԲ-ն կարող է սահմանել տուգանք վարկային կազմակերպության ղեկավարների նկատմամբ հաշվետվությունները ուշ ներկայացնելու համար,
			ԿԲ-ն կարող է սահմանել տուգանք վարկային կազմակերպության ղեկավարների նկատմամբ հաշվետվություններում անարժանահավատ տեղեկություններ արտացոլելու համար,
			վարկային կազմակերպության ղեկավարների վրա դրված տուգանքները գանձվում են նրանց անձնական միջոցներից հօգուտ ՀՀ ԿԲ-ի
	59	Վարկային կազմակերպության ղեկավարները զրկվում են որակավորման վկայականից.	Կենտրոնական բանկի որոշմամբ,
			վարկային կազմակերպության հիմնադիրների որոշմամբ,
			Կենտրոնական բանկի որոշմամբ՝ վարկային կազմակերպության խոշոր պարտատերերի պահանջով,

			նշված պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:
	60	Նշեք սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության ղեկավարները զրկվում են որակավորման վկայականից, եթե նրանք	ոչ միտումնավոր կերպով խախտել են օրենքները և այլ իրավական ակտերը,
			չեն համապատասխանում ԿԲ-ի կողմից սահմանված որակավորման չափանիշներին,
			անազնիվ վերաբերմունք են դրսևորել իրենց ծառայողական պարտականությունների նկատմամբ,
			անտեսել են ԿԲ-ի նախազգուշացումը:
	61	ՀՀ ԿԲ-ի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ՝	կեղծ կամ անարժանահավատ տեղեկությունների ներկայացումը,
			ներկայացված փաստաթղթերի թերի, ոչ ամբողջական լինելը կամ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին հակասելը,
			դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպության կողմից հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկի խախտելը,
			տվյալ տարածքում այլ վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի առկայությունը:
	62	Նշեք սխալ պատասխանը. ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները գրանցման և լիցենզավորման համար ՀՀ ԿԲ են ներկայացնում՝	վարկային կազմակերպության գրանցման և լիցենզավորման դիմումը
			վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ վեց օրինակից
			վարկային կազմակերպության ղեկավարների գործունեության մասին տեղեկանք՝ կազմված ԿԲ-ի սահմանված ձևով.
			մասնաճյուղի գործունեության հաստատված կանոնակարգը՝ ԿԲ-ի սահմանած ձևով
	63	Նշեք սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած կարող է ճանաչվել, եթե	վարկային կազմակերպությունն իրականացնում է անհիմն ու վտանգավոր գործունեություն,
			վարկային կազմակերպությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի կատարել ՀՀ Կենտրոնա-կան բանկի՝ խախտումները վերացնելու մասին հանձնարարականը,
			դադարել է վարկային կազմակերպության գործունեությունը,
			վարկային կազմակերպության լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում վարկային կազմակերպությունը գործունեություն չի իրականացրել,

	64	Նշեք սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած կարող է ճանաչվել, եթե	դրա գրանցման և լիցենզավորման ընթացքում ներկայացվել են կեղծ տեղեկություններ,
			վարկային կազմակերպությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի կատարել ՀՀ Կենտրոնա-կան բանկի՝ խախտումները վերացնելու մասին հանձնարարականը,
			դադարել է վարկային կազմակերպության գործունեությունը,
			վարկային կազմակերպությունը գործունեություն է ծավալում բարձր ռիսկային ոլորտներում:
	65	Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում՝	Կենտրոնական բանկի լիցենզավորման հանձնաժողովի որոշմամբ,
			Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ,
			Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	66	Նշեք ամբողջական տարբերակը. Նշվածներից (որը) որոնք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ. (ա) վարկային կազմակերպությունները, (բ) վարկային կազմակերպության մասնաճյուղերը, (գ) վարկային կազմակերպության ներկայացչությունները:	միայն (ա) և (բ),
			միայն (բ) և (գ),
			միայն (ա) և (գ),
			(ա) և (բ) և (գ):
	67	Վարկային կազմակերպության ներկայացուցչությունը	ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ կարող է իրականացնել որոշ ֆինանսական գործառնություններ,
			ներկայացնում է վարկային կազմակերպությունը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, վարկային կազմակերպության անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ,
			վարկային կազմակերպության կողմից տրված լիազորությունների շրջանակներում կարող է իրականացնել ֆինանսական գործառնություններ,
			ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ կարող է իրականացնել բոլոր ֆինանսական գործառնությունները:
	68	Նշել ճիշտ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, պահանջվում է ԿԲ նախնական համաձայնությունը.	վարկային կազմակերպության կողմից իր բաժնետոմսերը գրավ ընդունելով՝ վարկեր տրամադրելիս,
			փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը նվազեցնելիս,
			վարկային կազմակերպության ՀՀ տարածքում մասնաճյուղ կամ ներկայացչություն բացելիս
			բոլոր պատասխանները սխալ են:

	69	Վարկային կազմակերպության հիմնական կապիտալը վարկային կազմակերպության	կանոնադրական հիմնադրամի և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է,
			ընդհանուր և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է,
			ընդհանուր և լրացուցիչ կապիտալների տարբերությունն է,
			պարտավորությունների և ակտիվների տարբերությունն է:
	70	Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը վարկային կազմակերպության	ընդհանուր և հիմնական կապիտալների հանրագումարն է,
			հիմնական կապիտալի և կանոնադրական հիմնադրամի տարբերությունն է,
			ընդհանուր և հիմնական կապիտալների տարբերությունն է
			ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է:
	71	Վարկային կազմակերպության կապիտալի համարժեքության նորմատիվը	ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է,
			կանոնադրական հիմնադրամի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է,
			լրացուցիչ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է,
			հիմնական կապիտալի և բարձր իրացվելի ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է:
	72	Նշված օրենսդրության խախտումներից որի դեպքում վարկային կազմակերպության նկատմամբ նշանակված տուգանքի չափը մաքսիմալ է՝	կապիտալի համարժեքության նորմատիվի խախտման դեպքում,
			ԿԲ ներկայացվող հաշվետվություններում անարժանահավատ տեղեկատվություն արտացոլելու դեպքում,
			ԿԲ հանձնարարականները չկատարելու դեպքում,
			չհիմնավորված ռիսկային գործունեություն վարելու դեպքում:
	73	Տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար, ԿԲ ներկայացվող հաշվետվությունները ուշացնելու համար վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել՝	ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը,
			նվազագույն աշխատավարձի 100 պատիկը,
			նվազագույն աշխատավարձի 1000 պատիկը,
			նվազագույն աշխատավարձի 2000 պատիկը,
	74	Նշված ո՞ր դեպքերում վարկային կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ կարող է նշանակվել տուգանք.	արտարժույթի տնօրինման նորմատիվի խախտման դեպքում,
			ԿԲ հանձնարարականները չկատարելու դեպքում,
			վարկային կազմակերպության կողմից լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում վարկային գործունեություն չիրականացնելու դեպքում,

			նշված բոլոր դեպքերում էլ վարկային կազմակերպությունների ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների) նկատմամբ կարող է նշանակվել տուգանք:
	75	Նշված անձանցից որի՞ն ԿԲ-ն չի կարող տուգանել	վարկային կազմակերպության գործադիր տնօրենին,
			վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահին,
			վարկային կազմակերպության մարքեթինգային դեպարտամենտի ղեկավարին
			նշվածներից յուրաքանչյուրին ԿԲ-ն իրավասու է
	76	Վարկային կազմակերպությունը կարող է ճանաչվեն անվճարունակ, եթե վարկային կազմակերպությունը	ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է կապիտալի համարժեքության նորմատիվները,
			նախորդ երեք տարվա ընթացքում շահաբաժիններ չի բաշխել,
			ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	77	Վարկային կազմակերպությունը կարող է ճանաչվել անվճարունակ, եթե. ա) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները, բ) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին, գ) ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը,	միայն գ) տարբերակը
			միայն ա) և բ) տարբերակները
			միայն ա) և գ) տարբերակները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	78	Նշել ճիշտ պատասխանը. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում ԿԲ-ն երկշաբաթյա ժամկետում կարող է. (ա) վարկային կազմակերպությունում նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար, (բ) վարկային կազմակերպության սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան, (գ) վարկային կազմակերպության լիցենզիան ճանաչել անվավեր, (դ) վարկային կազմակերպության լիզենզիան ուժը կորցրած ճանաչել,	միայն (ա) կամ (գ)
			միայն (ա) կամ (բ)
			միայն (բ) և (գ)
			միայն (ա) և (դ)

	79	Նշել ճիշտ տարբերակը. Վարկային կազմակերպության սնանկության մասին դիմումով ԿԲ-ը դատարան է դիմում, եթե (ա) առկա են վարկային կազմակերպությունն անվճարունակ ճանաչելու հիմքերից որևէ մեկը, (բ) վարկային կազմակերպությունը՝ ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության ընթացքում, ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները, (գ) ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ԿԲ-ին ակնհայտ է դառնում, որ վարկային կազմակերպությունը լուծարվելու դեպքում հնարավոր է պահպանել վարկային կազմակերպության միջոցների ավելի մեծ քանակ, քան ադմինիստարացիայի գործունեությունը շարունակելիս,	միայն (ա) և (բ), միայն (բ) և (գ), միայն (գ), միայն (ա) և/կամ (գ):
	80	Վարկային կազմակերպությունում ժամանակավոր ադմինիստրացիա նշանակում է	ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ ԿԲ ներկայացմամբ՝ դատարանը, ՀՀ արդարադատության նախարարությունը, վարկային կազմակերպության ներկայացմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկը:
	81	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	ադմինիստրացիան բանկի կառավարման հատուկ մարմին է, որի ղեկավարին և անդամներին նշանակում է Կենտրոնական բանկը ադմինիստրացիայի գործունեության ընթացքում բանկի կառավարման որոշ մարմինների լիազորություններ անցնում են ադմինիստրացիայի ղեկավարին ադմինիստրացիան բանկի կառավարման հատուկ մարմին է, որի ղեկավարին նշանակում է Կենտրոնական բանկը, իսկ անդամներին՝ տվյալ բանկի կառավարման մարմինները ճիշտ պատասխանը նշված չէ
	82	Բանկի կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակում է համարվում նման տեղեկատվության տրամադրումը	բանկերին, ՀՀ բանկերի միությանը, բանկին աուդիտորական ծառայություն մատուցող աուդիտորական ընկերությանը, վարկային կազմակերպությանը:
	83	Բանկերը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են հաճախորդի ժառանգներին, եթե վերջիններս՝	ներկայացրել են ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությունը, ներկայացրել են ժառանգության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր,

			ներկայացրել են ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան որոշումը տեղեկությունները տրամադրելու վերաբերյալ,
			բոլոր պատասխանները ճիշտ են:
	84	Բանկերը կարող են իրենց հաճախորդների մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները միմյանց տրամադրել՝	ինքնուրույնաբար, առանց որևէ համաձայնության,
			ինքնուրույնաբար իսկ վարկային կազմակերպություններին՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ,
			միայն հաճախորդի գրավոր համաձայնությամբ,
			միայն դատարանի որոշմամբ:
	85	Ստորև նշվածներից ո՞ր պնդումն է սխալ.	վարկը կարող է տրամադրել միայն բանկը կամ վարկային կազմակերպությունը, իսկ փոխառություն՝ ցանկացած
			փոխառությունը կարող է տրամադրվել թե տոկոսով, թե առանց տոկոս, վարկը կարող է տրամադրվել միայն տոկոսով,
			վարկային պայմանագիրը կնքվում է միայն գրավոր, իսկ փոխառության պայմանագիրը՝ թե՛ գրավոր և թե՛ բանավոր ձևով,
			փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:
	86	Վարկեր կարող են տալ	միայն բանկերը,
			միայն վարկային կազմակերպությունները,
			միայն բանկերը և վարկային կազմակերպությունները,
			ցանկացած անձ կամ կազմակերպություն:
	87	Նշել ամբողջական պատասխանը. Գույքի սեփականության իրավունքը ենթադրում է գույքը (ա) տիրապետելու իրավունք, (բ) օգտագործելու իրավունք, (գ) տնօրինելու իրավունք:	միայն (ա)
			միայն (գ),
			միայն (ա) և (գ)
			(ա) և (բ) և (գ):
	88	Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի, հաշվետվություն տրամադրող անձը գործարքը կամ գործարար հարաբերությունը պետք է որակի որպես կասկածելի, եթե	բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով
			բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը օգտագործվել է ահաբեկչության նպատակով

			բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքի հետ կապված առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	89	Ֆինանսական հաստատությունն ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում	իրավունք ունի մինչև 5 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին անմիջապես լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին հաշվետվություն
			իրավունք ունի ցանկացած ժամկետով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին անմիջապես լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն
			պարտավոր է 10 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը
			պարտավոր է 10 օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն
	90	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝	գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի անմիջապես՝ այն ֆինանսական հաստատության կողմից ստանալու պահից
			գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի 5 օրվա ընթացքում՝ այն ֆինանսական հաստատության կողմից ստանալու պահից
			գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավասություն վերապահված է միայն ֆինանսական հաստատությանը
			գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավասություն վերապահված է միայն լիազոր մարմնին
	91	"Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական միջոցների դադարեցում է համարվում	կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը
			կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի կատարման համար նախատեսված գործողությունների չիրականացումը

			ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող և (կամ) նրանց կողմից վերահսկվող ֆինանսական միջոցների փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	92	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից ո՞րն է համարվում ոչ ռեզիդենտ	ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնք հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Հայաստանի Հանրա-պետությունում 183 օր և ավելի,
			ՀՀ-ում պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող մասնաճյուղերը,
			միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացչությունները,
			ճիշտ պատասխան նշված չէ:
	93	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից ո՞րն է համարվում ոչ ռեզիդենտ	օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունները,
			օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող աշխատակիցները,
			ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները,
			բոլոր պատասխանները ճիշտ են:
	94	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից ո՞րն է համարվում ռեզիդենտ	օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները,
			օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունների ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղերը,
			ՀՀ պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող մասնաճյուղերը,
			ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները:
	95	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային գործարքներ չեն համարվում՝	կարճաժամկետ վարկերի տրամադրումը,
			փոխառությունների դիմաց տոկոսների վճարումը,
			օտարերկրյա ուղղակի ներդրումները,
			բոլոր պատասխանները ճիշտ են:
	96	Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ: Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային գործառնությունների գծով վճարումները՝	ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ծառայությունների ներմուծման կամ արտահանման հետ կապված վճարումներն են,

			ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կարճաժամկետ վարկերի տրամադրումն է,
			ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև փոխառությունների դիմաց վճարվող տոկոսներն են,
			ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև կապիտալի փոխանցումներն են:
	97	Նշել ճիշտ պատասխանը. Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային հաշվի գործարքների գծով վճարումներ են համարվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև (ա) օտարերկրյա կարճաժամկետ պորտֆելային ներդրումները, (բ) երկարաժամկետ վարկերի տրամադրումը, (գ) փոխառությունների դիմաց վճարվող տոկոսները.	միայն (ա),
			միայն (բ),
			միայն (գ),
			(ա) և (գ):
	98	Ընթացիկ արժութային գործարքների գծով վճարումներ են համարվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև.	օտարերկրյա պորտֆելային ներդրումները,
			օտարերկրյա ուղղակի ներդրումները,
			երկարաժամկետ վարկերի տրամադրումը,
			ոչ առևտրային բնույթի փոխանցումները:
	99	Վարկային կազմակերպությունը կարող է ստեղծվել որպես.	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, առևտրային կամ ոչ առևտրային կոոպերատիվ
			միայն առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվ
			բաժնետիրական ընկերություն, առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	100	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միությունները կարող են ստեղծվել բացառապես որպես.	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ
			բաժնետիրական ընկերություն
			բաժնետիրական ընկերություն և կոոպերատիվ
			կոոպերատիվ
	101	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների տիպեր չեն համարվում.	ֆակտորինգային միություններ
			խնայողական միություններ
			վարկային միություններ
			լիզինգային կազմակերպությունները
	102	Նշել սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները ԿԲ են ներկայացնում.	գրանցման և լիցենզավորման դիմում
			վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 3 օրինակից
			վարկային կազմակերպության ղեկավարների գործունեության մասին տեղեկանք

			պետական տուրքի վճարման անդորրագիրը
	103	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը համալրվում է.	ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով
			ՀՀ դրամով և արտարժութային առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով
			ցանկացած արժույթով
			ճիշտ պատասխանը նշված չէ
	104	Վարկային կազմակերպության լիցենզիան.	կարող է գրավադրվել միայն ԿԲ-ում
			կարող է գրավադրվել այլ վարկային կազմակերպություններում՝ ԿԲ-ի նախնական համաձայնությամբ
			չի կարող գրավադրվել
			բոլոր պատասխանները սխալ են
	105	Օտարերկրյա պետություններում հայկական վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցիչները ստեղծվում	ՀՀ օրենսդրությանը համապատասխան
			ՄԱԿ-ի դիրեկտիվներին համապատասխան
			տվյալ պետության օրենսդրությանը և (կամ) ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան
			ՀՀ արդարադատության նախարարության նորմատիվ ակտերին համապատասխան
	106	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը բավարարում կամ մերժում է.	ԿԲ նախագահը
			ԿԲ խորհուրդը
			ԿԲ լիցենզավորման հանձնաժողովի նախագահը
			ԿԲ գլխավոր վերստուգիչը
	107	Վարկային կազմակերպությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր ներկայացուցչության գործունեությունը՝	դադարեցման նախորդ օրը ԿԲ-ին տեղեկացնելով դադարեցման և դրա ժամկետի մասին
			դադարեցումից մեկ շաբաթ առաջ ԿԲ-ին տեղեկացնելով դադարեցման և դրա ժամկետի մասին
			դադարեցումից 15 օր առաջ ԿԲ-ին տեղեկացնելով դադարեցման և դրա ժամկետի մասին
			ճիշտ պատասխանը նշված չէ
	108	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել.	բացառապես ձեռնարկատիրական վարկեր
			բացառապես սպառողական վարկեր
			բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ ԿԲ սահմանած կարգով և պայմաններով
			ձեռնարկատիրական և սպառողական վարկեր և փոխառություններ

	109	"Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական միջոցների դադարեցում է համարվում	կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը
			կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի կատարման համար նախատեսված գործողությունների չիրականացումը
			գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատումը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	110	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ են.	վարկային կազմակերպության խորհրդի նախագահը, նրա տեղակալը, վարկային կազմակերպության մասնաճյուղի կառավարիչը
			վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, վարկային կազմակերպության մասնաճյուղի գլխավոր հաշվապահը
			վարկային կազմակերպության վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները
			բոլոր պատասխանները ճիշտ են
	111	Վարկային կազմակերպության ղեկավարների որակավորման կարգը սահմանում է.	ՀՀ ֆինանսների նախարարությունը
			ՀՀ ԿԲ-ը՝ ՀՀ վարկային կազմակերպությունների ազգային կոմիտեի հետ համատեղ
			ՀՀ կենտրոնական բանկը,
			Հայաստանի բանկերի միությունը
	112	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պարտավոր են ԿԲ-ի գրանցմանը ներկայացնել հետևյալ փոփոխությունները. (ա) վարկային կազմակերպության կանոնադրությունում կատարված փոփոխությունները (բ) վարկային կազմակերպության ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները (գ) վարկային կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների զեկավարների կազմում կատարված փոփոխությունները	միայն (ա) և (բ),
			միայն (ա) և (գ)
			միայն (բ) և (գ)
			(ա), (բ) և (գ)
	113	Վարկային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնում է.	Կենտրոնական բանկը՝ Վարկային կազմակերպությունների ազգային կոմիտեի հետ
			Կենտրոնական բանկը
			Կենտրոնական բանկը՝ ֆինանսների նախարարության հետ համատեղ

			Կենտրոնական բանկը՝ արդարադատության նախարարության հետ համատեղ
	114	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունն ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից
			անկախ աուդիտային կազմակերպությանը նշանակում է վարկային կազմակերպությունը
			վարկային կազմակերպությունները պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը
			նշված բոլոր պանդումներն էլ ճիշտ են
	115	Նշել ճիշտ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի,	վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել ձեռնարկատիրական և սպառողական վարկեր կամ փոխառություններ
			վարկային կազմակերպությունը լիցենզիայի հիման վրա կարող է գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ
			վարկային կազմակերպություններին (բացառությամբ սպառողական կրեդիտավորում իրականացնող կազմակերպությունների) արգելվում է իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	116	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները պարտավոր են առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով հրապարակել հետևյալ տեղեկությունները.	վարկային կազմակերպության ղեկավարների ցուցակը և դրանում կատարվող յուրաքանչյուր փոփոխություն
			իրենց կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքներ
			իրենց կողմից տրամադրվող վարկերի ժամկետայնություն
			ծառայությունների միջնորդավճարներ
	117	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը կենտրոնական բանկ է ներկայացնում	յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 15-ը
			յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա մինչև 15-ը
			ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ճամկետում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	118	Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող պատժամիջոցներից չէ.	տուգանք

			նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական
			վարկային կազմակերպության գույքի բռնագրավում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	119	Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին ԿԲ խորհրդի որոշումը ուժի մեջ է մտնում.	որոշման ընդունման պահից
			որոշման ընդունման պահից 15 օր հետո
			զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից
			ՀՀ պետական ռեգիստրից վարկային կազմակերպությանը գրանցումից հանելու պահից
	120	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակն է.	ՀՀ ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը
			ՀՀ դրամի փոխարժեքի կայունության ապահովումը
			գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը
			բոլոր պնդումները սխալ են
	121	Նշվածներից ո՞րը չի հանդիսանում ՀՀ Կենտրոնական բանկի նպատակ.	ՀՀ ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը
			ՀՀ դրամի փոխարժեքի կայունության ապահովումը
			գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը
			բոլոր նշվածները հանդիսանում են ԿԲ նպատակներ
	122	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, եթե Կենտրոնական բանկի մյուս նպատակները հակասում են իր հիմնական նպատակներին, ԿԲ-ն առաջնությունը տալիս է	ՀՀ-ում բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը
			ՀՀ-ում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովմանը
			ՀՀ դրամի փոխարժեքի կայունացմանը
			ՀՀ-ում վճարահաշվարկային համակարգի զարգացմանը
	123	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի նպատակ չի հանդիսանում	գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը
			շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձեւավորումը ու պահպանումը
			դրամաշրջանառության կազմակերպումը եւ
			հարկաբյուջետային քաղաքականության մշակումը
	124	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կենտրոնական բանկի հիմնական նպատակն է.	արտարժույթի առք ու վաճառքի միջին փոխարժեքի ձևավորումը

			ՀՀ-ում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը
			բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողությունը
			Հայաստանի Հանրապետության ներկայացումը միջազգային ֆինանսական կազմակերպություններում
	125	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի նպատակ է (են) հանդիսանում.	ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը
			փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը
			գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծումն ու զարգացումը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	126	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի նպատակ է (են) հանդիսանում.	ՀՀ արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումն ու կարգավորումը
			ֆինանսական համակարգում ազատ և բարեխիղճ տնտեսական մրցակցության ապահովումը
			փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	127	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության անվճարունակությունը ճանաչվում է.	վարկային կազմակերպության խորհրդի որոշմամբ,
			կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ
			կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ
			կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի որոշմամբ
	128	Նշել ամբողջական պատասխանը. Վարկային կազմակերպությունում անվճարունակության հիմքերից մեկի բացահայտման դեպքում կենտրոնական բանկը կարող է. (ա) նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար (բ) ուժը կորցրած ճանաչել վարկային կազմակերպության լիցենզիան (գ) դատարանից պահանջել ուժը կորցրած ճանաչել վարկային կազմակերպության լիցենզիան	միայն (ա)
			միայն (ա) կամ (գ)
			միայն (ա) կամ (բ)
			(ա) կամ (բ) կամ (գ)
	129	Նշել ամբողջական պատասխանը. Վարկային կազմակերպությունը համարվում է անվճարունակ, եթե. (ա) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին (բ) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները (գ) պարբերաբար խախտում է օրենքով սահմանված նորմատիվները	միայն (ա) և (բ),
			միայն (ա) և (գ)

			(ա) և (բ) և (գ)
			ճիշտ պատասխանը նշված չէ
	130	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության սնանկությունը.	դատարանի վճռի հիման վրա կենտրոնական բանկի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է
			կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է
			կենտրոնական բանկի նախագահի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է
			կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է
	131	Ֆինանսական առողջացման ծրագիրը, դրանում կատարվող փոփոխությունները և լրացումները հաստատում է.	վարկային կազմակերպության խորհուրդը
			ադմինիստրացիայի ղեկավարը
			կենտրոնական բանկը
			վարկային կազմակերպությունների ազգային կոմիտեն
	132	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի.	ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանում է վարկային կազմակերպության խորհուրդը
			ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանվում է վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրով
			ադմինիստրացիայի գործունեության համար ժամկետ չի սահմանվում
			ադմինիստրացիայի գորրծունեության ժամկետը որոշվում է ադմինիստրացիայի ղեկավարի կողմից
	133	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկի համաձայնությամբ ադմինիստրացիայի ղեկավարը կարող է վարկային կազմակերպության առանձին ոլորտների կառավարման լիազորությունները վերապահել.	վարկային կազմակերպության աշխատակիցներին
			կենտրոնական բանկի աշխատակիցներին
			ադմինիստրացիայի անդամներին
			բոլոր պատասխանները ճիշտ են
	134	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի ղեկավարը.	իրականացնում է վարկային կազմակերպության կառավարման մարմինների լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն
			միջոցներ է ձեռնարկում վարկային կազմակերպության գույքի պահպանության ուղղությամբ
			պարզում է վարկային կազմակերպության պարտատերերին, նրանց պահանջների չափը

			վարկային կազմակերպության կառավարման մարմիններից վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր
	135	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի ղեկավարը. (ա) կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական առողջացման ծրագիրը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ (բ) իրականացնում է վարկային կազմակերպության կառավարման մարմինների լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն (գ) վարկային կազմակերպության անունից հայցով դիմում է դատարան և արբիտրաժային տրիբունալ	միայն (ա)
			միայն (բ)
			միայն (ա) և (գ)
			(ա), (բ) և (գ)
	136	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագիրը պարտադիր կարգով պետք է պարունակի.	վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատականը
			վարկային կազմակերպության պահպանության ծախսերի կրճատմանն ուղղված միջոցառումները
			վարկային կազմակերպության կազմակերպական կառուցվածքի փոփոխության ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները
			բոլոր պատասխանները ճիշտ են
	137	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության առողջացման միջոցառումների ծրագիրը պարտադիր կարգով պետք է պարունակի. (ա) վարկային կազմակերպության աշխատակիցների վերապատրաստման ֆինանսական ծրագիրը (բ) լրացուցիչ եկամուտների ստացմանն ուղղված միջոցառումները (գ) վարկային կազմակերպության մասնակիցների մասնակցության եղանակները վարկային կազմակերպության ֆինանսական առողջացմանը	միայն (ա)
			միայն (բ)
			միայն (բ) և (գ)
			(ա), (բ) և (գ)

	138	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է.	Ժամանակավոր աղմինիստրացիայի ղեկավարը
			վարկային կազմակերպության խորհուրդը
			կենտրոնական բանկը
			բոլոր պատասխանները սխալ են
	139	Կենտրոնական բանկը անվճարունակ վարկային կազմակերպության համար կարող է սահմանել.	հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների այլ սահմանաչափեր
			հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների հաշվարկման այլ կարգ
			հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող տարրերի այլ կազմ
			բոլոր պատասխանները ճիշտ են
	140	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկը անվճարունակ վարկային կազմակերպության համար կարող է սահմանել. (ա) հիմնական և հատուկ նորմատիվների հաշվարկման այլ կարգ (բ) այլ հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվներ (գ) հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների այլ սահմանաչափեր	միայն (ա)
			միայն (գ),
			միայն (ա) և (գ)
			(ա), (բ) և (գ)
	141	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնակիցների և այլ անձանց ֆինանսական օգնությունը կամ լրացուցիչ ներդրումները կարող են իրականացվել հետևյալ ձևերով.	վարկային կազմակերպությունում ավանդի ներդրում
			վարկային կազմակերպությունում դեպոզիտի ներդրում
			վարկերի, փոխառությունների տրամադրում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	142	Վարկային կազմակերպության ակտիվների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել.	վարկային պորտֆելի որակի բարելավում
			չահույթ չբերող ակտիվների վաճառք
			այն ակտիվների վաճառք, որոնց օտարումը չի խոչընդոտում վարկային կազմակերպության կողմից իր գործառույթների պատշաճ իրականացմանը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	143	Վարկային կազմակերպության պարտավորությունների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել.	վարկային պորտֆելի որակի բարելավում
			ընդհանուր և (կամ) կանոնադրական կապիտալի չափի մեծացում

			վարկային կազմակերպության ծախսերի, այդ թվում՝ պարտքերի սպասարկման և նրա կառավարման գծով իրականացվող ծախսերի կրճատում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	144	Վարկային կազմակերպության ակտիվների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել.	ընդհանուր կապիտալի չափի մեծացում
			վարկային կազմակերպության ծախսերի, այդ թվում՝ պարտքերի սպասարկման և նրա կառավարման գծով իրականացվող ծախսերի կրճատում
			կանոնադրական կապիտալի չափի մեծացում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	145	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը կարող է իրականացվել հետևյալ միջոցներով	վարկային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի և կազմի փոփոխություն
			տարածքային ստորաբաժանումների լուծարում
			կառուցվածքային ստորաբաժանումների լուծարում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	146	Վարկային կազմակերպության նկատմամբ սնանկության վարույթ հարուցվում է.	վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից
			կենտրոնական բանկի կողմից՝ նրա խորհրդի որոշմամբ
			դատարանի կողմից
			վարկային կազմակերպության խոշոր պարտատերերի կողմից
	147	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի,	Վարկային կազմակերպության սնանկության մասին գործերը քննվում են բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով
			դատարանի կողմից վարկային կազմակերպության սնանկության մասին գործի քննության ժամանակ կիրառվում է միայն լուծարային վարույթ
			վարկային կազմակերպության սնանկության վարույթի ընթացքում հաշտության համաձայնություն չի կարող կնքվել
			վարկային կազմակերպության սնանկության գործով դատավարությունում գործին մասնակցող անձինք են պարտապան վարկային կազմակերպությունը, կենտրոնական բանկը և լուծարային կառավարիչը
	148	Վարկային կազմակերպության սնանկության գործով դատավարությունում գործին մասնակցող անձ (անձինք) չէ (չեն).	պարտապան վարկային կազմակերպությունը
			պարտապան վարկային կազմակերպության խոշոր պարտատերերը
			լուծարային կառավարիչը
			ՀՀ կենտրոնական բանկը

	149	Նշել սխալ պնդումը. Դատարանի կողմից Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից.	լուծարային կառավարչին են անցնում բանկի գործերի կառավարման լիազորությունները
			սառեցվում են բանկի բոլոր հաշիվները՝ բացառությամբ ոչ ռեզիդենտ բանկերում գտնվող հաշիվների
			դադարեցվում են բանկի բոլոր տեսակի պարտավորությունների դիմաց տոկոսների հաշվարկումը և գանձումը
			դատարաններում կարճվում են բոլոր այն գործերի վարույթները, որտեղ բանկը ճանաչվել է պատասխանող
	150	Լուծարային կառավարչի դիմումի հիման վրա պետական լիազորված մարմինը լուծարվող վարկային կազմակերպության ֆիրմային անվանման մեջ կատարվում է փոփոխություն՝ ներառելով հետևյալ բառերը.	լուծարված վարկային կազմակերպություն
			սնանկ վարկային կազմակերպություն
			լուծարվող վարկային կազմկերպություն
			բոլոր պատասխանները սխալ են
	151	Լուծարային կառավարչի կողմից հրապարակված՝ վարկային կազմակերպության պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը պետք է լինի.	մինչև երկու ամիս
			երկուսից մինչև վեց ամիս
			վեց ամսից մինչև մեկ տարի
			ճիշտ պատասխանը նշված չէ
	152	Լուծարային կառավարիչը, կենտրոնական բանկի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ է հրապարակում մամուլում.	ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ
			ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ
			ամիսը երկու և ավելի անգամ
			յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ
	153	Նշել սխալ պատասխանը. Կենտրոնական բանկը կարող է լուծարային կառավարչի նկատմամբ կիրառել հետևյալ պատասխանատվության միջոցները.	նախազգուշացում և թույլ տված խախտումը վերացնելու հանձնարարական
			որակավորման վկայականի ուժը կորցրած ճանաչում
			տուգանք
			ճիշտ պատասխանը նշված չէ
	154	Նշել սխալ պատասխանը. Լուծարային կառավարչի գործողությունները կարող են բողոքարկվել դատարանում.	վարկային կազմակերպության խորհրդի նախագահի կողմից
			վարկային կազմակերպության պարտատերերի կողմից
			վարկային կազմակերպության պարտապանների կողմից
			կենտրոնական բանկի կողմից
	155	Վարկային կազմակերպությունում նշանակված ադմինիստրացիայի գործունեության հետ կապված ծախսերն իրականացվում են.	ՀՀ կենտրոնական բանկի հաշվին
			ՀՀ պետական բյուջեի հաշվին
			վարկային կազմակերպության հաշվին

			լուծարային միջոցների հաշվին
	156	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի անդամների և ղեկավարի վարձատրության չափը և այլ ծախսերը սահմանում է.	ադմինիստրացիայի ղեկավարը
			կենտրոնական բանկը
			դատարանը՝ կենտրոնական բանկի ներկայացմամբ
			վարկային կազմակերպության խորհուրդը
	157	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, լուծարային կառավարչի վարձատրության չափը սահմանում է.	վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովը
			կենտրոնական բանկը
			դատարանը՝ կենտրոնական բանկի ներկայացմամբ
			վարկային կազմակերպության խորհուրդը
	158	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, բանկերի սնանկության վերաբերյալ գործերը քննում է.	ՀՀ կենտրոնական բանկը
			ճիշտ պատասխանը նշված չէ
			տնտեսական դատարանը
			վարկային կազմակերպությունների միությունը և կենտրոնական բանկը
	159	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիք են համարվում.	հաճախորդին սպասարկելու կապակցությամբ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները
			հաճախորդի հանձնարարությամբ կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները
			հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները
			բոլոր պատասխանները ճիշտ են
	160	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում.	բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով տարածելը
			բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելը
			երրորդ անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընձեռելը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	161	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում.	վարկային կազմակերպությանը իրավաբանական ծառայություն մատուցող անձին տվյալ վարկային կազմակերպության կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հայտնելը, պայմանով, որ դա անհրաժեշտ է տվյալ ծառայությունները մատուցելու համար

			վարկային կազմակերպության համար որոշակի աշխատանքներ կատարող անձանց տվյալ վարկային կազմակերպության կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հայտնելը, պայմանով, որ դա անհրաժեշտ է տվյալ աշխատանքները կատարելու համար
			վարկային կազմակերպության ղեկավարի կողմից թույլ տված օրենքի խախտումների և դրանց համար ՀՀ ԿԲ կողմից վարկային կազմակերպության ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների մասին որոշումների հրապարակումը ՀՀ ԿԲ կողմից
			բոլոր պատասխանները ճիշտ են
	162	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են.	վարկային կազմակերպության խորհրդի որոշման հիման վրա
			դատարանի որոշման հիման վրա
			կենտրոնական բանկի որոշման հիման վրա
			ճիշտ պատասխանը նշված չէ
	163	"Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքի համաձայն գործարար հարաբերության կամ գործարքի իրականացման մերժում է համարվում	կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը
			գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողությունների չիրականացումը
			ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	164	Ընտրել ճիշտ տարբերակը. Ֆինանսական հաստատությունը անկախ գործարքի դիմաց վճարումը կանխիկ կամ անկանխիկ լինելու հանգամանքից, Լիազորված մարմին տեղեկություն է տրամադրում, եթե. (ա) գործարքի արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը, իսկ անշարժ գույքի առք ու վաճառքի գործարքների դեպքում՝ 40 միլիոն դրամը (բ) անկախ գործարքի գումարի չափից, գործարքի կողմը գրանցված է օֆշորային տարածքում կամ երկրում (գ) հաճախորդն ունի պարտավորություններ բանկային համակարգի նկատմամբ (դ) հաճախորդը նախկինում ունեցել է դատվածություն	ճիշտ պատասխան նշված չէ
			միայն (ա) և (բ)
			միայն (ա), (բ) և (գ)
			միայն (ա), (բ), (գ) և (դ)

	165	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվում է՝	հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց կողմից, ըստ հաշվետվություն տրամադրող յուրաքանչյուր անձի համար սահմանված գործարքների տեսակների, անկախ դրանցում ներգրավված գումարի չափից
			հաշվետվություն տրամադրող անձանց կողմից՝ ըստ գործարքների որոշակի տեսակների և սահմանաչափերի
			հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց կողմից՝ ըստ գործարքների սահմանաչափերի
			ճիշտ պատասխանը նշված չէ
	166	Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցման մասին որոշումը կայացնում է՝	հաշվետվություն տրամադրող անձը
			հաշվետվություն տրամադրող անձը կամ լիազոր մարմինը
			հաշվետվություն տրամադրող անձը՝ նախապես ստանալով լիազոր մարմնի համաձայնությունը
			լիազոր մարմինը
	167	Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝ իրավասու մարմինների կողմից լիցենզավորվող և վերահսկվող՝ հաշվետվություն տրամադրող անձանց կողմից տեղեկության տրամադրման կարգը, ժամկետները և ձևերը	ՀՀ կենտրոնական բանկը՝ նորմատիվ իրավական ակտերով
			համապատասխան իրավասու մարմինը, ով լիցենզավորում և վերահսկում է հաշվետվությունը
			ՀՀ կառավարությունը
			ՀՀ կենտրոնական բանկը՝ համապատասխան իրավասու մարմնի հետ համատեղ
	168	Ֆինանսական հաստատությունները Լիազորված մարմնին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ հաշվետվություն են տրամադրվում, ըստ գործարքների որոշակի տեսակների և սահմանաչափերի.	անկանխիկ գործարքներ, որոնց գումարը գերազանցում է 5 միլիոն դրամը
			կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը գերազանցում է 5 միլիոն դրամը, անկանխիկ գործարքներ, որոնց գումարը գերազանցում է 20 միլիոն դրամը
			անկանխիկ գործարքներ, անկախ գումարի մեծությունից
			նշված բոլոր պնդումները ճիշտ են
	169	Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝ գործարքը կարող է համարվել կասկածելի	միայն այն դեպքում, երբ գործարքի պայմանները չեն համապատասխանում ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման գործարքների պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին
			միայն այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձի համար ակնհայտ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքն ակնհայտորեն տնտեսական կամ իրավաչափ նպատակ չի հետապնդում

			միայն այն դեպքում, երբ գործարքը գերազանցում է 20 միլիոն դրամը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	170	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական հաստատության կամ լիազոր մարմնի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչել միայն	հաշվետվություն տրամադրող անձի կողմից, եթե պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ
			լիազոր մարմնի կողմից՝ իր նախաձեռնությամբ
			լիազոր մարմնի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ ֆինանսական հաստատության միջնորդությամբ, եթե պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ
			բոլոր պատասխանները ճիշտ են
	171	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք պետք է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնեն, եթե	հաստատվում են գործարար հարաբերություններ կամ կատարվում է միանգամյա գործարք,
			կասկածներ են առաջանում փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ
			կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկատվության հավաստիության կամ ամբողջականության մասին
			բոլոր պատասխանները ճիշտ են
	172	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արժութային արժեքներ համարվող գույքի տեսակներն են. (ա) ԱՄՆ դոլարը (բ) եվրոն (գ) ռուսական ռուբլին	միայն (ա)
			միայն (բ)
			միայն (ա) և (բ)
			(ա), (բ) և (գ)
	173	Նշել սխալ տարբերակը. Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արժութային արժեքներ համարվող գույքի տեսակներն են.	ՀՀ դրամը
			ՀՀ դրամով արտահայտված վճարային արժեթղթերը
			բանկային ոսկին
			ճիշտ պատասխանը նշված չէ
	174	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ընթացիկ արժութային գործարքների ծավալը չի կարող գերազանցել.	400 000 ՀՀ դրամը
			500 000 ՀՀ դրամը
			500 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը

			բոլոր պատասխանները սխալ են
	175	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ում ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման դրամական գնանշումը իրականացվում է.	բացառապես ՀՀ դրամով
			ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով
			ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի
			ցանկացած արժույթով
	176	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում դրամական շահումները կարող են գովազդվել և տրվել.	բացառապես ՀՀ դրամով
			ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով
			ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի
			ցանկացած արժույթով
	177	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում սպառողական փոխառությունները տրամադրվում են.	ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի
			ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով
			բացառապես ՀՀ դրամով
			ցանկացած արժույթով
	178	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արտարժույթով կարող են իրականացվել.	ՀՀ-ում աշխատանքների կատարման դրամական գնանշումը
			ռեզիդենտների միջև նվիրատվության գործարքները
			ներդրումները ՀՀ տարածքում իրավաբանական անձանց բաժնեհավաք կապիտալում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	179	Նշել ամբողջական պատասխանը. Ներքոհիշյալ անձանցից որո՞նք են համարվում վարկային կազմակերպության հետ կապված անձ. (ա) վարկային կազմակերպության գործադիր տնօրենը (բ) վարկային կազմակերպության գործադիր տնօրենի հետ փոխկապակցված իրավաբանական անձը (գ) վարկային կազմակերպության հետ փոխկապակցված ֆիզիկական անձը	միայն (ա) և (գ)
			միայն (բ) և (գ)
			միայն (բ)
			(ա), (բ) և (գ)
	180	Վարկային կազմակերպությունները տարեկան աուդիտն իրականացնող կազմակերպությունը.	նշանակվում է վարկային կազմակերպության կողմից՝ ՀՀ ԿԲ սահմանած կարգով
			նշանակվում է վարկային կազմակերպության կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարության սահմանած կարգով
			նշանակվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից
			բոլոր պատասխանները սխալ են

	181	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավար չեն համարվում.	վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը
			վարկային կազմակերպության վարչության անդամները
			վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցները
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամները
	182	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված գործառնություններից որո՞նք չեն կարող իրականացնել վարկային կազմակերպությունները.	մատուցել ֆինանսական խորհրդատվություն
			ապահովագրական գործունեություն
			մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ
			ներգրավել փոխառություններ և/կամ կնքել նմանատիպ գործարքներ
	183	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի.	վարկային կազմակերպության համար սահմանվում է նորմատիվային ավելի մեղմ ռեժիմ, քան բանկերի նկատմամբ
			վարկային կազմակերպության համար սահմանվում է նորմատիվների նույն ռեժիմը, ինչպիսին բանկերինն է
			ԿԲ-ի խորհրդի որոշմամբ կարող է բանկերից ավելի խիստ նորմատիվային ռեժիմ սահմանվել
			ճիշտ պատասխանը նշված չէ
	184	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի,	ՀՀ կառավարությունը, Ազգային Ժողովի թույլտվությամբ, կարող է վարկային կազմակերպության նկատմամբ որոշակի սահմանափակումներ սահմանել
			ՀՀ կենտրոնական բանկը կարող է վարկային կազմակերպության նկատմամբ որոշակի սահմանափակումներ սահմանել
			ՀՀ ԿԲ-ը կարող է վարկային կազմակերպությունների կողմից միջոցների ներգրավման սահմանափակում նշանակել
			ճիշտ պատասխանը նշված չէ
	185	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը չի մերժում նշանակալից մասնակցության դիմումը, եթե.	անձն օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, տնտեսական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից
			անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն
			տվյալ գործարքն ուղղված է, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը
			ճիշտ պատասխանը նշված չէ

	186	Նշել սխալ տարբերակը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության տիպեր են համարվում.	վարկային միությունները,
			խնայողական միությունները
			ունիվերսալ վարկային կազմակերպությունները
			վճարահաշվարկային վարկային կազմակերպությունները
	187	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշանակալից մասնակցություն չի համարվում այն մասնակցությունը, որով.	վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 5 տոկոս
			վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 15 տոկոս
			վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 25 տոկոս
			վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 35 տոկոս
	188	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար ՀՀ ԿԲ ներկայացվող փաստաթղթերը կենտրոնական բանկը քննում է.	փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում
			փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից մեկամսյա ժամկետում
			փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից տասօրյա ժամկետում
			փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում
	189	Վարկային կազմակերպության լիցենզիան կարող է գրավադրվել.	միայն ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ
			վարկային կազմակերպության մասնակիցների ժողովի համաձայնությամբ և ՀՀ ԿԲ թույլտվությամբ
			ՀՀ ԿԲ թույլտվությամբ
			վարկային կազմակերպության լիցենզիան գրավադրման ենթակա չէ

	190	Նշել ամբողջական պատասխանը. Կենտրոնական բանկը գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը, եթե պահպանվել են հետևյալ պահանջները. (ա) ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը (բ) վարկային կազմակերպության վայրը ամբողջությամբ համապատասխանում է տեխնիկական հագեցվածության պահանջներին (գ) վարկային կազմակերպության ղեկավարները համապատասխանում են ԿԲ-ի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին (դ) վարկային կազմակերպության նշանակալից մասնակցություն ունեցող անձինք ստացել են ԿԲ համաձայնությունը (ե) առկա է ՀՀ Կառավարության թույլտվությունը	միայն (ա) և (բ)
			միայն (ա), (բ), (գ) և (դ)
			(ա), (բ), (գ), (դ) և (ե)
			միայն (ա), (գ), (դ) և (ե)
	191	Նշել սխալ տարբերակը. Կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման դիմումը, եթե.	ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ
			մասնաճյուղի ղեկավարները չեն համապատասխանում ԿԲ-ի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին
			ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին
			դիմումի տրման պահին, ինչպես նաև դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է ԿԲ սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը
	192	Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե.	տվյալ իրավաբանական անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին
			նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելիին տիրապետող ֆիզիկական անձն իրավունք ունի անուղղակի կերպով տիրապետել մյուս
			նրանցից մեկի կառավարման մարմնի անդամների թվի մեկ երրորդը տիրապետում է մյուս իրավաբանական անձի բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին
			բոլոր տարբերակներով էլ իրավաբանական անձինք համարվում են փախկապակցված

	193	Նշել ամբողջական պատասխանը. Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գրանցումից հանվում է հետևյալ դեպքերում. (ա) վարկային կազմակերպության դիմումի հիման վրա (բ) մասնաճյուղի ղեկավարների դիմումի հիման վրա (գ) վարկային կազմակերպության լուծարման դեպքում (դ) հաճախորդների բողոքների հիման վրա	միայն (ա)
			միայն (ա), (բ) և (գ)
			միայն (ա) և (գ)
			(ա), (բ), (գ) և (դ)
	194	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի.	վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է կենտրոնական բանկը
			վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է ՀՀ կառավարությունը
			վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է կենտրոնական բանկը՝ ՀՀ կառավարության լիազոր մարմնի հետ համատեղ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	195	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ձեռնարկատիրական վարկի կամ փոխառության տրամադրում է համարվում այն գործարքի կնքումը.	որով պարտապանը իրավաբանական կամ ֆիզիկական անձ է
			որով ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը գործարքով ստացված միջոցները օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար
			որով պարտապանը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է և գործարքով ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար
			որով պարտապանը իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է և գործարքով ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար
	196	Վարկային կազմակերպությունը սպառողական վարկեր կամ փոխառություններ կարող է տրամադրել.	բացառապես ԿԲ-ի սահմանած կարգով
			բացառապես ԿԲ-ի և ֆինանսների նախարարության հետ համատեղ սահմանած կարգով
			բացառապես ԿԲ-ի նախնական համաձայնությամբ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	197	Կենտրոնական բանկի կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը մեղմացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում	կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել

			կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից, եթե ԿԲ-ը ՀՀ կառավարության հետ համատեղ ավելի ուշ ժամկետ չեն սահմանել
			կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո
			ճիշտ պատասխանը նշված չէ
	198	Նշել սխալ տարբերակը. Օրենսդրության խախտման դեպքում կենտրոնական բանկը վարկային կազմակերպության նկատմամբ կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցներից մեկը.	վարկային կազմակերպության ղեկավարի որակավորման վկայականից զրկում
			լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
			տույժի կիրառում
			տուգանքի կիրառում
	199	Օրենսդրության խախտման դեպքում, Կենտրոնական բանկի որոշմամբ, որպես պատասխանատվության միջոց կարող է կիրառվել նաև տուգանք	վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի նկատմամբ
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարի նկատմամբ
			վարկային կազմակերպության նշանակալից մասնակցություն ունեցող անձի նկատմամբ
			վարկային կազմակերպության խորհրդի նախագահի նկատմամբ
	200	Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին ԿԲ խորհրդի որոշումը ուժի մեջ է մտնում.	զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից
			զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից մեկ ամսվա ընթացքում
			զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում
			արդարադատության նախարարությունում գրանցվելու պահից
	201	Նշել ճիշտ տարբերակը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի.	յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը պետք է ստուգվի անկախ աուդիտի կողմից, որին նշանակում է կենտրոնական բանկը
			յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը պետք է ստուգվի անկախ աուդիտի կողմից, որին նշանակում է վարկային
			յուրաքանչյուր եռամսյակ վարկային կազմակերպության գործունեությունը պետք է ստուգվի անկախ աուդիտի կողմից, որին նշանակում է վարկային
			ճիշտ պատասխանը նշված չէ
	202	Իր նպատակներն իրագործելու համար Կենտրոնական բանկն իրականացնում է.	կառավարության բանկային սպասարկումը
			հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն

			տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	203	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են. ա) ՀՀ-ում գների կայունության ապահովումը բ) ՀՀ արժույթի թողարկումը գ) ֆինանսական կայունության ապահովումը դ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը	միայն ա) տարբերակը
			միայն ա) և գ) տարբերակները
			միայն բ) և դ) տարբերակները
			միայն ա) և բ) տարբերակները
	204	Վերստուգվող անձանց մոտ ստուգումներն անցկացվում են.	ԿԲ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ
			ԿԲ խորհրդի կամ նախագահի որոշմամբ
			ԿԲ խորհրդի և ՀՀ Կառավարության լիազոր մարմնի համատեղ որոշմամբ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	205	Նշել սխալ պատասխանը. Կենտրոնական բանկի և խախտումներ թույլ տված վարկային կազմակերպության միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել.	որոշակի ժամանակաշրջանում վերակազմակերպման կամ զարգացման ծրագրի իրագործում
			շահաբաժինների վճարման կասեցում
			վարկային կազմակերպության սպասարկող անձնակազմի աշխատավարձի նվազեցում և պարգևավճարների դադարեցում
			գովազդի իրականացման սահմանափակում
	206	Նշել սխալ պնդումը. Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի.	կենտրոնական բանկի հանձնարարարկանով վարկային կազմակերպությունը պարտավոր է ապահովել ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը վարկային կազմակերպության մասնակիցներին
			կենտրոնական բանկը պատասխանատվություն է կրում վերստուգվող անձի կողմից վերստուգող խմբի անդամներին կամ կենտրոնական բանկի այլ պաշտոնատար անձանց ժամանակավորապես տրամադրված փաստաթղթերի ապահովության և
			ստուգման հաշվետվությունը կազմվում է 2 օրինակից, որոնք վերստուգող խմբի կողմից ստորագրվում և հանձնվում են վերստուգվող անձի ղեկավարությանը

			վերստուգվող անձը, նրա գործադիր մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը տասնհինգօրյա ընթացքում ծանոթանում է հաշվետվությանը և ստորագրում այն «Հաշվետվության հետ ծանոթացել եմ» մակագրությամբ
	207	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օենքի, վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամը կարող է համալրվել.	ՀՀ դրամով և արտարժույթով, ընդ որում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի արտարժույթով համալրված մասը վերագնահատման ենթակա չէ
			միայն ՀՀ դրամով և Կանոնակարգ 14-ով սահմանված առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով, ընդ որում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի արտարժույթով համալրված մասը վերագնահատման եբթակա չէ
			միայն ՀՀ դրամով
			ՀՀ դրամով և արտարժույթով, ընդ որում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի արտարժույթով համալրված մասը ենթակա է վերագնահատման միայն յուրաքանչյուր հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ին
	208	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	կարճաժամկետ վարկերի ժամկետայնությունը և փոքրածավալ գումարների չափը սահմանվում են ԿԲ-ի և կառավարության լիազորված մարմնի իրավական ակտերով
			կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող այն գործարքները, որոնք չեն համարվում ընթացիկ արժութային գործարքներ
			եթե ֆիզիկական անձը չի ներկայացնում իր ոչ ռեզիդենտության անհրաժեշտ հիմնավորումները կամ փաստաթղթերը, ապա նա համարվում է ռեզիդենտ ֆիզիկական անձ
			մասնագիտացված անձինք են բանկերը, օտարերկրյա բանկերի՝ ՀՀ-ում գործող մասնաճյուղերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև ԿԲ-ի կողմից լիցենզիա ստացած այլ տնտեսվարող սուբյեկտները
	209	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, հաշվետվություն տրամադրող անձը կարող է իրականացնել հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն, եթե	առկա են ցածր ռիսկի չափանիշներ
			հաճախորդը քաղաքական ազդեցություն ունեցող անձ է
			բոլոր պատասխանները սխալ են
			նման հնարավորություն հաշվետվություն տրամադրող անձի համար նախատեսված չէ

	210	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական հաստատությունը պետք է իրականացնի հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն	գործարքի կամ գործարար հարաբերության ընթացքում ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում
			երբ գործարքում կամ գործարար հարաբերության ընթացքում ներգրավված են ֆինանսական հաստատություններ
			գործարքի կամ գործարար հարաբերության ընթացքում բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում
			երբ գործարքում կամ գործարար հարաբերության ընթացքում ներգրավված են խոշոր գումարներ
	211	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք պետք է իրականացնեն հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն	բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում
			ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում
			գործարար հարաբերություն հաստատելիս կամ մեկանգամյա գործարք կնքելիս
			գործարար հարաբերության ամբողջ ընթացքում
	212	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով պետք է պահպանեն առնվազն հինգ տարի	ա) հաճախորդի նույնականացման տվյալները
			բ) ներպետական և միջազգային գործարքների (գործարար հարաբերությունների) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները, որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի (գործարար հարաբերության) ամբողջական պատկերը վերականգնելու համար
			և «ա», և «բ» կետերում նշված տեղեկությունները
			նման պարտավորություն սահմանված չէ
	213	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի.	բանկերը պարտավոր են տեխնիկական այնպիսի միջոցներ ձեռնարկել և կազմակերպչական այնպիսի կանոններ սահմանել, որոնք անհրաժեշտ են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պատշաճ
			բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը կամ տարածելը
			որոշակի հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների կարող են հրապարակել տվյալ հաճախորդի գրավոր կամ դատարանում տրված բանավոր թույլտվությամբ

			օրենքի պահանջների խախտումներն առաջացնում են տուգանք՝ 500.000 դրամից մինչև 20.000.000 դրամը և կարող են առաջացնել օրենքով սահմանված քրեական պատասխանատվություն
	214	Նշել սխալ պնդումը. Բանկերը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են.	հրապարակել, եթե առկա է ԿԲ թույլտվությունը
			տրամադրել հաճախորդի ժառանգներին, եթե վերջիններս բանկին ներկայացրել են ժառանգության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր
			տրամադրել Ֆինանսական համակարգի հաշտարարին, եթե վերջինս քննում է տվյալ բանկի դեմ ներկայացված պահանջը
			տրամադրել Կենտրոնական բանկին
	215	Նշել սխալ պատասխանը. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իմաստով, երրորդ անձ չեն համարվում.	կենտրոնական բանկը
			վարկային կազմակերպությունները
			իրավապահ մարմինները
			բանկերը
	216	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի գործունեության խնդիրն է.	վարկային կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների մի մասի կամ դրանք ամբողջությամբ վաճառելը
			վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալն ավելացնելու կամ օրենքով սահմանված կարգով փոխառությունների միջոցով ներդրումների ներգրավմամբ վարկային կազմակերպության ֆինանսական կայունության վերականգնումը
			վարկային կազմակերպության ակտիվները հնարավոր կարճ ժամկետում հավաքագրելու միջոցով վարկային կազմակերպության ֆինանսական կայունության վերականգնումը
			բաժնետերերի օրինական պահանջների բավարարումը
	217	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի ղեկավարի դիմումի հիման վրա դատարանը կարող է անվավեր ճանաչել.	ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող երեք տարվա ընթացքում բանկի մասնակիցներին (բաժնետերերին, փայատերերին) բաշխված շահութաբաժինները, նրանց կամ այլ անձանց օգտին անհատույց օտարված գույքը
			ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող վեց ամսվա ընթացքում բանկի մասնակիցներին (բաժնետերերին, փայատերերին) բաշխված շահութաբաժինները, նրանց կամ այլ անձանց օգտին անհատույց օտարված գույքը
			ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող մեկ տարվա ընթացքում ղեկավարներին վճարված աշխատավարձը

			ճիշտ պատասխանը նշված չէ
	218	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում ԿԲ-ն երկշաբաթյա ժամկետում կարող է. (ա) վարկային կազմակերպությունում նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար (բ) վարկային կազմակերպության սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան (գ) վարկային կազմկերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչել (դ) վարկային կազմակերպության լիցենզիան ճանաչել անվավեր	միայն (ա) և (գ)
			միայն (ա) և (բ)
			միայն (բ) և (գ)
			միայն (ա) և (դ)
	219	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության սնանկության մասին դիմումով կենտրոնական բանկը դատարան է դիմում, եթե. (ա) վարկային կազմակերպությունում առկա են վարկային կազմակերպության անվճարունակ ճանաչելու հիմքերից որևէ մեկը (բ) վարկային կազմակերպության ադմինիստրացիայի գործունեության ժամկետում ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները (գ) ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ԿԲ-ին ակնհայտ է դառնում, որ վարկային կազմակերպությունը լուծարելու դեպքում հնարավոր է պահպանել վարկային կազմակերպության միջոցների ավելի մեծ քանակ, քան ադմինիստրացիայի գործունեությունը շարունակելիս	միայն (ա) և (բ)
			միայն (բ) և (գ)
			միայն (գ),
			միայն (ա) և (գ)
	220	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի գրանցման դիմումը կենտրոնական բանկի նախագահը բավարարում կամ մերժում է.	տասնհինգօրյա ժամկետում
			մեկամսյա ժամկետում
			մեկամսյա ժամկետում, որը ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կարող է կասեցվել մինչև 3 ամիս ժամկետով
			կենտրոնական բանկը մասնաճյուղը չի գրանցում
	221	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային միությունները դրամական միջոցներ են ներգրավում.	իրենց հաճախորդներից,
			բացառապես իրենց մասնակիցներից,

			իրենց մասնակիցներից, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	222	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, լիզինգային կազմակերպություններ են համարվում այն վարկային կազմակերպությունները, որոնք	բացառապես իրականացնում են լիզինգ,
			մասնագիտացված են ֆինանսական գործարքների մեջ,
			հիմնականում իրականացնում են ֆինանսական վարձակալության գործարքների կնքում,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	223	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, չեկը՝	ներդրումային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը, չեկում նախատեսված ժամկետը լրանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում որոշակի գումարը վճարել չեկը ներկայացնողին,
			վճարային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարել դրանում նշված գումարը,
			ներդրումային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարելու չեկում նշված գումարը,
			ներդրումային արժեթուղթ է, որը հավաստում է չեկ տիրապետողի իրավունքը ստանալ շահաբաժիններ ընկերության շահույթից:
	224	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, որպես ֆինանսական գործակալ՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր կարող են կնքել՝	միայն բանկերը,
			միայն բանկերը և վարկային կազմակերպությունները,
			միայն բանկերը, վարկային կազմակերպությունները և նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն ունեցող այլ առևտրային կազմակերպությունները:
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	225	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից, ո՞րն է սխալ՝	դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիրը կնքվում է գրավոր,
			ֆինանսական գործակալի կողմից դրամական պահանջին հաջորդող զիջում չի թույլատրվում, եթե այլ բան նախատեսված չէ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով

			պարտապանը պարտավոր է ֆինանսական գործակալին վճարել՝ պայմանով, եթե նա հաճախորդից կամ ֆինանսական գործակալից գրավոր ծանուցում է ստացել դրամական պահանջը տվյալ ֆինանսական գործակալին զիջելու մասին, և այդ ծանուցման մեջ սահմանված է կատարման ենթակա դրամական պահանջը, ինչպես նաև նշված է այն գործակալը, ում պետք է վճարվի
			սխալ պատասխանը նշված չէ
	226	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ՝	յիզինգի պայմանագիրը կնքվում է գրավոր,
			լիզինգի պայմանագրի առարկա կարող է լինել ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ցանկացած սպառվող գույք,
			անշարժ գույքի լիզինգի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:
			անշարժ գույքի լիզինգի պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման
	227	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից, լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ	լիզինգով տրամադրված գույքը, լիզինգի ժամկետի ավարտից հետո անցնում է լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով
			լիզինգով տրամադրված գույքը մինչև լիզինգի ժամկետի ավարտը անցնում է լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով
			վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է լիզինգատուն
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	228	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, փոխառության պայմանագիրը կնքված է համարվում.	նոտարի կողմից վավերացվելու պահից
			կողմերի ստորագրելու պահից
			դրամ կամ այլ գույք հանձնելու պահից
			կենտրոնական բանկում հաստատվելու պահից
	229	Համաձային ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, պետական փոխառության պայմանագրով որպես փոխառու հանդես է (են) գալիս.	Հայաստանի Հանրապետությունը և իրավաբանական անձինք
			Հայաստանի Հանրապետությունը
			Հայաստանի Հանրապետությունը և միջազգային կազմակերպությունները
			Հայաստանի Հանրապետությունը և օտարերկրյա կառավարությունները
	230	Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	պետական փոխառությունները կամավոր են
			փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր կամ բանավոր

			փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից
			փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով
	231	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, վարկային պայմանագիրը կնքվում է.	բացառապես գրավոր
			բանավոր, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ
			գրավոր կամ բանավոր՝ ըստ կողմերի համաձայնության
			ճիշտ պատասխանը նշված չէ
	232	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր
			վարկային պայմանագիրը կնքվում է գրավոր
			դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիրը կնքվում է գրավոր
			բոլոր պատասխանները ճիշտ են
	233	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, բանավոր կարող է կնքվել.	վարկային պայմանագիրը
			գրավի պայմանագիրը
			փոխառության պայմանագիրը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	234	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է.	երկու և ավելի մասնակիցների գրավոր համաձայնությամբ
			մասնակիցների կեսից ավելիի գրավոր համաձայնությամբ
			բոլոր մասնակիցների համաձայնությամբ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	235	Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	գրավ դրված գույքը կարող է դառնալ այլ գրավի առարկա
			հաջորդող գրավը թույլատրվում է ըստ վարկային կազմակերպության խորհրդի որոշման
			հաջորդող գրավի դեպքում նոր գրավառուի պահանջները բավարարվում են գրավի առարկայի արժեքից նախորդ գրավառուի պահանջները բավարարելուց հետո
			գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու
	236	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, եթե գրավ դրված գույքը գտնվում է գրավատուի մոտ, ապա օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում գրավատուն պարտավոր է.	գրավ դրված գույքը լրիվ արժեքով ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից
			անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել գրավ դրված գույքը պահպանելու համար
			մյուս կողմին անհապաղ տեղեկացնել գրավ դրված գույքի կորստյան կամ վնասվածքի սպառնալիքի ծագման մասին
			բոլոր պատասխանները ճիշտ են

	237	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահովված պարտավորությունը, իսկ այդ պահանջը չբավարարելու դեպքում՝ բռնագանձում տարածելու գրավի առարկայի վրա, եթե.	գրավատուն խախտել է հաջորդող գրավի կանոնը
			գրավատուն խախտել է գրավի առարկան փոխարինելու կանոնները
			գրավատուն խախտել է գրավ դրված գույքի օգտագործման և տնօրինման կանոնները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	238	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավի առարկայի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն դատարանի վճռով, եթե. (ա) առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն (բ) գրավի առարկան հանրության համար նշանակալից պատմական արժեք ունեցող գույք է	միայն (ա)
			միայն (բ)
			(ա) և (բ)
			ճիշտ պատասխանը նշված չէ
	239	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավի տեսակ չի համարվում.	կոշտ գրավը
			գրավականը
			իրավունքների գրավի
			խիստ գրավը
	240	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավական է համարվում այն գրավը, որի առարկան.	թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ
			թողնվում է գրավատուի մոտ՝ գրավի մասին վկայող նշաններով
			անցնում է գրավառուի տիրապետմանը
			պահվում է բանկում կամ նոտարի մոտ
	241	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով, կոչվում է.	շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ
			գրավական
			հիփոթեք
			կոշտ գրավ
	242	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	օգտագործման իրավունքը գույքը փաստացի օգտագործելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է
			տիրապետման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է
			տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է

			բոլոր պատասխանները ճիշտ են
	243	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, լիզինգի պայմանագրի պարտադիր պայման է, որ.	լիզինգի առարկա հանդիսացող գույքը վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է վարձատուն
			լիզինգի պայմանագրի ավարտից հետո այն անցնում է լիզինգառուին
			լիզինգի առարկա կարող է լինել միայն շարժական գույքը
			անշարժ գույքի լիզինգի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման
	244	Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից
			փոխառության և վարկային պայմանագրերը կնքվում են գրավոր
			փոխառություն կարող է տրամադրել ցանկացած անձ, իսկ վարկ՝ միայն բանկ կամ այլ վարկային կազմակերպություն
			փոխառությունը և վարկը կարող է տրամադրվել առանց տոկոսների վճարման պայմանի
	245	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, արժեթուղթ է համարվում. (ա) պարտատոմսը (բ) բաժնետոմսը (գ) երկակի պահեստային վկայագիրը (դ) հասարակ վկայագիրը	միայն (ա) և (բ)
			միայն (ա), (բ) և (դ)
			միայն (ա), (բ) և (գ)
			(ա), (բ), (գ), (դ)
	246	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, արժեթուղթ չի համարվում.	չեկը,
			կոնոսամենտը
			բանկային վկայագիրը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	247	Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	պարտատոմսը ինվեստիցիոն արժեթուղթ է
			հասարակ մուրհակը և փոխանցելի մուրհակը վճարային արժեթղթեր են
			կոնոսամենտը տիտղոսային արժեթուղթ է
			չեկը ինվեստիցիոն արժեթուղթ է

	248	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	որպես ֆինանսական գործակալ՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրեր կարող են կնքել բանկերը, այլ վարկային կազմակերպությունները, ինչպես նաև նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն ունեցող այլ առևտրային կազմակերպությունները
			տրամադրված ֆինանսավորման համար զիջման առարկա կարող է լինել ինչպես ներկա, այնպես էլ ապագա դրամական պահանջը
			պարտապանի նկատմամբ դրամական պահանջը հաճախորդը կարող է ֆինանսական գործակալին զիջել նաև վերջինիս հանդեպ իր պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով
			բոլոր պատասխանները ճիշտ են
	249	Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականության է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումար) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք
			ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ
			փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը, ընդ որում տոկոսների չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
			այն դեպքում, երբ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխառուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսնօրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով
	250	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի՝	ընկերության խորհրդ հաճախորդների եզրակացությամբ,
			ընկերության վերստուգող հանձնաժողովի եզրակացությամբ,

			ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ եզրակացությամբ,
			բոլոր պատասխանները ճիշտ են:
	251	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպությունների խորհրդի անդամների պարգևավճարների և/կամ փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանում է	ՀՀ կենտրոնական բանկը,
			վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի ներկայացմամբ՝ ՀՀ Կենտրոնական բանկը,
			վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովը,
			վարկային կազմակերպության խորհրդի նախագահը:
	252	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշվածներից որն է համարվում բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավունք	տարեկան արդյունքներով շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը,
			ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի
			ընկերության կանոնադրության հաստատումը,
			աուդիտ իրականացնող անձի հաստատումը:
	253	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության գործադիր մարմինը ձևավորվում է	բացառապես վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից,
			վարկային կազմակերպության խորհրդի կողմից,
			վարկային կազմակերպության խորհրդի ներկայացմամբ՝ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից,
			վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին:
	254	Նշել ճիշտ տարբերակը. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության հաստիքացուցակը հաստատում է (ա)ընկերության գործադիր մարմինը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ լիազորությունը փոխանցվել է ընկերության գործադիր մարմնին, (բ) ընկերության խորհուրդը, (գ) ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը.	միայն (ա),
			միայն (բ),
			միայն (գ),
			(ա) կամ (բ):
	255	Նշված պնդումներից որն է սխալ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝	խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում,

			խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի կողմից, որը չի կարող 3 անդամից պակաս լինել,
			խորհրդի անդամ կարող են լինել միայն ընկերության մասնակիցները կամ բաժնետերերը,
			գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել:
	256	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն նշված լիազորություններից բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության խորհուրդը իրավասու է իրականացնել	ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ
			միջանկյալ հաշվեկշռի հաստատումը,
			աուդիտ իրականացնող անձի հաստատումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ,
			նշված բոլոր լիազորությունների իրականացման բացառիկ իրավասությունը պատկանում է ընկերության ընդհանուր ժողովին:
	257	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, նշված պնդումներից որն է սխալ	մինչև 50 բաժնետեր ունեցող ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում, նրա իրավասությունները իրականացնում է ժողովը,
			օրենքով սահմանված ընդհանուր ժողովի բացառիկ բոլոր իրավասությունները կարող են փոխանցվել ընկերության խորհրդին, եթե կանոնադրությամբ նման դրույթ նախատեսված է,
			ընկերության խորհրդի նախագահին ընտրում են ընկերության խորհրդի անդամները՝ խորհրդի անդամների կազմից,
			խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:
	258	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության աուդիտ իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է՝	վարկային կազմակերպության գործադիր տնօրենը,
			վարկային կազմակերպության գործադիր տնօրենը, կամ վեջինիս կողմից տրված լիազորագրի հիման վրա՝ վարկային կազմակերպության աշխատակիցը,
			վարկային կազմակերպության խորհրդի նախագահը,
			վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահը:
	259	Նշված պնդումներից որն է սխալ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝	ընկերության գլխավոր տնօրենը ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում,
			ընկերության գլխավոր տնօրենը ներկայացնում է ընկերությունը արտասահմանում,

			ընկերության գլխավոր տնօրենը տնօրինում է ընկերության գույքը, բացառությամբ ֆինանսական միջոցների, որը տնօրինում է ընկերության խորհուրդը,
			ընկերության գլխավոր տնօրենը գործում է առանց լիազորագրի:
	260	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.	կանոնադրության հաստատումը
			ընկերության վերակազմակերպումը
			հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	261	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը կարող է.	ընդունել ավանդներ միայն ֆիզիկական անձանցից
			ընդունել ավանդներ միայն իրավաբանական անձանցից
			ընդունել ավանդներ իրավաբանական, իսկ ԿԲ համաձայնությամբ՝ նաև ֆիզիկական անձանցից
			բոլոր պատասխանները սխալ են
	262	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.	ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը
			ընկերության մասնաճյուղերի և հիմնարկների ստեղծումը
			ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը
			հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը
	263	Բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.	ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը
			ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը
			ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	264	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը հանդիսանում է.	ընկերության ընդհանուր ժողովի իրավասությունը
			ընկերության խորհրդի իրավասությունը
			ընկերության գլխավոր տնօրենի իրավասությունը
			ընկերության վերստուգող հանձնաժողովի
	265	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք չունեն.	ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը
			ընկերության բաժնետերեր չհանդիսացող խորհրդի անդամները
			ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները
			ճիշտ պատասխանը նշված չէ

	266	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն.	ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
			ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
			ընկերության բաժնետերեր չհանդիսացող խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
			բոլոր պատասխանները ճիշտ են
	267	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությունում պետք է ստեղծվի խորհուրդ, եթե.	ընկերությունն ունի 50 և ավելի բաժնետեր
			ընկերությունն իրականացնում է առևտրային գործունեություն
			ընկերության բաժնետերերի 50 և ավելի տոկոսը կայացրել է խորհուրդ ձևավորելու որոշում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	268	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում.	կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների կատարումը
			ընկերության աուդիտն իրականացնող անձի
			ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	269	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ժողովի իրավասությանն են պատկանում. (ա) ընկերության վերակազմակերպումը (բ) բաժնետոմսերի կոնսոլիդացիան (գ) ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը	միայն (ա)
			միայն (ա) և (բ)
			միայն (բ) և (գ)
			(ա), (բ) և (գ)
	270	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.	խորհուրդը պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում
			խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը
			խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը կարող են փոխանցվել ընկերության գործադիր մարմնի լուծմանը միայն ընկերության ժողովի համաձայնությամբ
			ընկերությունը վարում է խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է ընկերության բաժնետերերի ծանոթացման
	271	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը կազմում	մեկ տարի
			երեք տարի

			հինգ տարի
			ճիշտ պատասխանը նշված չէ
	272	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, եթե ընկերության խորհրդի անդամների թիվը նվազում է կանոնադրությամբ սահմանված թվի կեսից, ապա.	ընկերությունը պետք է լուծարվի
			ընկերությունը պետք է վերակազմակերպվի
			ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի
			ընկերությունը պետք է փոփոխի կանոնադրությունը
	273	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գործադիր մարմինների ձևավորումը կատարվում է.	բացառապես ընկերության ժողովի որոշմամբ
			բացառապես ընկերության խորհրդի որոշմամբ
			ընկերության ժողովի և խորհրդի համատեղ որոշմամբ
			ընկերության ժողովի որոշմամբ, եթե կանոնադրությամբ այդ հարցերը չեն վերապահված խորհրդի
	274	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.	եթե ընկերության կանոնադրությամբ միաժամանակ նախատեսված են միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմիններ, ապա ընկերության խորհրդի որոշմամբ պետք է սահմանազատվի դրանցից յուրաքանչյուրի իրավասությունը
			ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը
			ժողովի որոշմամբ, ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պամանագրով կարող են տրվել առևտրային կազմակերպության
			միանձնյա գործադիր մարմինը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն խորհրդի համաձայնությամբ
	275	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, տնօրինում է.	ընկերության ժողովը
			ընկերության խորհուրդը
			ընկերության տնօրենը
			ընկերության ներքին աուդիտի ղեկավարը
	276	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի կամ վարչության ու տնօրինության այն անդամները, որոնք.	անմեղ են ճանաչվել ընկերության ժողովի որոշմամբ
			ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել
			ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունումից հետո մեկօրյա ժամկետում հրաժարական են
			բոլոր պատասխանները ճիշտ են

	277	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի կամ վարչության ու տնօրինության այն անդամները, որոնք.	ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել
			ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունման նիստին ներկա չեն գտնվել
			չէին կարող իմանալ, որ իրենց գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությունը կկրի
			բոլոր պատասխանները ճիշտ են
	278	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գործադիր մարմինը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից.	3 տարի ժամկետով
			5 տարի ժամկետով
			ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետով
			ճիշտ պատասխանը նշված չէ
	279	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի,	վերստուգիչ հանձնաժողովի ստեղծումը պարտադիր է քսանից ավելի մասնակից ունեցող ընկերություններում
			ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է ընկերության խորհուրդը
			ընկերության ընդհանուր ժողովն իրավունք չունի հաստատել ընկերության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները՝ ընկերության վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունների բացակայության դեպքում
			ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել ընկերության խորհրդի անդամը, ընկերության գործադիր մարմնի անդամը
	280	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը.	կարող է իրականացնել ժողովը
			կարող են փոխանցվել գործադիր մարմնին
			կարող են փոխանցվել ընկերության վարչությանը, եթե կանոնադրությամբ դա նախատեսված է
			ճիշտ պատասխանը նշված չէ
	281	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության խորհրդի անդամների աշխատանքի վարձատրության պայմանները որոշում է.	ՀՀ կենտրոնական բանկը
			ՀՀ կենտրոնական բանկը՝ վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի ներկայացմամբ
			վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովը
			վարկային կազմակերպության խորհրդի նախագահը
	282	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավունք է հանդիսանում.	լուծարման հաշվեկշռի հաստատումը

			վարկային կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը
			վարկային կազմակերպության կանոնադրության հաստատումը
			աուդիտ իրականացնող անձի հաստատումը
	283	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնակիցների ժողովը	իրականացնում է վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության նկատմամբ օպերատիվ մոնիթորինգ և վերահսկողություն
			իրականացնում է վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով կամ վարկային կազմակերպության կանոնադրությամբ վերապահված են վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավասությանը
			որպես վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմին, հաստատում է կանոնադրությունը
			որպես վարկային կազմակերպության կառավարման գործադիր մարմին, իրականացնում է օրենքով վերապահված լիազորությունները
	284	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.	վերստուգիչ հանձնաժողովի նախագահն ընտրվում է վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է վարկային կազմակերպության խորհրդի կողմից՝ ձայների պարզ
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է վարկային կազմակերպության խորհրդի ներկայացմամբ՝ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների
			վարստուգիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի կողմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ
	285	Նշված պնդումներից ո՞րն է սխալ. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, հիմնադիր ժողովը	հաստատում է ընկերության կանոնադրությունը
			ընտրում է ընկերության խորհուրդը
			ընտրում է ընկերության վերստուգող հանձնաժողովը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	286	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է.	վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից
			վարկային կազմակերպության խորհրդի կողմից
			խորհրդի ներկայացմամբ՝ ընդհանուր ժողովի կողմից

			վարկային կազմակերպության գործադիր տնօրենի կողմից (կանոնադրությամբ վարչություն նախատեսված լինելու դեպքում՝ վարչության կողմից)
	287	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգում է.	սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ
			վարկային կազմակերպության գործադիր մարմնի պահանջով
			վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ
			վարկային կազմակերպության խորհրդի որոշմամբ
	288	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային	վարչության նախագահի տեղակալը
			գործադիր տնօրենը
			վերստուգիչ հանձնաժողովի անդամները
			բոլոր պատասխանները ճիշտ են
	289	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային միությունները կարող են ստեղծվել հետևյալ կազմակերպաիրավական ձևով (ձևերով) .	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
			բաժնետիրական ընկերություն
			առևտրային կոոպերատիվ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	290	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները կարող են ստեղծվել հետևյալ կազմակերպաիրավական ձևով (ձևերով) .	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
			բաժնետիրական ընկերություն
			առևտրային կոոպերատիվ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	291	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեություն է համարվում, որպես ձեռնարկատիրական գործունեություն.	ավանդների ներգրավումը
			ներդրումային հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերի հրապարակային թողարկումը
			վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը
			ճիշտ պատասխանը նշված չէ

	292	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեություն է համարվում, որպես ձեռնարկատիրական գործունեություն.	այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն ապրանքներ վաճառելու հետ
			այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն ծառայություններ մատուցելու հետ
			այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն աշխատանքներ կատարելու հետ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	293	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում	գրանցման և լիցենզավորման դիմումը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով
			վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 6 օրինակից
			վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման հայտ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	294	Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում	գրանցման և լիցենզավորման դիմումը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով
			վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 6 օրինակից
			վարկային կազմակերպության գործունեության առաջիկա երեք տարվա տնտեսական ծրագիրը՝ կազմված վարկային կազմակերպության կողմից սահմանված ձևաչափով (ֆորմատով)
			վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման հայտ
	295	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը սահմանում է.	վարկային կազմակերպության գործունեության տեսակը
			վարկային կազմակերպության միջոցների ներգրավման և տեղաբաշխման մեթոդները
			վարկային կազմակերպության գործունեության կարգը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են

	296	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը սահմանում է.	վարկային կազմակերպության գործունեության տեսակը
			կանոնադրական կապիտալի չափը
			վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցներին
			վարկային կազմակերպության ղեկավարներին
	297	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը սահմանում է.	կանոնադրական կապիտալի չափը
			վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցներին
			վարկային կազմակերպության ղեկավարներին
			ճիշտ պատասխանը նշված չէ
	298	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկում գրանցվելու պահից. ա) վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ բ) վարկային կազմակերպությունը համարվում է լիցենզավորված գ) վարկային կազմակերպությունը վճարում է կանոնադրական կապիտալը դ) վարկային կազմակերպությունը իր գործունեության տարածքը համապատասխանեցնում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին	միայն ա) և բ) տարբերակները
			միայն բ) և գ) տարբերակները
			միայն ա), բ) և դ) տարբերակները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	299	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը քննարկում է գրանցվելու և լիցենզիա ստանալու դիմումը և որոշում է կայացնում դիմումը բավարարելու կամ մերժելու մասին	մեկամսյա ժամկետում
			երեք ամսյա ժամկետում
			մեկ տարվա ընթացքում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	300	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը համալրվում է	ՀՀ դրամով, բացառությամբ բաժնետոմսերի դիմաց վճարումների
			ՀՀ դրամով, բացառությամբ վարկային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերի
			ՀՀ դրամով, ինչպես նաև արտարժութային առաջին խմբի մեջ մտնող արժույթներով
			ճիշտ պատասխանը նշված չէ
	301	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	վարկային կազմակերպության լիցենզիան տրամադրվում է 3 տարի ժամկետով
			վարկային կազմակերպության լիցենզիան չի կարող այլ անձանց տրվել օգտագործման, օտարվել կամ
			Վարկային կազմակերպությունների միությունը վարում է տրամադրված լիցենզիաների գրանցամատյանը

			նշված բոլոր պնդումները ճիշտ են
	302	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը սահմանում է. ա) լիցենզիաների գրանցամատյանի ձևը բ) լիցենզիաների գրանցամատյանի վարման կարգը գ) լիցենզիաների գրանցամատյանում ներառվող տեղեկությունները դ) վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը	միայն դ) տարբերակը
			միայն բ) և գ) տարբերակները
			միայն ա), գ) և դ) տարբերակները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	303	Վարկային կազմակերպության ղեկավար չեն կարող լինել	դատարանի կողմից ֆինանսական ոլորտում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք
			դատարանի կողմից մաքսային ոլորտում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք
			դատարանի կողմից իրավական ոլորտում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք
			բոլոր պատասխանները ճիշտ են
	304	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, լիցենզիայի գրանցամատյանները վարում է.	Կենտրոնական բանկը
			Վարկային կազմակերպությունների միությունը
			Ֆինանսական հաշտարարը
			Ֆինանսների նախարարությունը
	305	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղը գրանցումից հանվում է	վարկային կազմակերպության դիմումի հիման վրա և վարկային կազմակերպության լուծարման դեպքում
			եթե չի վճարել Ֆինանսական հաշտարարի գրասենյակի տարեկան վճարը
			վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	306	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման դիմումը, եթե.	դիմումի տրման պահին վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը
			դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը
			ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	307	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը կարող է	իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում

			պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել դիլերային գործունեություն
			պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել ենթապահառուական գործունեություն
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	308	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող.	ի պահ ընդունել արժեթղթեր
			մատուցել ֆինանսական խորհրդատվություն
			ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	309	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպություններին (բացառությամբ սպառողական կրեդիտավորում իրականացնող կազմակերպությունների) արգելվում է.	իրականացնել արտադրական գործունեություն
			իրականացնել առևտրային գործունեություն
			իրականացնել լիցենզավորման ենթակա այլ գործունեություն
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	310	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները պարտավոր են իրենց կանոնադրության մեջ պարտադիր ներառել դրույթներ.	տնօրենների խորհրդի և վերստուգիչ խմբի ֆունկցիաների տարանջատման վերաբերյալ,
			արտաքին աուդիտի իրականացման մեխանիզմների վերաբերյալ,
			տնօրենների, հիմնական ղեկավարների, գլխավոր հաշվապահի, տնօրենների խորհրդի և վերստուգիչ խմբի աշխատանքների մեխանիզմների վերաբերյալ,
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	311	ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պարտավոր են ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանը ներկայացնել՝	հաշվապահական հաշվառման ստորաբաժանման պետի փոփոխությունները
			կանոնադրությունում կատարված փոփոխությունները,
			վարկային կազմակերպության վարկային վարչության պետի փոփոխությունը,
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	312	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը հանում է գրանցումից վարկային կազմակերպության ղեկավարին, եթե	նա զրկվել է որակավորման վկայականից
			ավարտվել է որակավորման վկայականի ժամկետը
			նա սնանկ է ճանաչված և ունի չմարված պարտավորություններ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են

	313	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից,	որին նշանակում է վարկային կազմակերպությունը
			որին նշանակում է Կենտրոնական բանկը
			որին նշանակում է Կենտրոնական բանկը՝ վարկային կազմակերպության առաջարկով
			որին նշանակում է վարկային կազմակերպությունը՝ նախօրոք համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ
	314	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո 15-օրյա ժամկետում
			Վարկային կազմակերպությունները պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո ՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը
			Վարկային կազմակերպությունները պարտավոր են մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 15-ը հրապարակել իրենց ամսական ֆինանսական հաշվետվությունները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	315	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպությունների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կարող են կիրառվել, եթե	վարկային կազմակերպությունը ֆինանսական գործառնություններ է իրականացրել օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով
			ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են կեղծ տվյալներ
			վարկային կազմակերպությունը չի կատարել կենտրոնական բանկի կողմից տրված՝ խախտումները վերացնելու հանձնարարականը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	316	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները	պետք է սահմանեն կարգավորման ավելի մեղմ ռեժիմ, քան սահմանված է բանկերի համար
			կարող են սահմանել կարգավորման ավելի մեղմ ռեժիմ, քան սահմանված է բանկերի համար
			կարող են սահմանել կարգավորման ավելի խիստ ռեժիմ, քան սահմանված է բանկերի համար
			ճիշտ պատասխանը նշված չէ
	317	Նշեք ճիշտ պնդումը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի,	հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են և միաձևական պետք է նույնը լինեն միևնույն տիպի բոլոր վարկային կազմակերպությունների համար
			հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր չեն

			հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են և պետք է նույնը լինեն միևնույն տիպի բոլոր վարկային կազմակերպությունների համար, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնք գործում են օրենքով սահմանված սահմանափակումների շրջանակում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	318	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ԿԲ կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը խստացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում	պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո, եթե ավելի վաղ ժամկետ նախատեսված չէ
			պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո
			պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո
			պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել
	319	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ԿԲ կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը մեղմացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում	պաշտոնական հրապարակման պահից, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել
			պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո, եթե ԿԲ-ն ավելի շուտ ժամկետ չի սահմանել
			պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել
			պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել
	320	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների նկատմամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պատասխանատվության միջոցներ կարող են կիրառվել, եթե	վարկային կազմակերպությունը ֆինանսական գործառնություններ է իրականացրել օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով
			խախտվել են վարկային կազմակերպությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները
			խախտվել են ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգն ու պայմանները
			ճիշտ պատասխանը նշված չէ
	321	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ԿԲ-ի կողմից վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող պատճամիջոց է	տուգանքը
			վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահին որակավորման վկայականից զրկումը
			վարկային կազմակերպության գործադիր տնօրենին որակավորման վկայականից զրկումը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	322	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կարող է ԿԲ որոշմամբ կիրառվել նաև	տուգանք
			նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական
			լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում

			բոլոր պատասխանները ճիշտ են
	323	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կարող է ԿԲ որոշմամբ կիրառվել նաև	տուգանք
			լիցենզիայի կասեցում՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով
			լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	324	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կարող է ԿԲ որոշմամբ կիրառվել տուգանք, որի չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի	հարյուրապատիկը
			հազարապատիկը
			երկուհազարապատիկը
			չորսհազարապատիկը
	325	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, բաժնետերերի տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո	մեկ ամսվա ընթացքում
			երեք ամսվա ընթացքում
			վեց ամսվա ընթացքում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	326	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ժողովի իրավասությանն են պատկանում.	ընկերության վերակազմակերպումը
			ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը
			պարտատոմսերի տեղաբաշխումը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	327	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ժողովի իրավասությանն են պատկանում.	պարտատոմսերի տեղաբաշխումը
			հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը
			ժողովների օրակարգի հաստատումը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	328	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը կազմում է	երեք տարի
			հինգ տարի
			առավելագույնը հինգ տարի
			ճիշտ պատասխանը նշված չէ
	329	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը	կազմում է հինգ տարի
			կազմում է առավելագույնը հինգ տարի
			կազմում է նվազագույնը հինգ տարի

			ճիշտ պատասխանը նշված չէ
	330	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը	կազմում է երեք տարի
			կազմում է հինգ տարի
			չի սահմանափակվում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	331	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.	Բաժնետերը քվեարկության ընթացքում իրավունք չունի ձայները բաշխել մի քանի թեկնածուների միջև
			Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը կազմում է երեք տարի
			500-ից ավել բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող ընկերությունում խորհրդի նախագահի և տնօրենի (գլխավոր տնօրենի) պաշտոնները կարող են համատեղվել
			Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո
	332	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է	ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը
			ընկերության խորհուրդը
			ընկերության գործադիր մարմինը
			ընկերության ներքին աուդիտը
	333	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.	ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը
			ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից
			ընկերության գլխավոր տնօրենը ներկայացնում է ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	334	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գլխավոր տնօրենը	տնօրինում է ընկերության ֆինանսական միջոցները
			տնօրինում է ընկերության գույքը
			ներկայացնում է ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	335	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհուրդը	պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում
			իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը
			հաստատում է ժողովների օրակարգը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	336	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից

			ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ
			վերստուգող հանձնաժողովի անդամներին (վերստուգողին) ընտրում է ժողովը՝ 5 տարի ժամկետով
			ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է խորհուրդը
	337	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է	Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող)
			Ընկերության գլխավոր հաշվապահ
			Ընկերության գործադիր տնօրեն
			Ընկերության խորհրդի նախագահ
	338	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, մինչև 50 բաժնետեր ունեցող ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում, նրա իրավասությունները իրականացնում է	ընկերության գլխավոր հաշվապահը
			ժողովը
			ընկերության վերաստուգող հանձնաժողովը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	339	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. ա) ժողովն ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է բ) խորհուրդն իրականացնում է ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը գ) ընկերության գործադիր մարմինն իրականացնում է ընկերության ընդհանուր գործունեության ղեկավարումը	միայն ա) և բ) տարբերակները
			միայն բ) և գ) տարբերակները
			միայն ա) տարբերակը
			ճիշտ են բոլոր տարբերակները
	340	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել
			Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել
			Բաց բաժնետիրական ընկերություններում խորհրդի նախագահի և տնօրենի (գլխավոր տնօրենի) պաշտոնները չեն կարող համատեղվել
			Նշված բոլոր պատասխանները ճիշտ են

	341	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ են համարվում	ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները
			ՀՀ-ում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերը
			ՀՀ դեսպանությունը ԱՄՆ-ում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	342	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ են համարվում. ա) ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները բ) միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները գ) օտարերկրյա պետության պետական ծառայության մեջ գտնվող՝ ՀՀ-ում ժամանակավորապես աշխատող ֆիզիկական անձինք դ) ֆիզիկական անձինք, որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում	միայն (ա), (բ) և (գ)
			միայն (գ), (դ) և (ե)
			միայն (ա), (բ), (դ) և (ե)
			(ա), (բ), (գ), (դ) և (ե)
	343	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ են համարվում	ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնք հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Հայաստանի Հանրապետությունում 183 օր և ավելի,
			ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում
			ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող՝ ՀՀ տարածքից դուրս ժամանակավորապես աշխատող ֆիզիկական անձինք
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	344	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ են համարվում	միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող ղեկավարները
			միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող ղեկավարների ընտանիքի անդամները
			միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող այլ աշխատակիցներ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են

	345	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ չեն համարվում	ՀՀ-ում հաշվառված կազմակերպությունները
			ՀՀ-ում հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերը
			ՀՀ-ում հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմաններից դուրս գտնվող ներկայացուցչությունները
			օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունների մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, որոնք գտնվում են ՀՀ-ում
	346	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ չեն համարվում	ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունների ղեկավարների ընտանիքի
			միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցիչների աշխատակիցների ընտանիքի անդամները
			օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների ղեկավարների ընտանիքի անդամները
			օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների աշխատակիցների ընտանիքի անդամները
	347	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ չեն համարվում	միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներրկայացուցչությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող ղեկավարների ընտանիքի անդամները
			ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնք հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Հայաստանի Հանրապետությունում 183 օր և ավելի,
			ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունների ղեկավարների ընտանիքի
			ճիշտ պատասխանը նշված չէ
	348	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Կենսական շահերի կենտրոնն այն վայրն է, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը
			Ընթացիկ արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջեւ կատարվող գործարքները կամ վճարումները՝ անկախ դրանց գումարային մեծությունից, բացառությամբ վարկերի, փոխառությունների և ուղղակի ներդրումների մարմանն ուղղված փոքրածավալ գումարների վճարումները
			վարկերի եւ փոխառությունների դիմաց վճարվող տոկոսները եւ այլ ներդրումների դիմաց վճարվող շահաբաժիններն ու այլ վճարումները համարվում են ընթացիկ արժութային գործարքներ
			ճիշտ պատասխանը նշված չէ

	349	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Եթե ֆիզիկական անձը չի ներկայացնում իր ոչ ռեզիդենտության անհրաժեշտ հիմնավորումները կամ փաստաթղթերը, ապա նա համարվում է ռեզիդենտ ֆիզիկական անձ
			Եթե ֆիզիկական անձը չի ներկայացնում իր ոչ ռեզիդենտության անհրաժեշտ հիմնավորումները կամ փաստաթղթերը, ապա նա համարվում է ռեզիդենտ իրավաբանական անձ
			Եթե ֆիզիկական անձը չի ներկայացնում իր ոչ ռեզիդենտության անհրաժեշտ հիմնավորումները կամ փաստաթղթերը, ապա նա համարվում է ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	350	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ են համարվում	ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների զորքերը
			օտարերկրյա պետության պետական ծառայության մեջ գտնվող ՀՀ-ում ժամանակավորապես աշխատող ֆիզիկական անձինք
			միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները
			ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների հյուպատոսական հիմնարկները
	351	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Ընթացիկ արժութային գործարքների իրականացման նկատմամբ որևէ սահմանափակում չի կարող կիրառվել
			Ընթացիկ արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև կատարվող վճարումները՝ անկախ դրանց գումարային մեծությունից
			Ռեզիդենտները ՀՀ տարածքից դուրս կարող են առանց սահմանափակումների իրականացնել արժութային գործարքներ՝ օտարերկրյա պետությունների օրենսդրությանը համապատասխան
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	352	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ընտանեկան շահ է համարվում այն վայրը, որտեղ	գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), ուր բնակվում է անձը կամ նրա ընտանիքը
			գտնվում է անձի (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը
			հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	353	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ընթացիկ արժութային գործարքներ են համարվում.	այն գործարքները, որոնց գումարը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը
			ճիշտ պատասխանը նշված չէ

			ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող գործարքները կամ վճարումները՝ անկախ դրանց գումարային մեծությունից (բացառությամբ վարկերի, փոխառությունների և ուղղակի ներդրումների մարմանն ուղղված փոքրածավալ գումարների վճարումների)
			ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող գործարքները կամ վճարումները, որոնց գումարը չի գերազանցում 6 միլիոն ՀՀ դրամը
	354	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ում արժութային վերահսկողությունն իրականացնում են.	արժութային վերահսկողության մարմինները
			արժութային գործակալները
			ՀՀ տարածքում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները
			ճիշտ պատասխանը նշված չէ
	355	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արժութային գործարքներն այն գործարքներն են, որոնք կապված են	արժութային արժեքների սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների փոխանցման, ինչպես նաև որպես վճարման միջոց արտարժույթով վճարային փաստաթղթերի օգտագործման հետ
			որպես վճարման միջոց արտարժույթի, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս ՀՀ արժույթի օգտագործման հետ
			արժութային արժեքների՝ օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք փոխադրման, ներմուծման և առաքման, Հայաստանի Հանրապետության տարածքից դրանց փոխադրման, արտահանման և առաքման հետ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	356	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, նշել ճիշտ պատասխանը.	Արժութային հսկողության գործակալները հաշվետու են Կենտրոնական բանկին
			Արժութային գործակալները իրականացնում են արժութային հսկողություն
			Արժութային հսկողության գործակալներ են ՀՀ տարածքում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	357	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, նշել ճիշտ պատասխանը.	ՀՀ-ում արժութային վերահսկողությունն իրականացնում են արժութային բրոքերները
			ՀՀ-ում արժութային հսկողությունն իրականացնում են արժութային գործակալները

			ՀՀ-ում արժութային հսկողությունն իրականացնում են արժութային բրոքերները
			ճիշտ պատասխանը նշված չէ
	358	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գործադիր մարմինը	ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից
			կարող է ընտրվել նաև ոչ ընկերության մասնակիցների թվից
			առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	359	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության կանոնադրությամբ է որոշվում	ընդհանուր ժողովի իրավասությունները
			միայն գործադիր մարմնի իրավասությունները
			գլխավոր հաշվապահի և գործադիր մարմնի իրավասությունները
			ճիշտ պատասխանը նշված չէ
	360	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	ընկերության գործադիր մարմինը կարող է ընտրվել նաև ոչ ընկերության մասնակիցների թվից
			ընկերության գործադիր մարմինը կարող է ընտրվել միայն ընկերության մասնակիցների թվից
			ընկերության գործադիր մարմնի դերում կարող է հանդես գալ միայն ֆիզիկական անձը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	361	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Ընկերության գործադիր մարմնի դերում կարող է հանդես գալ միայն ֆիզիկական անձը
			Ընկերության գործադիր մարմնի դերում կարող է հանդես գալ միայն ֆիզիկական անձը, բացառությամբ այն դեպքի, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված է գործադիր մարմնի իրավասությունները պայմանագրով կառավարչին փոխանցելու հնարավորություն
			Ընկերության գործադիր մարմինը ընտրվում է միայն ընկերության մասնակիցների թվից
			ճիշտ պատասխան նշված չէ
	362	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գործադիր մարմինը	տալիս է լիազորագրեր՝ ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար
			տալիս է հրամաններ՝ ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր
			առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են

	363	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի ցանկացած ժամանակ անցկացնել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում
			Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է ընկերության ընդհանուր ժողովի կողմից
			Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշվում է ընկերության կանոնադրությամբ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	364	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը)	պարտադիր կարգով անց է կացնում ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռների ստուգում՝ մինչև դրանց հաստատումն ընդհանուր ժողովի կողմից
			պարտադիր կարգով անց է կացնում ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռների ստուգում՝ ընդհանուր ժողովի կողմից դրանք հաստատվելուց հետո
			անց է կացնում ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռների ստուգում, եթե դրանց ստուգումը նախատեսված է ընկերության կանոնադրությամբ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	365	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի ցանկացած ժամանակ անցկացնել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում
			Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի ցանկացած ժամանակ ծանոթանալ ընկերության գործունեության հետ առնչվող բոլոր փաստաթղթերին
			Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) պարտադիր կարգով անց է կացնում ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռների ստուգում՝ մինչև դրանց հաստատումն ընդհանուր ժողովի կողմից
			Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության վերստուգումը չի կարող կատարվել դրա մասնակիցների պահանջով
	366	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող է լինել.	խորհրդի անդամը
			մեկշաբաթվա ընթացքում գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին,
			մեկշաբաթվա ընթացքում բանավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:
	186	Համաձայն Կանոնակարգ 14-ի, նորմատիվային ընդհանուր կապիտալի հաշվարկման ժամանակ վարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող հիմնական միջոցները	հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են հիմնական կապիտալի հաշվարկից,
			հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են լրացուցիչ կապիտալի հաշվարկից,

			հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով նվազեցվում են հիմնական կապիտալից,
			լրացուցիչ կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով նվազեցվում են հիմնական կապիտալից:
	187	«Ա» վարկային կազմակերպությունը օտարերկրյա վարկանիշ չունեցող բանկին տրամադրել է վարկ, ընդ որում Համաշխարային բանկը երաշխավորել է տվյալ վարկը: Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում (եթե առկա չէ որևէ այլ ապահովվածություն) տվյալ վարկը կընդգրկվի.	0 տոկոս ռիսկի կշռով
			20 տոկոս ռիսկի կշռով
			50 տոկոս ռիսկի կշռով
			100 տոկոս ռիսկի կշռով
	188	Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշվածներից ո՞րը չի դասվում անավարտ ժամկետային գործառնությունների շարքին.	ֆյուչերս
			սվոպ,
			վարկային գծի չօգտագործված մաս,
			օպցիոն
	189	Համաձայն Կանոնակարգ 14-ի, եթե վարկային կազմակերպությունը խախտել է $Ն_1$ (ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը) նորմատիվը, ապա վարկային կազմակերպությունը միանշանակորեն կխախտի.	ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը,
			արտարժութային համախառն դիրքի և վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցության նորմատիվը,
			մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը,
			բոլոր պատասխանները սխալ են:
	190	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ունիվերսալ վարկային կազմակերպության մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի $Ն_3$ նորմատիվը սահմանված է՝	15%,
			20%,
			25%,
			30%,
	191	Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում են 300 մլն դրամ: Վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանում է 60 մլն դրամ (հաշվեկշռային արժեք) արժողությամբ շենք և շինություն: Ընդ որում, 50 մլն դրամ արժողությամբ տարածքը վարկային կազմակերպությունն օգտագործում է իր գործունեության համար, իսկ 10 մլն. դրամ արժողությամբ ավտոկայանի տարածքը՝ որում կանգնեցվում են վարկային կազմակերպության ավտոմեքենաները: Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը կազմում է 200 մլն դրամ: Որքա՞ն է կազմում վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը:	355 մլն դրամ,
			490 մլն դրամ,
			435 մլն դրամ,
			525 մլն դրամ,
	192	Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ սեփական շենքեր և շինությունների հաշվեկշռային արժեքը ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում է.	0 տոկոս ռիսկի կշռով,
			20 տոկոս ռիսկի կշռով,
			50 տոկոս ռիսկի կշռով,
			100 տոկոս ռիսկի կշռով:
	193	Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշվածներից ո՞րը չի դասվում հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների շարքին	երաշխավորությունները,
			վարկային գծերի չօգտագործված մասերի հանրագումարը,
			ֆորվարդը,

			բոլորն էլ դասվում են:
	194	Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում են 500 մլն դրամ: Վարկային կազմակերպությունը այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում իրականացրել է ներդրումներ՝ 200 մլն դրամի չափով, այդ թվում. այլ վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում՝ 150 մլն դրամ և այլ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում՝ 50 մլն դրամ: Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը կազմում է 200 մլն դրամ: Որքա՞ն է կազմում վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը:	700 մլն դրամ,
			525մլն դրամ,
			550 մլն դրամ,
			450 մլն դրամ,
	195	Վարկային կազմակերպության նորմատիվային հիմնական կապիտալը՝ հաշվի առած հիմնական կապիտալից կատարված նվազեցումները, հավասար է 500 մլն դրամ: Վարկային կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների գծով ճնավորված վերագնահատման պահուստի մեծությունը կազմում է 150 մլն դրամ, որից 50 մլն-ը ճնավորվել է վարկային կազմակերպության գործունեության համար չօգտագործվող հիմնական միջոցների գծով:Վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը կազմում է.	750 մլն դրամ,
			600 մլն դրամ,
			700 մլն դրամ,
			650 մլն դրամ:
	196	Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆակտորինգային կազմակերպությունները կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները.	տրամադրել վարկեր, փոխառություններ,
			իրականացնել ֆինանսական վարձակալություն՝ լիզինգ
			տրամադրել երաշխիքներ,
			բոլոր պատասխանները ճիշտ են:
	197	Ո՞ր պնդումն է սխալ. Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային միությունները կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները.	տրամադրել վարկեր, փոխառություններ,
			իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
			տրամադրել երաշխիքներ,
			ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ,
	198	Ո՞ր պնդումն է սխալ. Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող լիզինգային կազմակերպությունները կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները.	տրամադրել վարկեր, փոխառություններ,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
			մատուցել ֆինանսական խորհրդատվություն
			անհատ ձեռնարկատերերին մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ,
	199	Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող լիզինգային կազմակերպությունները կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները.	տրամադրել վարկեր, փոխառություններ,
			ֆինանսավորում, ֆակտորինգ, պայմանով, որ լիզինգային ընկերության ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը կազմում է 10 տոկոս
			անհատ ձեռնարկատերերին մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ,
			նշված բոլոր պատասխանները էլ ճիշտ են

	200	Կանոնակարգ 15-ով սահմանված ամսական և եռամսյակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը մասնաճյուղերի քանակից ելնելով սահմանվում է մասնաճյուղեր չունեցող կամ մինչև 15 մասնաճյուղեր ունեցող վարկային կազմակերպությունների համար՝ մինչև.	հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրը ներառյալ,
			հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը ներառյալ,
			հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը ներառյալ
			հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային (բանկային) օրը ներառյալ:
	201	Կանոնակարգ 15-ով սահմանված տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է մասնաճյուղեր չունեցող կամ մինչև 15 մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունների համար՝ մինչև.	հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 20-ը
			հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 10-րդ աշխատանքային օրը
			հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը
			հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը ներառյալ,
	202	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն Կանոնակարգ 15-ի, վարկային կազմակերպությունը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո.	ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար,
			ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար,
			ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ), միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար,
			ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ), միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար:
	203	Նշել ճիշտ տարբերակը. Համաձայն Կանոնակարգ 15-ի, ո՞ր վարկային կազմակերպություններն են շաբաթական հաշվետվությունները ներկայացնում մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրը ներառյալ	մասնաճյուղեր չունեցող վարկային կազմակերպությունները,
			մինչև 15 մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունները,
			16 և ավելի մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունները,
			ցանկացած վարկային կազմակերպություն՝ անկախ մասնաճյուղերի քանակից կամ դրանց առկայությունից:
	204	Համաձայն կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է	3 տարի ժամկետով
			1 տարի ժամկետով
			5 տարի ժամկետով
			ճիշտ պատասխանը նշված չէ
	205	Համաձայն կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը կարող է լինել նաև տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ՝	առանց տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու
			տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու դեպքում
			գործադիր տնօրենի որակավորման վկայական ստանալու
			ճիշտ պատասխանը նշված չէ

	206	Համաձայն կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել	բանկի գլխավոր հաշվապահ
			բանկի գործադիր տնօրեն
			բանկի գործադիր տնօրենի տեղակալ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	207	Համաձայն կանոնակարգ 13-ի, բանկի գործադիր տնօրենի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել	վարկային կազմակերպության գործադիր տնօրեն
			միաժամանակ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ և գործադիր տնօրեն
			միայն վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ
			բոլոր պատասխանները ճիշտ են
	208	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստային մասհանումները, կարգում նշված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում, բանկերը կատարում են ինքնուրույնաբար՝ ելնելով ա. արժեթղթերի ժամկետի մարման ավարտից հետո ժամկետանց օրերի թվից բ. թողարկողի ֆինանսական վիճակի գնահատումից գ. արժեթղթերի ցուցակված լինելուց (չլինելուց)	միայն «ա» և «բ» տարբերակները
			միայն «բ» և «գ» տարբերակները
			միայն «ա» և «գ» տարբերակները
			«ա», «բ», և «գ» տարբերակները
	209	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», ժամկետային արժեթղթերն անհուսալի են ճանաչվում.	ժամկետանց դառնալու 181-րդ օրը
			այն դեպքում, երբ թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել
			այն դեպքում, երբ թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարվել է առանց իրավահաջորդության
			բոլոր պատասխանները ճիշտ են
	210	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», անժամկետ արժեթղթերն անհուսալի են ճանաչվում, ա. եթե թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել բ. եթե թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարվել է առանց իրավահաջորդության գ. ժամկետանց դառնալու 181-րդ օրը	միայն «ա» և «բ» տարբերակները
			միայն «բ» և «գ» տարբերակները
			միայն «ա» և «գ» տարբերակները
			«ա», «բ», և «գ» տարբերակները
	211	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստային մասհանումները, կարգում նշված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում, բանկերը կատարում են.	ինքնուրույնաբար
			ԿԲ պահանջով
			ԿԲ նախնական թույլտվությամբ
			ճիշտ պատասխանը նշված չէ

	212	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստային մասհանումները, կարգում նշված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում, բանկերը կատարում են.	ԿԲ վերահսկողության վարչության պահանջով
			ԿԲ նախնական համաձայնության առկայության դեպքում
			ԿԲ նախագահի անհատական որոշման հիման վրա
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	213	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», միջին ռիսկային դասակարգված արժեթղթերի դիմաց պահուստին մասնահումները կատարվում են՝	2-20 տոկոսի չափով
			20-70 տոկոսի չափով
			70-100 տոկոսի չափով
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	214	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», բարձր ռիսկային դասակարգված արժեթղթերի դիմաց պահուստին մասնահումները կատարվում են՝	2-20 տոկոսի չափով
			20-70 տոկոսի չափով
			70-100 տոկոսի չափով
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	215	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», միջին ռիսկային դասակարգված արժեթղթերի դիմաց պահուստին մասնահումները կատարվում են՝	10-30 տոկոսի չափով
			40-70 տոկոսի չափով
			30-60 տոկոսի չափով
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	216	Նշել ճիշտ տարբերակը. Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպությունը գյուղական վայրերում վարկերի տրամադրման կամ վարկերի հավաքագրման գործունեություն սկսելուց կամ դադարեցնելուց հետո պետք է տեղեկացնի Կենտրոնական բանկին՝	3 աշխատանքային օրվա ընթացքում
			մեկամսյա ժամկետում,
			15-օրյա ժամկետում,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	217	Նշել սխալ տարբերակը. Համաձայն Կանոնակարգ 13-ի, բանկի ներքին աուդիտի ղեկավարի վկայական ստացած անձը կարող է աշխատել՝	վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամ,
			վարկային կազմակերպության վարչության անդամ,
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ,
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի
	218	Նշել սխալ տարբերակը. Համաձայն Կանոնակարգ 13-ի, Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ միջազգային համբավ և (կամ) Միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից սահմանված «A-» կամ «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունները վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն՝	իր կողմից վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում
			իր կանոնադրությունը (ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում)

			տեղեկանք իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց մասին
			բոլոր պատասխանները էլ ճիշտ են
	219	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշման պատճենը՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ, Կենտրոնական բանկ են ներկայացնում՝	ընդունման օրվանից հնգօրյա ժամկետում,
			ընդունման օրվանից եռօրյա ժամկետում ,
			ընդունման օրվանից մեկշաբաթյա ժամկետում,
			ժամանակավորապես դադարեցնելու դեպքում կենտրոնական բանկին չեն տեղեկացնում
	220	Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային միությունները չեն կարող՝	մատուցել ֆինանսական խորհրդատվություն,
			իրականացնել պարտքերի հետստացման գործունեություն,
			իրենց մասնակիցներին, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ,
			ՀՀ տարածքում գործող վարկային միությունները վերը նշված բոլոր գործառնություններն էլ կարող են իրականացնել:
	221	Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆակտորինգային կազմակերպությունները կարող են՝	կնքել դրամի և արտարժույթի սվոպ,
			կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերս,
			ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն,
			ՀՀ տարածքում գործող ֆակտորինգային կազմակերպությունները վերը նշված բոլոր գործառնություններն էլ կարող են իրականացնել:
	222	Ունիվերսալ վարկային միության նորմատիվային ընդհանուր կապիտալը կազմում է 500 մլն դրամ և փոխառուի հետ փոխկապակցված անձին տրամադրել է 35 մլն դրամ վարկ: Այլ հավասար պայմաններում ունիվերսալ վարկային կազմակերպությունը՝	խախտում է Ն3 (մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ) նորմատիվը,
			խախտում է Ն1 (ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը)
			խախտում է կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նորմատիվը ,
			ընդհանրապես նորմատիվ չի խախտում:
	223	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկի ժամանակ վարկային կազմակերպության հիմնական կապիտալից նվազեցվում են՝ (1) ոչ նյութական ակտիվների և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով, (2) վարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը չգերազանցող գումարի չափով, (3) վարկային կազմակերպության կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների հաշվեկշռային արժեքի չափով (4) հիմնական միջոցների վերագնահատման պահուստի չափով	(1) և (2),
			միայն (1),
			(1) և (3) և (4),
			(1) և (2) և (3) և (4):

	224	Ենթադրենք «Ա» վարկային կազմակերպությունը ՀՀ տարածքում գործող «Բ» բանկի հետ կնքում է ռեպո համաձայնագիր («Ա» վարկային կազմակերպությունը վաճառում է «Բ» բանկին կարճաժամկետ պետական պարտատոմսեր, ընդ որում ստացված կանխիկ միջոցների մեծությունը գերազանցում է վաճառված արժեթղթերի արժեքը): Նշված գործառնության արդյունքնում «Ա» վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկումը, այլ հավասար պայմաններում.	չի փոփոխվի,
			կնվազի,
			կաճի,
			հարցում նշված տարրերը չեն մտնում ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում:
	225	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ֆակտորինգային կազմակերպության կապիտալի համարժեքության N_1 նորմատիվը սահմանված է ոչ ավազագույնը՝	2%,
			6%,
			8%,
			10%:
	226	Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության վարկային գծերի չօգտագործված մասերի հաշվարկումը (ՀՀ դրամով) ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում է.	0 տոկոս ռիսկի կշռով,
			20 տոկոս ռիսկի կշռով,
			50 տոկոս ռիսկի կշռով,
			100 տոկոս ռիսկի կշռով:
	227	Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության վարկային գծերի չօգտագործված մասերի հաշվարկումը (արտարժույթով) ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում է.	30 տոկոս ռիսկի կշռով,
			20 տոկոս ռիսկի կշռով,
			50 տոկոս ռիսկի կշռով,
			75 տոկոս ռիսկի կշռով:
	228	Համաձայն կանոնակարգ 14-ի, պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով կենտրոնական բանկ դիմում կարող է ներկայացնել այն թողարկող վարկային կազմակերպությունը, որի ընդհանուր կապիտալը դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ կազմում է առնվազն	150մլն.ՀՀ դրամ
			300մլն.ՀՀ դրամ
			600մլն.ՀՀ դրամ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	229	Ո՞ր պնդումն է սխալ. Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության կողմից տրված փոխառությունը համարվում է երկարաժամկետ ստորադաս փոխառություն, եթե՝	փոխառությունը տրամադրվել է հինգ տարուց ոչ պակաս ժամկետով
			փոխառությունն ամբողջությամբ վճարված չէ
			փոխառությունը ժամկետից շուտ մարման ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի
			փոխառությունը չի տրամադրվել փոխառուի նկատմամբ որոշակի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով
	230	Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում թղթակցային հաշիվները ՍԴՌ-ի զամբյուղի մեջ մտնող արտարժույթով ընդգրկվում են հետևյալ ռիսկի կշռով.	0 տոկոս
			30 տոկոս
			20 տոկոս
			50 տոկոս

	231	Վարկային միության ընդհանուր նորմատիվային կապիտալը կազմում է 200 մլն դրամ, վարկային միությունը իր փոխառուի հետ փոխկապակցված անձին առավելագույնը որքան վարկ տրամադրելու դեպքում չի խախտի $Ն_3$ (մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ) նորմատիվը	50 մլն դրամ,
			10 մլն դրամ
			100 մլն դրամ,
			5 մլն դրամ,
	232	Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում թղթակցային հաշիվները հայկական դրամով ու դրանց գծով հաշվարկված տոկոսները ընդգրկվում են հետևյալ ռիսկի կշռով.	0 տոկոս ռիսկի կշռով,
			100 տոկոս ռիսկի կշռով,
			20 տոկոս ռիսկի կշռով,
			30 տոկոս ռիսկի կշռով
	233	Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում Արժույթի միջազգային հիմնադրամի նկատմամբ արտարժութային պահանջները կշռվում են	0 տոկոս ռիսկի կշռով
			10 տոկոս ռիսկի կշռով
			20 տոկոս ռիսկի կշռով
			30 տոկոս ռիսկի կշռով
	234	Համաձայն Կանոնակարգ 14-ի, դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի ՀՀ պետական մուրհակներ և վերջիններով ապահովված պահանջներ, հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անավարտ ժամկետային գործառնություններ, ինչպես նաև դրանց գծով հաշվարկված տոկոսները ընդգրկվում են ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում՝	0 տոկոս ռիսկի կշռով,
			10 տոկոս ռիսկի կշռով,
			20 տոկոս ռիսկի կշռով,
			100 տոկոս ռիսկի կշռով
	235	Համաձայն Կանոնակարգ 13-ի, ՀՀ ԿԲ-ն մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե	ներկայացվել են կեղծ տեղեկություններ
			ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ
			վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգում կատարված էական կանխատեսումները Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով անիրատեսական են
			բոլոր պատասխանները ճիշտ են
	236	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՎառՌ մեթոդաբանությամբ արտարժութային ռիսկի հաշվարկման համար հիմք է ընդունվում	100% վստահության միջակայքը
			99% վստահության միջակայքը
			50% վստահության միջակայքը
			1% վստահության միջակայքը
	237	Արտարժութային երկար դիրքերի հանրագումարը կազմում է 10 մլն դրամ, իսկ արտարժութային կարճ դիրքերի հանրագումարը -20 մլն դրամ է, բանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորների և մետաղական հաշիվների ձուլակտորների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումարը կազմում է 11 մլն դրամ: Արտարժութային առավելագույն դիրքը ըստ արտարժութային ռիսկի հաշվարկման Ստանդարտ մեթոդաբանության կկազմի՝	41 մլն դրամ
			31 մլն դրամ
			1 մլն դրամ
			21 մլն դրամ
	238	Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպությունները պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում.	վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի (հիմնադիրների ժողով) կողմից հաստատված վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը

			հայտարարագիր վարկային կազմակերպության աշխատանքային ժամերի վերաբերյալ
			հայտարարագիր վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց վերաբեյալ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	239	Համաձայն Կանոնակարգ 13-ի, Կենտրոնական բանկը համապատասխան փաստաթղթերն ու տեղեկությունները ստալու պահից	մեկամսյա ժամկետում գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը կամ մերժում է դրա գրանցումն ու
			մեկամսյա ժամկետում գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը
			մեկամսյա ժամկետում վարկային կազմակերպությանը ներկայացնում է ստացված փաստաթղթերի ու տեղեկությունների ամբողջականության վերաբերյալ դիտողություններ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	240	Համաձայն Կանոնակարգ 13-ի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին, այդ թվում՝	չի վճարվել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը
			վարկային կազմակերպության առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը կամ ներքին հսկողության համակարգը բավարար չեն վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար
			վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին, գործունեության կանոնակարգում ներկայացված տվյալներն անարժանահավատ են
			նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
	241	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը, եթե	տարածքում գործող այլ բանկում բացված հաշվին ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը
			վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձինք ստացել են Կենտրոնական բանկի համաձայնությունը
			վարկային կազմակերպության հետ կապված անձինք ստացել են Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	242	Արտարժութային երկար դիրքերի հանրագումարը կազմում է 12 մլն դրամ, իսկ արտարժութային կարճ դիրքերի հանրագումարը -15 մլն դրամ է, թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորների և մետաղական հաշիվների ձուլակտորների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումարը կազմում է 5 մլն դրամ: Արտարժութային առավելագույն դիրքը կկազմի՝	2 մլն դրամ
			32 մլն դրամ
			20 մլն դրամ
			8 մլն դրամ
	243	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Ակտիվների հերթական դասակարգումը և պահուստների ճշգրտումներն իրականացնելիս, վարկային կազմակերպությունը ընդհանուր և հատուկ պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է ծախսերի հաշվին
			Եթե բանկի հաշվեկշռում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) բանկի կողմից այլ անձի անհատույց զիջվել են (կամ ներվել) մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և (կամ) հաշվեկշռից դուրս գրվելը, դրանք չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ

			Յուրաքանչյուր վարկային կազմակերպություն ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվ՝ ընդհանուր և հատուկ պահուստների համար
			Կենտրոնական բանկի վերահսկողության ծառայությունը, Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով, կարող է վերահսկողության արդյունքում պարտավորեցնել վարկային կազմակերպությանը որոշակի գումարով պահուստ ձևավորել կոնկրետ ակտիվի կամ ակտիվների խմբի համար՝ առանց ակտիվի (ակտիվների) դասակարգման
	244	Գրանցման և լիցենզավորման մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից.	եռօրյա ժամկետում վարկային կազմակերպությանը տրվում է գրանցման վկայականը
			մեկամսյա ժամկետում տրամադրվում է վարկային կազմակերպության լիցենզիան
			վարկային կազմակերպությանը տրվում է ֆիրմային անվանման գրանցման վկայականը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	245	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը լիցենզավորված վարկային կազմակերպությանը լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ	վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում
			վարկային կազմակերպությունը պետք է տարեկան վճարի Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին
			վարկային կազմակերպության լիցենզիան չի կարելի փոխանցել, վաճառել կամ փոխանակվել
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	246	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը լիցենզավորված վարկային կազմակերպությանը լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ	Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում վարկային կազմակերպությունը պետք է Կենտրոնական բանկ դիմում ներկայացնի լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար
			վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ցանկը վարկային կազմակերպության կողմից պարտադիր պետք է տեղադրվի իր ինտերնետային կայքում
			պետք է վճարել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	247	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե	վարկային կազմակերպության առաջարկվող ներքին հսկողության համակարգը բավարար չի վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար
			ներկայացվել են կեղծ տեղեկություններ
			վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	248	Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե	չի վճարվել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը
			վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին
			վարկային կազմակերպության առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը բավարար չէ վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար
			ճիշտ պատասխանը նշված չէ

	249	Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, եթե վարկային կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) վարկային կազմակերպության կողմից այլ անձի անհատույց զիջվել են (կամ ներվել) մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և (կամ) հաշվեկշռից դուրս գրվելը, ապա	դրանք չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ
			դրանք նույնպես հանդիսանում են շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ
			շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է այդ ակտիվի (կամ դրա մի մասի) գումարի չափով
			ճիշտ պատասխանը նշված չէ
	250	Համաձայն Կանոնակարգ 13-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Կորած լիցենզիան գտնելու դեպքում վարկային կազմակերպությունը գտնված լիցենզիայի օրինակը վերադարձնում է Կենտրոնական բանկ
			Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը վարկային կազմակերպությանը տրամադրում է համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում
			Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար՝ կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը
			նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են
	251	Համաձայն Կանոնակարգ 13-ի, լիցենզիայի կորստի դեպքում վարկային կազմակերպությունը	դրա մասին հայտարարություն է տալիս առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում
			դրա մասին հայտարարություն է տալիս զանգվածային լրատվամիջոցներից որևէ մեկով
			Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար
			բոլոր պատասխանները ճիշտ են
	252	Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Արտարժութային բաց դիրքը վարկային կազմակերպության արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև եղած քանակական անհավասարությունն է
			Արտարժութային երկար դիրք՝ վարկային կազմակերպության արտարժույթով պարտավորությունների հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով ակտիվային հաշիվների մնացորդներին
			Համախառն արտարժութային դիրքը հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար
			ճիշտ պատասխանը նշված չէ
	253	Համաձայն Կանոնակարգ 14-ի, արտարժութային առավելագույն դիրքը ներքոհիշյալ մեծությունների հանրագումարն է՝	արտարժութային երկար դիրքերի հանրագումարի և արտարժութային կարճ դիրքերի հանրագումարի բացարձակ մեծություններից առավելագույն մեծության և թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորների և մետաղական հաշիվների ձուլակտորների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումարի
			արտարժութային երկար դիրքերի հանրագումարի և արտարժութային կարճ դիրքերի հանրագումարի բացարձակ մեծությունների

			թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորների և մետաղական հաշիվների ձուլակտորների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումարի
			արտարժութային երկար դիրքերի հանրագումարի և արտարժութային կարճ դիրքերի հանրագումարի բացարձակ մեծությունների և թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորների և մետաղական հաշիվների ձուլակտորների բաց դիրքերի բացարձակ մեծությունների
	254	Նշել սխալ պատասխանը: Վարկային կազմակերպությունները ներկայացուցչությունների բացման և գրանցման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.	ներկայացուցչության ստեղծելու հիմնավորումը
			ներկայացուցչության կանոնադրությունը
			վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին
			ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը
	255	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղ գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը	վարկային կազմակերպության մասնաճյուղի ֆիրմային անվանման գրանցման հայտը
			վարկային կազմակերպության կանոնադրությունը
			վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	256	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետություններում մասնաճյուղեր ստեղծելիս Կենտրոնական բանկ են ներկայացնում.	վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին
			վարկային կազմակերպության միջնորդագիրը
			ստեղծվող մասնաճյուղի կանոնադրությունը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	257	Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետություններում ներկայացուցչություններ ստեղծելիս Կենտրոնական բանկ են ներկայացնում.	վարկային կազմակերպության միջնորդագիրը
			վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին
			ճիշտ պատասխանը նշված չէ
			ներկայացուցչության հաստատված կանոնադրությունը
	258	Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության ներկայացուցչությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցումից հանվում է	ճիշտ պատասխանը նշված չէ
			մեկշաբաթյա ժամկետում
			ընդունման օրվանից եռօրյա ժամկետում
			ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում
	259	Համաձայն Կանոնակարգ 13-ի, գործող վարկային կազմակերպությունները ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղերի բացման և գրանցման համար ԿԲ են ներկայացնում	վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը՝ 3 օրինակից
			մասնաճյուղի հաստատված կանոնադրությունը՝ 6 օրինակից
			վարկային կազմակերպության հաստատված կանոնադրությունը՝ 3 օրինակից
			ճիշտ պատասխանը նշված չէ

	260	Համաձայն Կանոնակարգ 13-ի, գործող վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ստանալու համար ԿԲ նախնական համաձայնությունը պարտադիր է.	ֆիզիկական անձանց համար
			իրավաբանական անձանց համար
			միջազգային կազմակերպությունների համար
			բոլոր պատասխանները ճիշտ են
	261	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում մասնաճյուղեր (կամ ներկայացուցչություններ) բացելիս այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ պետությունում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո	յոթ օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում համապատասխան փաստաթղթեր՝ Կենտրոնական բանկում ևս գրանցվելու և լիցենզավորվելու նպատակով
			Կենտրոնական բանկին տեղեկացնում են համապատասխան մասնաճյուղի (ներկայացուցչության) բացման վերաբերյալ
			տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ են ներկայացնում գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը՝ կցելով մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցված կանոնադրությունը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	262	կազմակերպությունների ՀՀ տարածքում ներկայացուցչությունների բացման և գրանցման համար վարկային կազմակերպությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը	ներկայացուցչության ստեղծելու հիմնավորումը
			ներկայացուցչության կանոնադրությունը
			վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	263	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն Կանոնակարգ 13-ի, գործող վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձը ԿԲ նախնական համաձայնությունը ստանալու համար ԿԲ է ներկայացնում իրավաբանական անձի վերջին երեք տարիների տարեկան և վերջին միջանկյալ ա) հաշվապահական հաշվեկշիռը բ) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը գ) տնտեսական նորմատիվների մասին հաշվետվությունը դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը	միայն (բ) և (գ)
			միայն (ա), (գ) և (դ)
			միայն (ա), (բ) և (դ)
			միայն (բ) , (գ) և (դ)
	264	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, պետությունը վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան վարկային կազմակերպության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը	վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմում
			հայտարարագիր՝ չմարված և չներված պարտավորությունների մասին
			ներդրման ենթակա միջոցների ծագման օրինականությունը հիմնավորող փաստաթղթեր
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	265	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշել ճիշտ պնդումը.	Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ
			Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության վարչության անդամ

			Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը կարող է լինել նաև տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ՝ միայն տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու դեպքում
			Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը կարող է լինել նաև տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ՝ առանց տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու
	266	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպությունում	միայն որպես գլխավոր հաշվապահ
			միայն որպես գլխավոր հաշվապահի տեղակալ
			որպես գլխավոր հաշվապահ կամ հաշվապահի տեղակալ
			որպես վերստուգիչ հանձնաժողովի անդամ
	267	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը միաժամանակ կարող է լինել	տվյալ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ
			տվյալ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի
			տվյալ վարկային կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալ (առկայության դեպքում)
			ճիշտ պատասխանը նշված չէ
	268	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ
			ճիշտ պատասխանը նշված չէ
			Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ
			Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ
	269	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը	միաժամանակ կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ
			միաժամանակ կարող է աշխատել վարկային կազմակերպության գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ, տնօրինության (վարչության) անդամ
			ճիշտ պատասխանը նշված չէ
			միաժամանակ չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության այլ աշխատակից
	270	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, խնայողական միության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը	կարող է միաժամանակ լինել տվյալ խնայողական միության գործադիր տնօրեն
			կարող է միաժամանակ լինել տվյալ խնայողական միության այլ աշխատակից
			կարող է միաժամանակ լինել տվյալ խնայողական միության գլխավոր հաշվապահ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	271	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության այլ աշխատակից
			Բանկի ներքին աուդիտի ղեկավարի, բանկի ներքին աուդիտի անդամի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ (վերստուգող), վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ

			Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ
			Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ կարող է լինել տվյալ վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար
	272	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է	մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը
			ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով
			ստորագրման պահից հաշված երկու տարի ժամկետով
			ճիշտ պատասխանը նշված չէ
	273	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է.	ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով
			մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը
			ստորագրման պահից հաշված հինգ տարի ժամկետով
			ճիշտ պատասխանը նշված չէ
	274	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին չբավարարած թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար
			ճիշտ պատասխանը նշված չէ
			Որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին չբավարարած թեկնածուները երեք շաբաթվա ընթացքում կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար
			Որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին չբավարարած թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ քննության անցկացման օրվանից 3 ամիս հետո
	275	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ վարկային կազմակերպության ղեկավարը հանվում է գրանցումից, եթե.	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ
			ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից
			ղեկավարը զրկվել է հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	276	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության ղեկավարի կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ղեկավարները պետք է	ՀՀ ԿԲ նախնական համաձայնությունը
			ԿԲ կողմից տրամադրված համապատասխան որակավորման վկայական
			ԿԲ նախագահի բանավոր կամ գրավոր թույլտվությունը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	277	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության ղեկավարների գրանցումը մերժվում է ԿԲ որոշմամբ, եթե ղեկավարների թեկնածուները	սնանկ են ճանաչվել
			ունեն չմարված պարտավորություններ
			ունեն չներված պարտավորություններ
			բոլոր պատասխանները ճիշտ են
	278	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության ղեկավարների գրանցումը մերժվում է ԿԲ որոշմամբ, եթե	ղեկավարների թեկնածուները ունեն մարված (ներված) պարտավորություններ
			ղեկավարների թեկնածուները քրեական գործով ներգրավված չեն որպես կասկածյալ, մեղադրյալ կամ մեղադրյալ

			ղեկավարների թեկնածուները ունեն ղիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն
			բոլոր պատասխանները ճիշտ են
	279	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, եթե վարկային կազմակերպության ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա նա չի կարող գրանցվել որպես վարկային կազմակերպության ղեկավար ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին ԿԲ որոշման ընդունման պահից	մեկ տարվա ընթացքում
			երեք տարվա ընթացքում
			հինգ տարվա ընթացքում
			տասը տարվա ընթացքում
	280	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է լինել (նշված պարտականությունը կարող է կատարել) տվյալ վարկային կազմակերպության	գործադիր տնօրենը
			գլխավոր հաշվապահի տեղեկալը
			վերստուգիչ հանձնաժողովի նախագահը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	281	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող են կատարել) միայն տվյալ վարկային կազմակերպության ա) գործադիր տնօրենի տեղակալը բ) վարչության նախագահի տեղակալը գ) գլխավոր հաշվապահի տեղակալը դ) վարչության (տնօրինության) անդամը	միայն ա) և բ) տարբերակները
			միայն ա), բ), գ) տարբերակները
			միայն ա), բ), դ) տարբերակները
			միայն բ) և դ) տարբերակները
	282	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող են կատարել) միայն տվյալ վարկային կազմակերպության ա) գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ունեցող վարկային կազմակերպության այլ աշխատակիցը բ) գլխավոր հաշվապահը գ) գլխավոր հաշվապահի տեղակալը դ) վերստուգիչ նախագահը	միայն ա), բ), գ) տարբերակները
			միայն ա), բ), դ) տարբերակները
			միայն բ) և դ) տարբերակները
			ճիշտ պատասխանը նշված չէ
	283	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պետք է ԿԲ գրանցման ներկայացնեն	վարկային կազմակերպության կանոնադրությունում կատարված փոփոխությունը
			վարկային կազմակերպության մասնաճյուղի կանոնադրությունում կատարված փոփոխությունը
			վարկային կազմակերպության ներկայացուցչության կանոնադրությունում կատարված փոփոխությունը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	284	Եթե վարկային կազմակերպության արտարժութային ռիսկ պարունակող ակտիվները կազմում են 100 մլն դրամ, իսկ արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունները՝ 80 մլն դրամ, ապա արտարժութային դիրքը	կարճ է
			երկար է
			փակ է
			չի հաշվարկվում

	285	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշել ճիշտ պնդումը.	Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ
			Վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը
			Վարկային կազմակերպության խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի (տեղակալների) և խորհրդի անդամների ժամանակավոր պաշտոնակատարներ չեն նախատեսվում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	286	Եթե վարկային կազմակերպության արտարժութային ռիսկ պարունակող ակտիվները կազմում են 70 մլն դրամ, իսկ արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունները՝ 80 մլն դրամ, ապա արտարժութային դիրքը	կարճ է
			երկար է
			փակ է
			չի հաշվարկվում
	287	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Կանխիկ դրամով և (կամ) այլ արժեքներով գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունը և դրա մասնաճյուղը պետք է ունենան շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր
			Դրամապահոցի բացակայության պարագայում վարկային կազմակերպությունը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 6 միլիոն ՀՀ դրամը
			Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը դրամարկղի ներսում փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի
			նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
	288	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, դրամապահոցի բացակայության պարագայում վարկային կազմակերպությունը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե ա) դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, բ) վարկային կազմակերպությունում կամ վարկային կազմակերպության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին ու պատին գ) ունի շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր դ) վարկային կազմակերպությունը և դրա տարածքային ստորաբաժանումը միացված են միմյանց կապող համակարգչային ցանցի հետ	միայն ա) և բ) տարբերակները
			միայն ա), բ), գ) տարբերակները
			միայն ա), բ), դ) տարբերակները
			միայն ա), գ) և դ) տարբերակները
	289	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպությունը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է	իր սպասարկման տարածքում այնպես, որ այն տեսանելի լինի սպասարկման սրահի բոլոր կողմերից
			միայն իր դրամարկղում այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի

			իր սպասարկման տարածքում այնպես, որ այն տեսանելի լինի նույնիսկ սպասարկման սրահից դուրս հաճախորդներին
			ճիշտ պատասխանը նշված չէ
	290	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպությունը կարող է Կենտրոնական բանկի կողմից սահմանած տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն	«Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրության պայմանագիր
			Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի միջազգային վարկանշող կազմակերպության կողմից տրված ԲԲԲ - վարկանիշ
			Մուդիզի «Բաա» խմբի միջազգային վարկանշող կազմակերպության կողմից տրված Բաա3 վարկանիշ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	291	Համաձայն «Կանոնակարգ 14»-ի, ունիվերսալ վարկային կազմակերպության համար սահմանված արտարժույթի տնօրինման նորմատիվը սահմանված է	5 տոկոս
			10 տոկոս
			12 տոկոս
			նման նորմատիվ չի սահմանվում
	292	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ տարածքում գործող վարկային միությունները կարող են.	հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը
			մատուցել ֆինանսական խորհրդատվություն
			իրականացնել ֆինանսական վարձակալություն լիզինգ
			իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում
	293	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ տարածքում գործող վարկային միությունները կարող են.	հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը
			անկանխիկ ձևով կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ
			իրականացնել ֆինանսական վարձակալություն լիզինգ
			իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում
	294	Համաձայն Կանոնակարգ 14-ի, հաշվետեր վարկային կազմակերպությունները ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում հաշվի բացման մասին պարտավոր են գրավոր տեղեկացնել	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին
			ՀՀ տարածքում գործող բոլոր վարկային կազմակերպություններին
			իր բոլոր հաճախորդներին
			ճիշտ պատասխանը նշված չէ
	295	Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Վարկային կազմակերպությունները չեն կարող իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել և վարել բանկային
			Վարկային կազմակերպությունները կարող են բացել բանկային հաշիվներ միայն իրենց մասնակիցների համար
			Վարկային կազմակերպությունները կարող են իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել բանկային հաշիվներ, սակայն այդ հաշիվների սպասարկումն իրականացնում են սպասարկող բանկերի միջոցով
			ճիշտ պատասխանը նշված չէ
	296	Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Վարկային կազմակերպությունները չեն կարող իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել և վարել բանկային
			Վարկային կազմակերպություններն անկանխիկ դրամական հաշվարկները կատարում են վարկային կազմակերպությանը սպասարկող բանկի միջոցով
			Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կարող է վարկային կազմակերպության համար բացել և վարել հատուկ հաշիվներ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	297	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ո՞ր նորմատիվն է սահմանված ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների համար.	պարտադիր պահուստավորման նորմատիվը,

			արտարժույթի տնօրինման նորմատիվը
			խոշոր պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը,
			չեն փոփխվի,
			սկզբում կնվազեն, հետո կաճեն:
	18	Եթե վարկային կազմակերպությունն ունի դրական GAP (տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվները գերազանցում են տոկոսադրույքների նկատմամբ զգայուն պարտավորություններին) ապա տոկոսադրույքների աճի դեպքում վարկային կազմակերպության զուտ տոկոսային եկամուտները	կաճեն,
			կնվազեն,
			չեն փոփխվի,
			սկզբում կնվազեն, հետո կաճեն:
	19	Եթե վարկային կազմակերպությունն ունի դրական GAP (տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվները գերազանցում են տոկոսադրույքների նկատմամբ զգայուն պարտավորություններին) ապա տոկոսադրույքների նվազման դեպքում վարկային կազմակերպության զուտ տոկոսային եկամուտները	կաճեն,
			կնվազեն,
			չեն փոփխվի,
			սկզբում կաճեն, հետո կնվազեն:
	20	ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ (AMD/USD) ժամանակաշրջանի սկզբի նկատմամբ արժեքավորվել է 50 դրամով և կազմել 600 դրամ 1 դոլլարի դիմաց: Նույն ժամանակահատվածում ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ (USD/AMD)	արժեքավորվել է 8.3 տոկոսով,
			արժեզրկվել է 8.3 տոկոսով,
			արժեքավորվել է 9.0 տոկոսով,
			արժեզրկվել է 9.0 տոկոսով:
	21	ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ (AMD/USD) ժամանակաշրջանի սկզբի նկատմամբ արժեզրկվել է 50 դրամով և կազմել 500 դրամ 1 դոլարի դիմաց: Նույն ժամանակահատվածում ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ (USD/AMD)	արժեքավորվել է 9.0 տոկոսով,
			արժեզրկվել է 9.0 տոկոսով,
			արժեքավորվել է 10.0 տոկոսով,
			արժեզրկվել է 10.0 տոկոսով:

	22	1 կանադական դոլարը (CAD) գնվում է 0.70 և վաճառվում է 0.75 ԱՄՆ դոլարով: 1 ԱՄՆ դոլարի CAD/USD համապատասխանաբար առքի և վաճառքի փոխարժեքները արտահայտված կանադական դոլարով կկազմեն	070 - 0.75,
			0.75 - 0.70,
			1.33-1.43,
			1.23 - 1.33:
	23	Մինչև մարման ժամկետը պահվող պարտատոմսի /yield to maturity/ եկամտաբերությունը ավելի ցածր է, քան նրա կուպոնային տոկոսը: Դա նշանակում է, որ նրա շուկայական գինը	հավասար է անվանական արժեքին,
			ցածր է անվանական արժեքից,
			բարձր է անվանական արժեքից,
			ճիշտ պատասխան նշված չէ:
	24	Մինչև մարման ժամկետը պահվող պարտատոմսի /yield to maturity/ եկամտաբերությունը ավելի բարձր է քան նրա կուպոնային տոկոսը: Դա նշանակում է, որ նրա շուկայական գինը	հավասար է անվանական արժեքին
			ցածր է անվանական արժեքից,
			բարձր է անվանական արժեքից,
			ճիշտ պատասխան նշված չէ:
	25	Մինչև մարման ժամկետը պահվող պարտատոմսի /yield to maturity/ եկամտաբերությունը հավասար է նրա կուպոնային տոկոսին: Դա նշանակում է, որ նրա շուկայական գինը	հավասար է անվանական արժեքին,
			ցածր է անվանական արժեքից,
			բարձր է անվանական արժեքից,
			ճիշտ պատասխան նշված չէ:
	26	Եթե եկամտաբերության կորը ունի դրական թեքություն /upward sloping/, այսինքն երկարաժամկետ տոկոսադրույքները ավելի բարձր են, քան կարճաժամկետ տոկոսադրույքները, ապա շուկայի մասնակիցները ակնկալում են, որ ապագա կարճաժամկետ տոկոսադրույքները կլինեն՝	հավասար ընթացիկ կարճաժամկետ տոկոսադրույքներին,
			ցածր ընթացիկ կարճաժամկետ տոկոսադրույքներից,
			բարձր ընթացիկ կարճաժամկետ տոկոսադրույքներից,
			ճիշտ պատասխան նշված չէ:
	27	Եթե եկամտաբերության կորը ունի բացասական թեքություն /downward sloping/, այսինքն երկարաժամկետ տոկոսադրույքները ավելի ցածր են, քան կարճաժամկետ տոկոսադրույքները, ապա շուկայի մասնակիցներն ակնկալում են, որ ապագա կարճաժամկետ տոկոսադրույքները կլինեն	հավասար ընթացիկ կարճաժամկետ տոկոսադրույքներին,
			ցածր ընթացիկ կարճաժամկետ տոկոսադրույքներից
			բարձր ընթացիկ կարճաժամկետ տոկոսադրույքներից,
			ճիշտ պատասխան նշված չէ:
	28	Պետական պարտատոմսի կուպոնային տոկոսը կազմում է 8% տարեկան և գնանշվում է անվանական արժեքից ցածր: Ինչպիսի՞ն կլինի վարկային կազմակերպության քաղաքականությունը այդ տիպի պարտատոմսում ներդրում կատարելու համար, եթե վարկային կազմակերպության նույն ռիսկայնության այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը կազմում է 8% տարեկան:	վարկային կազմակերպությունը կգնի պարտատոմսը, քանի որ վերջինս ապահովում է ավելի բարձր եկամտաբերություն քան այլընտրանքային ներդրումները,
			վարկային կազմակերպությունը չի գնի պարտատոմսը, քանի որ վերջինս ապահովում է ավելի ցածր եկամտաբերություն, քան այլընտրանքային ներդրումները,
			վարկային կազմակերպությունը նախապատվություն չի ունենա պարտատոմսը գնելու համար, քանի որ վերջինս ապահովում է նույն եկամտաբերությունը ինչ-որ այլընտրանքային ներդրումները,
			բոլոր պատասխանները սխալ են:
	29	Պետական պարտատոմսի կուպոնային տոկոսը կազմում է 10% տարեկան և գնանշվում է անվանական արժեքից բարձր: Ինչպիսի՞ն կլինի վարկային կազմակերպության քաղաքականությունը այդ տիպի պարտատոմսում ներդրում կատարելու համար, եթե վարկային կազմակերպության նույն ռիսկայնության այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը կազմում է 10% տարեկան:	վարկային կազմակերպությունը կգնի պարտատոմսը, քանի որ վերջինս ապահովում է ավելի բարձր եկամտաբերություն, քան այլընտրանքային ներդրումները,

			վարկային կազմակերպությունը չի գնի պարտատոմսը, քանի որ վերջինս ապահովում է ավելի ցածր եկամտաբերություն քան այլընտրանքային ներդրումները,
			վարկային կազմակերպությունը նախապատվություն չի ունենա պարտատոմսը գնելու համար, քանի որ վերջինս ապահովում է նույն եկամտաբերությունը ինչ-որ այլընտրանքային ներդրումները,
			բոլոր պատասխանները սխալ են:
	30	Պետական պարտատոմսի կուպոնային տոկոսը կազմում է 10% տարեկան և գնանշվում է անվանական արժեքից ցածր: Ինչպիսի՞ն կլինի վարկային կազմակերպության քաղաքականությունը այդ տիպի պարտատոմսում ներդրում կատարելու համար, եթե վարկային կազմակերպության նույն ռիսկայնության այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը կազմում է 11% տարեկան:	վարկային կազմակերպությունը կգնի պարտատոմսը, քանի որ վերջինս ապահովում է ավելի բարձր եկամտաբերություն քան այլընտրանքային ներդրումները,
			վարկային կազմակերպությունը չի գնի պարտատոմսը, քանի որ վերջինս ապահովում է ավելի ցածր եկամտաբերություն քան այլընտրանքային ներդրումները,
			վարկային կազմակերպությունը նախապատվություն չի ունենա պարտատոմսը գնելու համար, քանի որ վերջինս ապահովում է նույն եկամտաբերությունը ինչ-որ այլընտրանքային ներդրումները,
			ինֆորմացիան բավարար չէ հարցին պատասխանելու համար
	31	Պետական պարտատոմսի կուպոնային տոկոսը կազմում է 10% տարեկան և գնանշվում է անվանական արժեքից բարձր: Ինչպիսի՞ն կլինի վարկային կազմակերպության քաղաքականությունը այդ տիպի պարտատոմսում ներդրում կատարեու համար, եթե վարկային կազմակերպության նույն ռիսկայնության այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը կազմում է 11% տարեկան:	վարկային կազմակերպությունը կգնի պարտատոմսը, քանի որ վերջինս ապահովում է ավելի բարձր եկամտաբերություն քան այլընտրանքային ներդրումները,
			վարկային կազմակերպությունը չի գնի պարտատոմսը, քանի որ վերջինս ապահովում է ավելի ցածր եկամտաբերություն քան այլընտրանքային ներդրումները,
			վարկային կազմակերպությունը նախապատվություն չի ունենա պարտատոմսը գնելու համար, քանի որ վերջինս ապահովում է նույն եկամտաբերությունը ինչ-որ այլընտրանքային ներդրումները,
			ինֆորմացիան բավարար չէ հարցին պատասխանելու համար
	32	Դյուրացիայի մեթոդը օգտագործվում է գնահատելու վարկային կազմակերպության	տոկոսադրույքի ռիսկը,
			վարկային ռիսկը,
			արտարժույթի ռիսկը,
			բոլոր պատասխանները ճիշտ են:
	33	կազմակերպության (ա) տոկոսադրույքի ռիսկը, (բ) համբավի ռիսկ, (գ) արտարժույթի ռիսկը:	միայն (ա)
			միայն (ա) և (գ)
			միայն (գ)
			(ա) և (բ) և (գ):
	34	"Ա" վարկային կազմակերպության և "Բ վարկային կազմակերպության եկամտաբերությունն ըստ ակտիվների հավասար են, չնայած "Ա" վարկային կազմակերպության ակտիվներ/կապիտալ հարաբերակցությունը գերազանցում է "Բ" վարկային կազմակերպության համանման ցուցանիշին: Դա նշանակում է, որ	"Ա" վարկային կազմակերպության եկամտաբերությունը ըստ կապիտալի կլինի նույնը ինչ "Բ"-ինը,
			"Ա" վարկային կազմակերպության եկամտաբերությունը ըստ կապիտալի կլինի ավելի ցածր քան "Բ"-ինը,
			"Ա" վարկային կազմակերպության եկամտաբերությունը ըստ կապիտալի կլինի ավելի բարձր քան "Բ"-ինը,
			ինֆորմացիան բավարար չէ հարցին պատասխանելու համար:

	35	"Ա" վարկային կազմակերպության եկամտաբերություններն ըստ ակտիվների ավելի մեծ է, քան "Բ"-ինը, չնայած այդ վարկային կազմակերպությունների ակտիվներ/կապիտալ հարաբերակցությունները հավասար են: Դա նշանակում է, որ	"Ա" վարկային կազմակերպության եկամտաբերությունը ըստ կապիտալի կլինի նույնը ինչ-որ "Բ"-ինը
			"Ա"վարկային կազմակերպության եկամտաբերությունը ըստ կապիտալի կլինի ավելի բարձր քան "Բ"-ինը
			"Ա" վարկային կազմակերպության եկամտաբերությունը ըստ կապիտալի կլինի ավելի ցածր քան "Բ"-ինը
			ինֆորմացիան բավարար չէ հարցին պատասխանելու համար:
	36	"Ա" վարկային կազմակերպության եկամտաբերություններն ըստ ակտիվների ավելի փոքր է, քան "Բ"-ինը, չնայած այդ վարկային կազմակերպությունների ակտիվներ/կապիտալ հարաբերակցությունները հավասար են: Դա նշանակում է, որ	"Ա" վարկային կազմակերպության եկամտաբերությունը ըստ կապիտալի կլինի նույնը ինչ-որ "Բ"-ինը,
			"Ա"վարկային կազմակերպության եկամտաբերությունը ըստ կապիտալի կլինի ավելի ցածր քան "Բ"-ինը,
			"Ա"վարկային կազմակերպության եկամտաբերությունն ըստ կապիտալի կլինի ավելի բարձր քան "Բ"-ինը,
			ինֆորմացիան բավարար չէ հարցին պատասխանելու համար:
	37	Եթե վարկային կազմակերպությունը կանխատեսում է, որ տոկոսադրույքներն անկում կապրեն, ապա ավելի հավանական է, որ շահույթ ստանալու ակնկալիքով նա այդ պահին կիրականացնի	ֆիքսված տոկոսադրույքներով պարտատոմսերի առք,
			ֆիքսված տոկոսադրույքներով պարտատոմսերի վաճառք,
			փոփոխվող տոկոսադրույքներով պարտատոմսերը կպահի,
			Ճիշտ պատասխանը նշված չէ:
	38	Եթե վարկային կազմակերպությունը կանխատեսում է, որ տոկոսադրույքները կաճեն, ապա ավելի հավանական է, որ շահույթ ստանալու ակնկալիքով նա կիրականացնի	ֆիքսված տոկոսադրույքներով պարտատոմսերի առք և փոփոխվող տոկոսադրույներով պարտատոմսերի վաճառք,
			ֆիքսված տոկոսադրույքներով պարտատոմսերի վաճառք և փոփոխվող տոկոսադրույքներով պարտատոմսերի առք,
			փոփոխվող տոկոսադրույնքերով պարտատոմսերի վաճառք իսկ ֆիքսված տոկոսադրույքներով պարտատոմսերը կպահի
			Ճիշտ պատասխանը նշված չէ:
	39	Եթե վարկային կազմակերպությունն ունի տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և արտավորությունների բացասական ճեղքվածք, ապա եկամտաբերության կորը դրական թեքություն ունենալու դեպքում /upward slopping/ հավանական է, որ մնացած հավասար պայմաններում վարկային կազմակերպությունը	կկրի կորուստներ, քանի որ սպասվում է տոկոսադրույքների անկում,
			կկրի կորուստներ, քանի որ սպասվում է տոկոսադրույքների աճ,
			կստանա օգուտներ, քանի որ սպասվում է տոկոսադրույքների անկում,
			կստանա օգուտներ, քանի որ սպասվում է տոկոսադրույքների աճ:
	40	Եթե վարկային կազմակերպությունն ունի տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների բացասական ճեղքվածք, ապա եկամտաբերության կորը բացասական թեքություն ունենալու դեպքում դեպքում /downward slopping/ հավանական է, որ այլ հավասար պայմաններում վարկային կազմակերպությունը	կկրի կորուստներ, քանի որ սպասվում է տոկոսադրույքների անկում,
			կկրի կորուստներ, քանի որ սպասվում է տոկոսադրույքների աճ,
			կստանա օգուտներ, քանի որ սպասվում է տոկոսադրույքների անկում,
			կստանա օգուտներ, քանի որ սպասվում է տոկոսադրույքների աճ:
	41	Արտարժույթի գնման Call օպցիոն ձեռքբերելու դեպքում	պարտավորվում է ձեռք բերել արտարժույթ
			օպցիոն ձեռք բերողը իրավունք ունի վաճառել արտարժույթ
			օպցիոն ձեռք բերողը պարտավորվում է վաճառել արտարժույթ
			օպցիոն ձեռք բերողը իրավունք ունի գնել արտարժույթ
	42	Արտարժույթի վաճառքի (Put) օպցիոն ձեռք բերելու դեպքում	օպցիոն ձեռք բերողը պարտավորվում է գնել արտարժույթ
			օպցիոն ձեռք բերողը իրավունք ունի վաճառել արտարժույթ
			օպցիոն ձեռք բերողը պարտավորվում է վաճառել արտարժույթ
			օպցիոն ձեռք բերողը իրավունք ունի գնել արտարժույթ

	43	Այլ հավասար պայմաններում նշված գործոններից որի՞ առկայության դեպքում վարկային կազմակերպության զուտ ոչ տոկոսային եկամուտները կնվազեն	ավանդների ավելացում
			վարկային պորտֆելի ավելացում
			ամորտիզացիոն մասհանումների ավելացում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	44	Այլ հավասար պայմաններում նշված գործոններից որի՞ առկայության դեպքում վարկային կազմակերպության զուտ տոկոսային եկամուտները կնվազեն	ավանդների ավելացում
			ամորտիզացիոն մասհանումների ավելացում
			ստացված միջնորդավճարների նվազում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	45	Այլ հավասար պայմաններում վարկային կազմակերպության հիմնական միջոցի ամորտիզացման արդյունքում	կնվազեն վարկային կազմակերպության ակտիվները
			կաճեն վարկային կազմակերպության տոկոսային եկամուտները
			կաճեն վարկային կազմակերպության պարտավորությունները
			կաճեն վարկային կազմակերպության տոկոսային ծախսերը
	46	Տոկոսադրույքների անկման դեպքում որ վարկային կազմակերպության արժեթղթերի պորտֆելը առավել կարժեքավորվի, եթե Ա վարկային կազմակերպության պորտֆելի դյուրացիան ավելի մեծ է, քան Բ-ինը	Ա վարկային կազմակերպության
			Բ վարկային կազմակերպության
			տոկոսադրույքների փոփոխությունը ոչ մի ազդեցություն չի
			ճիշտ պատասխանը նշված չէ
	47	Տոկոսադրույքների աճի դեպքում որ վարկային կազմակերպության արժեթղթերի պորտֆելը առավել կարժեզրկվի, եթե Ա վարկային կազմակերպության պորտֆելի դյուրացիան ավելի մեծ է, քան Բ-ինը	Ա վարկային կազմակերպության
			Բ վարկային կազմակերպության
			տոկոսադրույքների փոփոխությունը ոչ մի ազդեցություն չի
			ճիշտ պատասխանը նշված չէ
	48	Արտարժութային ֆյուչերսը	կնքվում է միայն բորսայում
			կնքվում է միայն ոչ ռեզիդենտների միջև
			կարող է չեղյալ համարվել միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ
			բոլոր պնդումները ճիշտ են
	49	Երբ ֆինանսական միջոցները ձեռք են բերվում անմիջականորեն փոխատուներից, ապա ֆինանսավորումը համարվում է	անուղղակի փոխատվություն
			միջնորդավորված ֆինանսավորում
			ուղղակի ֆինանսավորում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	50	Ֆինանսական միջնորդություն չի համարվում	կազմակերպությունն ավանդներ է ընդունում տնտեսության տարբեր սուբյեկտներից և վարկեր է տրամադրում
			կազմակերպությունը ներգրավում է փոխառություններ և տրամադրում վարկեր ու փոխառություններ
			լայն սպառման ապրանքների արտադրությունը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	51	Դյուրացիան իրենից ներկայացնում է	միջին կշռված ժամկետայնություն
			միջին կշռված եկամտաբերություն
			վարկային պորտֆելի մեծությունը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	52	Ի՞նչ նպատակով են օգտագործվում ընկերության շահութաբերության ցուցանիշները	վարկունակության գնահատման
			արտարժութային ռիսկի գնահատման
			իրացվելիության գնահատման
			ճիշտ պատասխանը նշված չէ

	53	Վարկային կազմակերպության շահութաբերության ցուցանիշ է հանդիսանում	վարկերի գծով պահուստաֆոնդի հաշվարկային մեծության հարաբերությունը վարկային ներդրումներին
			վարկերի ու դեբիտորական պարտավորությունների հարաբերությունը ժամկետային պարտավորություններին
			զուտ շահույթի հարաբերությունը վարկային կազմակերպության կապիտալին
			վարկերի գծով հետհաշվեկշռից վերադարձների հարաբերությունը դասակարգված վարկերի մեծությանը
	54	Այլ հավասար պայմաններում նշվածներից ո՞րն է վկայում կազմակերպության շահութաբերության՝ զուտ շահույթ հարկումից հետո/միջին ընդհանուր ակտիվներ ցուցանիշի նվազման մասին	եռամսյակային շահաբաժիններ բաշխելը
			արտաքին աուդիտ անցկացնելը
			շահութահարկի դրույքաչափի ավելացումը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	55	Պահուստաֆոնդին կատարված մասհանումների հարաբերությունը վարկերին ու դեբիտորական պարտքերին (հատկացումներ պահուստաֆոնդին/ վարկեր և դեբիտորական պարտքեր)՝ ֆինանսական ցուցանիշը ցույց է տալիս	վարկերի ու դեբիտորական պարտքերի շահութաբերության մակարդակը
			վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով ստեղծած պահուստին կատարվող մեծությունների բացարձակ մեծությունը
			խնդրահարույց վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերի և դեբիտորական
			ճիշտ պատասխանը նշված չէ
	56	Վարկային կազմակերպության ակտիվները ցույց են տալիս	թե որտեղի՞ց են գոյացել կազմակերպության միջոցները
			թե որտե՞ղ են տեղաբաշխվել կազմակերպության միջոցները
			կանոնադրական հիմնադրամի ձևավորման աղբյուրները
			ճիշտ պատասխանը բացակայում է
	57	Եթե հաշվապահական հաշվեկշռի կազմման արդյունքում վարկային կազմակերպության ակտիվները գերազանցում են պարտավորությունների և սեփական կապիտալի հանրագումարը, ապա վարկային կազմակերպությունը	ճանաչվում է անվճարունակ
			պարտավոր է թողարկել լրացուցիչ արտոնյալ բաժնետոմսեր
			պարտավոր է ներգրավել ստորադաս փոխառություններ կամ թողարկել լրացուցիչ արտոնյալ բաժնետոմսեր
			ճիշտ պատասխանը բացակայում է
	58	Այլ հավասար պայմաններում նշվածներից որը՞ կարող է պատճառ հանդիսանալ վարկային կազմակերպության տոկոսային եկամուտների նվազման	վարկային կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի դրույքաչափի բարձրացումը
			շահութահարկի դրույքաչափի ավելացումը
			ամորտիզացիոն մասհանումների ավելացում
			ճիշտ պատասխանը բացակայում է
	59	«Ա» վարկային կազմակերպության եկամտաբերությունն ըստ կապիտալի գերազանցում է «Բ» վարկային կազմակերպության համանման ցուցանիշին: Եթե «Ա» վարկային կազմակերպության եկամտաբերությունը ըստ ակտիվների ցուցանիշը գերազանցում է «Բ» վարկային կազմակերպության համանման ցուցանիշին, դա նշանակում է, որ	«Ա» վարկային կազմակերպության ակտիվներ/կապիտալ ցուցանիշը կլինի նույնը, ինչ «Բ»-ինը
			«Ա» վարկային կազմակերպության ակտիվներ/կապիտալ ցուցանիշը կլինի ավելի ցածր
			«Ա» վարկային կազմակերպության ակտիվներ/կապիտալ ցուցանիշը կլինի ավելի բարձր քան «Բ»-ինը
			տեղեկությունը բավարար չէ հարցին ճշգրիտ պատասխանելու համար
	60	Օպցիոնի գնման դեպքում, օպցիոնի գնորդը պոտենցիալ ձևով կարող է.	ստանալ ինչպես անսահմանափակ օգուտներ, այնպես էլ անսահմանափակ վնասներ,
			ստանալ անսահմանափակ օգուտներ այն դեպքում, երբ վնասները սահմանափակված են

			կրել անսահմանափակ վնասներ այն դեպքում, երբ օգուտները սահմանափակված են,
			ստանալ սահմանափակ օգուտներ և սահմանափակ վնասներ:
	61	Նշվածներից որը՞ կարող է վկայել վարկային կազմակերպության եկամտաբերության նվազման մասին.	վարկային կազմակերպության կողմից բանկերում ներդրված միջնաժամկետ ավանդների աճն ի հաշիվ բանկերում ընթացիկ հաշվի նվազման,
			վարկային կազմակերպության կարճաժամկետ արժեթղթերի պորտֆելի փոխարինումը երկարաժամկետ արժեթղթերի պորտֆելով,
			վարկային կազմակերպության բարձր իրացվելի միջոցների աճն ի հաշիվ վարկային ներդրումների նվազման,
			նշվածներից բոլորն էլ վկայում են վարկային կազմակերպության եկամտաբերության նվազման վերաբերյալ:
	62	Նշված ֆինանսական գործակիցներից որի՞ միջոցով կարելի է բնորոշել վարկային կազմակերպության վարկային պարտֆելի որակը.	365 օր մարման ժամկետ ունեցող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկային ներդրումներին,
			զուտ շահույթ հարաբերված միջին ընդհանուր ակտիվներ,
			զուտ շահույթ հարաբերված միջին ընդհանուր կապիտալ,
			վարկերի գծով պահուստաֆոնդի հաշվարկային մեծություն հարաբերած վարկային ներդրումներին:
	63	Վարկային կազմակերպությունների շահութաբերության ցուցանիշ է հանդիսանում.	վարկերի գծով պահուստաֆոնդի հաշվարկային մեծության հարաբերությունը վարկային ներդրումներին,
			վարկերի և դեբիտորական պարտքերի հարաբերությունը ժամկետային պարտավորություններին,
			զուտ շահույթի հարաբերությունը բաժնետոմսերի քանակին,
			վարկերի գծով հետհաշվեկշռից վերադարձների հարաբերությունը դասակարգված վարկերին:
	64	Այլ հավասար պայմաններում նշվածներից որը՞ չի վկայում վարկային կազմակերպության շահութաբերության՝ զուտ շահույթ հարկումից հետո / միջին ընդհանուր ակտիվներ, ցուցանիշի նվազման վերաբերյալ	տարեկան արդյունքներով շահաբաժիններ բաշխելը,
			տոկոսային եկամուտների նվազումը,
			գործառնական ծախսերի ավելացումը,
			շահութահարկի դրույքաչափի ավելացումը:
	65	Պահուստաֆոնդին կատարված մասհանումների հարաբերությունը վարկերին և դեբիտորական պարտքերին (հատկացումներ պահուստաֆոնդին/վարկեր և դեբիտորական պարտքեր)՝ ֆինանսական ցուցանիշը ցույց է տալիս	վարկային կազմակերպության վարկերի և դեբիտորական պարտքերի շահութաբերության մակարդակը,
			վարկերի և դեբիտորական պարտքերի գծով ստեղծված պահուստին կատարվող մասհանումների մեծությունը,
			վարկային պորտֆելի որակը
			անհուսալի դասակարգված վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերի և դեբիտորկան պարտքերի մեջ:
	66	Նշված ֆինանսական գործակիցներից որի՞ միջոցով հնարավոր չէ բնորոշել վարկային կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը.	կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին,
			կարճաժամկետ ակտիվների հարաբերությունը ընդհանուր ակտիվներին,
			երկարաժամկետ վարկերի գծով ձևավորված պահուստաֆոնդին կատարված մասհանումների հարաբերությունը ընդհանուր վարկային ներդրումներին,
			365 օր և ավել մարման ժամկետ ունեցող ակտիվների հարաբերությունը 365 օր և ավելի մարման ժամկետ ունեցող
	67	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	ֆորվարդը բորսայական գործիք է,

			ֆորվարդը պահանջում է երաշխիքային գումարի ներդրում,
			ֆյուչերսի հիմքում ընկած կարող է լինել միայն արտարժույթ,
			բոլոր պնդումները սխալ են:
	68	Նշված պնդումներից ո՞րն է սխալ.	ֆորվարդի դեպքում առկա է որևէ կողմի չվճարելու ռիսկը,
			ֆորվարդը կարող է կնքվել բորսայի՝ միայն աշխատանքային
			ֆորվարդային պայմանագիրը ըստ պահանջվող հատկանիշների կազմված պայմանագիր է,
			ֆյուչերս պայմանագիրը պահանջում է երաշխիքային գումարի ներդրում:
	69	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ	ֆյուչերսը բորսայական գործիք է, իսկ ֆորվարդը՝ ոչ,
			ֆորվարդը պահանջում է երաշխիքային գումարի ներդրում, իսկ ֆյուչերսը՝ ոչ,
			ֆորվարդի հիմքում ընկած ակտիվը կարող է լինել ցանկացած ակտիվ, իսկ ֆյուչերսինը՝ միայն արտարժույթ,
			բոլոր պնդումները ճիշտ են:
	70	Նշված պնդումներից ո՞րն է սխալ.	ֆյուչերսը կարող է կնքվել բորսայի՝ միայն աշխատանքային ժամերին, իսկ ֆորվարդը՝ օրվա ընթացքում ցանկացած պահին,
			ֆյուչերսային պայմանագրի հիմքում ընկած ակտիվների մեծությունը որոշվում է լոտերի միջոցով կամ մեծությամբ, իսկ ֆորվարդայինի դեպքում՝ ըստ պայմանագրի կողմերի համաձայնության,
			ֆորվարդի դեպքում առկա է գործընկերոջ կողմից չվճարելու ռիսկ, իսկ ֆյուչերսի դեպքում՝ ոչ,
			ֆորվարդը պահանջում է երաշխիքային գումարի ներդրում, իսկ ֆյուչերսը՝ ոչ:
	71	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	գնման օպցիոնը (call option), ակտիվը որոշակի գնով ապագա ամսաթվին կամ նախքան այդ ամսաթիվը վաճառելու պարտավորությունն է,
			գնման օպցիոնը (call option), ակտիվը որոշակի գնով ապագա ամսաթվին կամ նախքան այդ ամսաթիվը գնելու իրավունքն է՝ օպցիոն գնողի համար,
			վաճառքի օպցիոնի (put option) դեպքում օպցիոն վաճառողը ձեռք է բերում ապագա ամսաթվին կամ նախքան այդ ամսաթիվը ակտիվը որոշակի գնով գնելու կամ վաճառելու իրավունք,
			բոլոր պնդումները սխալ են:
	72	Օպցիոնի վաճառքի դեպքում, օպցիոն վաճառողը պոտենցիալ ձևով կարող է.	ստանալ ինչպես անսահմանափակ օգուտներ, այնպես էլ անսահմանափակ վնասներ,
			ստանալ անսահմանափակ օգուտներ այն դեպքում, երբ վնասները սահմանափակված են,
			կրել անսահմանափակ վնասներ այն դեպքում, երբ օգուտները սահմանափակված են,
			ստանալ սահմանափակ օգուտներ և սահմանափակ վնասներ:
	73	Վարկային կազմակերպությունն իր հաշվեկշռային արտարժութային երկար դիրքով պայմանավորված ռիսկը մեղմելու համար կարող է	կնքել արտարժույթի վաճառքի ֆորվարդային գործարք,
			կնքել արտարժույթի գնման ֆորվարդային գործարք,
			գնել արտարժույթի գնման օպցիոն,
			կնքել նշված բոլոր գործարքները:
	74	Վարկային կազմակերպության ակտիվները ցույց են տալիս.	թե որտեղից են գոյացել վարկային կազմակերպության միջոցները,
			որտեղ են տեղաբաշխվել վարկային կազմակերպության միջոցները,
			թե որտեղից է ձևավորվել վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամը,
			թե որտեղից են գոյացել և որտեղ են տեղաբաշխվել վարկային կազմակերպության միջոցները:

	75	Նշվածներից որը՞ չի համարվում վարկային կազմակերպության ակտիվային	ռեպո գործառնությունը՝ արժեթղթերի գնման դեպքում,
			ռեպո գործառնությունը՝ արժեթղթերի վաճառքի դեպքում,
			արժեթղթերում ներդրումների իրականացումը,
			Ֆակտորինգային գործառնությունը:
	76	Եթե հաշվապահական հաշվեկշռի կազմման արդյունքում վարկային կազմակերպության ակտիվները գերազանցում են վարկային կազմակերպության պարտավորությունների և կապիտալի հանրագումարը, ապա վարկային կազմակերպությունը	ճանաչվում է անվճարունակ,
			պարտավոր է թողարկել լրացուցիչ արտոնյալ բաժնետոմսեր,
			պարտավոր է ներգրավել երկարաժամկետ ստորադաս փոխառություններ,
			պետք է ճշտի իր հաշվապահական հաշվեկշիռը՝ այն համեմատելով հաշվապահական գրանցամատյանների տվյալների հետ
	77	Այլ հավասար պայմաններում, նշվածներից որը՞ կարող է պատճառ հանդիսանալ վարկային կազմակերպության զուտ տոկոսային եկամուտների նվազման համար.	հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների ավելացումը,
			վերավաճառքի համար նախատեսված արժեթղթերի բացասական վերագնահատումը,
			վարկային կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի դրույքաչափի բարձրացումը,
			ճիշտ պատասխան նշված չէ:
	78	ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ (AMD/USD) ժամանակաշրջանի սկզբի նկատմամբ արժեքավորվել է 50 դրամով և կազմել 300 դրամ 1 դոլարի դիմաց: Նույն ժամանակահատվածում ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ (USD/AMD)	արժեքավորվել է 16.7 տոկոսով,
			արժեզրկվել է 16.7 տոկոսով,
			արժեքավորվել է 20.0 տոկոսով,
			արժեզրկվել է 20.0 տոկոսով:
	79	ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի նկատմամբ արժեզրկվել է 50 դրամով և կազմել 500 դրամ 1 դոլարի դիմաց: Նույն ժամանակահատվածում ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ	արժեքավորվել է 9.0 տոկոսով,
			արժեզրկվել է 9.0 տոկոսով,
			արժեքավորվել է 10.0 տոկոսով,
			արժեզրկվել է 10.0 տոկոսով:
	80	1 կանադական դոլարը (USD/CAD) գնվում է 0.70 և վաճառվում է 0.75 ԱՄՆ դոլարով: CAD/USD՝ ԱՄՆ դոլարի համապատասխանաբար առքի և վաճառքի փոխարժեքները արտահայտված կանադական դոլարով կկազմեն	070 - 0.75,
			0.75 - 0.70,
			1.33-1.43,
			1.23 - 1.33:
Հարկեր	1	ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն հարկվող շահույթի մեծությունը որոշելիս եկամուտ չեն համարվում.	անվավեր ճանաչված գործարքներից ստացվող եկամուտները
			պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից ստացվող եկամուտները
			ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները և ծառայությունները
			ճիշտ տարբերակը նշված չէ
	2	ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն հարկվող շահույթի մեծությունը որոշելիս եկամուտ չեն համարվում.	շահաբաժինները,
			ապրանքների, արտադրանքի իրացումից ստացվող հասույթը,
			ապահովագրական հատուցումները,
			շահութահարկ վճարողի բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը:
	3	ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ են համարվում.	արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքը

			ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները և ծառայությունները
			մասնակիցների կողմից հարկատուի կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները
			հարկատուի ստացած ապահովագրական հատուցումները
	4	ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար ծախս չեն համարվում	այլ հարկ վճարողի սեփական կապիտալում կատարված ներդրումները
			ամորտիզացիոն մասհանումները
			չփոխհատուցվող /չհաշվանցվող/ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները
			հարկատուի կողմից պատճառված վնասի հատուցումը
	5	ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար ծախս չեն համարվում	այլ հարկ վճարողի սեփական կապիտալում կատարված ներդրումները
			սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով
			շահութահարկ վճարողի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	6	ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ են համարվում.	ապահովագրական հատուցումները
			տույժերի, տուգանքների և գույքային այլ պատժամիջոցների տեսքով եկամուտները
			առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվները
			բոլոր պատասխանները ճիշտ են
	7	ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար ծախս չեն համարվում	այլ հարկ վճարողի սեփական կապիտալում կատարված ներդրումները
			սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով
			ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվների և ծառայությունների գծով ծախսը, այլ նվազեցումը կամ առաջացած կորուստը
			նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են
	8	- ծառայությունների իրացումից հասույթ՝ 1000 միավոր - հիմնական միջոցների իրացումից հասույթ՝ 800 միավոր - հիմնական միջոցի իրացման հետ կապված ծախսեր 680 միավոր - արտարժույթի առքուվաճառքից եկամուտներ՝ 350 միավոր - արտարժութային ակտիվների վերագնահատումից դրական արդյունք՝ 70 միավոր - հիմնական միջոցի վերագնահատման դրական արդյունք՝ 150 միավոր - աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարումներ՝ 200 միավոր. - հիմնական միջոցի ընթացիկ վերանորոգում՝ 90 միավոր - գործուղման ծախսեր (օրենսդրությամբ սահմանված չափը չգերազանցող)՝ 80 միավոր:	1320 միավոր
			1250 միավոր
			1100 միավոր
			1180 միավոր:
	9	ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար ծախս չեն համարվում՝	ապահովագրական վճարները
			աշխատողների հավաքագրման ծախսերը

			ֆակտորինգային, հավատարմագրային (լիազորագրային) գործառնությունների ծախսերը
			սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով
	10	Վարկային կազմակերպության վերաբերյալ ունենք հետևյալ տվյալները. - հիմնական միջոցի գործառնական վարձակալությունից ստացված եկամուտներ՝ 600 միավոր - հիմնական միջոցի վերագնահատումից օգուտներ՝ 100 միավոր - արտարժույթի առք ու վաճառքից ստացված օգուտներ՝ 300 միավոր - հիմնական միջոցի իրացումից ստացված օգուտներ՝ 400 միավոր - հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախս՝ 70 միավոր - վարկերի և այլ փոխատվություններից ստացված տոկոսներ՝ 270 միավոր - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ՝ 50 միավոր Վարկային կազմակերպության շահութահարկի գումարը կկազմի.	310 միավոր,
			300 միավոր,
			290 միավոր,
			320 միավոր:
	11	Նշել ճիշտ պատասխանը: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, հարկ վճարողն իրավունք ունի՝ (ա) ինքնուրույն կամ իր լիազորած ներկայացուցչի միջոցով հարկային մարմնում ներկայացնելու իր շահերը (բ) հարկային մարմին ներկայացնել բացատրություններ և պարզաբանումներ հարկերի և վճարների հաշվարկման ու վճարման, ինչպես նաև հարկային հսկողության արդյունքների վերաբերյալ (գ) օգտվելու սույն Օրենսգրքով և ՀՀ օրենքներով սահմանած հարկային արտոնություններից	(ա) և (գ)
			(ա) և (բ)
			(ա), (բ) և (գ)
			միայն (բ)
	12	Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.075 տոկոսի չափով
			նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են
			հարկ վճարողն իրավունք ունի ծանոթանալու հարկային հսկողության արդյունքում կազմվող ակտերին, արձանագրություններին և դրանց նախագծերին, տեղեկանքներին և վարչական ակտերին
			հարկ վճարողն իրավունք ունի հարկային հսկողության ցանկացած փուլում մասնակից դարձնելու մասնագետների, փորձագետների, աուդիտորների և (կամ) փաստաբանների
	13	Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, վարկային կազմակերպությունն իրեն պատկանող շինությունների համար անշարժ գույքի հարկի չափը հաշվարկելիս հիմք է ընդունում դրանց.	մնացորդային արժեքը
			կադաստրային արժեքը
			սկզբնական արժեքը
			հաշվեկշռային արժեքը
	15	Ներքոհիշյալ ո՞ր խախտումը վարկային կազմակերպությունների համար կարող է առաջացնել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված հարկային պատասխանատվություն.	հարկերը ժամանակին չվճարելը
			հարկի գումարը պակաս ցույց տալը
			հաշվապահական հաշվառում չվարելը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	16	Ներքոհիշյալ ո՞ր խախտումը վարկային կազմակերպությունների համար չի կարող առաջացնել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված հարկային պատասխանատվություն.	հարկերը ժամանակին չվճարելը
			հարկի գումարը պակաս ցույց տալը
			տնտեսական նորմատիվները խախտելը

			հաշվապահական հաշվառում չվարելը
	17	- միջնորդային ծառայությունների արդյունքում ստացված օգուտներ 900 միավոր, - վարկերի և այլ փոխատվություններից ստացված տոկոսներ՝ 300 միավոր, - վարչական ծախսեր 150 միավոր - հիմնական միջոցի վերագնահատումից օգուտներ՝ 300 միավոր, - աշխատավարձի գծով ծախսեր 350 միավոր, - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ՝ 200 միավոր, - հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ վերանորոգման գծով ծախս՝ 70 միավոր, - գովազդային ծախսեր՝ 30 միավոր (օրենսդրությամբ սահմանված չափը չգերազանցող), - գործուղման ծախսեր՝ 80 միավոր (որից 10 միավորը՝ գերազանցում է օրենսդրությամբ սահմանված չափը): Կազմակերպության շահութահարկի գումարը կկազմի	104 միավոր
			102 միավոր
			106 միավոր
			98 միավոր:
	18	Նշեք սխալ պատասխանը. ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ են համարվում.	կոմիսիոն վարձատրությունները, որոնք ստացվել են վերաապահովագրության փոխանցման պայմանագրերից
			պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից ստացվող եկամուտները
			ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները
			հարկատուի կողմից ստացված ապահովագրական
	19	ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար ծախս չեն համարվում՝	հարկատուի կողմից վճարված ապահովագրավճարները
			ապահովագրական այլ ծառայությունների համար հարկատուի կողմից կատարված վճարները
			ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները
			ճիշտ տարբերակը նշված չէ
	20	Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, Ավելացված արժեքի հարկից ազատվելը, դա	ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է
			զրոյական դրույքաչափով հարկումն է
			հարկային հաշիվների դուրս գրումն է
			20 %-ի փոխարեն 16.67 % հաշվարկային դրույքաչափով հարկումն է
	21	Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, Ավելացված արժեքի հարկից չեն ազատվում վարկային կազմակերպության կողմից իրականացվող	վարկավորման գործընթացի հետ կապված քաղվածքների տրամադրումը
			կանխիկի տրամադրման ծառայությունների մատուցումը
			ֆինանսական վարձակալության (լիզինգի) ծառայության մատուցումը, եթե պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին
			վարկերի տրամադրումը
	22	Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, նշվածներից որո՞նք են համարվում հարկային արտոնությունների տեսակներ.	հարկման բազայի նվազեցումը
			հարկի նվազեցումը
			հարկման օբյեկտի նվազեցումը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	23	Նշել սխալ պատասխանը. Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, վարկային կազմակերպությունը պարտավոր է.	սահմանված կարգով և ժամկետներում ինքնուրույն հաշվարկել և կատարել իր հարկային պարտավորությունները

			վարել սույն Օրենսգրքով և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված հաշվառում, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև հաշվապահական հաշվառում
			ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը
			ստուգումների ժամանակ կազմել միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ
	24	Նշեք սխալ տարբերակը. Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, վարկային կազմակերպությունն իրավունք ունի	հարկային մարմին ներկայացնել բացատրություններ և պարզաբանումներ հարկերի և վճարների հաշվարկման ու վճարման, ինչպես նաև հարկային հսկողության արդյունքների վերաբերյալ
			ծանոթանալ հարկային հսկողության արդյունքում կազմվող ակտերին
			օգտվելու սույն Օրենսգրքով և ՀՀ օրենքներով սահմանված հարկային արտոնություններից
			լիցենզիա ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում հաշվառման կանգնել հարկային տեսչությունում
	25	Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, հարկային արտոնություն չի հանդիսանում.	հարկի վճարման ժամկետի հետաձգումը,
			հարկի դրույքաչափի նվազեցումը,
			հարկի նվազեցումը,
			հաշվարկված հարկային պարտավորությունների սահմանված չափից ավել վճարված գումարների վերադարձումը:
	26	Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, Ավելացված արժեքի համար կիրառվում է.	20 տոկոս դրույքաչափը
			16.67 տոկոս դրույքաչափը
			0 տոկոս դրույքաչափը
			բոլոր տարբերակները ճիշտ են:
Հաշվապահություն	1	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ նոր ստեղծված կազմակերպության համար առաջին հաշվետու տարի է համարվում.	տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը
			պետական գրանցման օրվանից մինչև հաջորդ տարվա դեկտեմբերի 31-ը
			պետական գրանցման օրվանից ներառյալ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը
			ՀՀ ԿԲ-ի կողմից նախնական հավանություն ստանալու ամսաթվից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը
	2	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատու է	հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար
			հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար
			հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվությունները ժամանակին պատրաստելու համար
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	3	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը	իրականացնում է ֆինանսական հաշվետվությունների ժամանակին պատրաստումը
			պատասխանատու է հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու և ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար
			իրականացնում է կազմակերպության հաշվապահական հաշվառում վարումը
			ճիշտ պատասխանը նշված չէ

	4	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում	գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ և պատասխանատվություն է կրում նման գործառնությունների իրականացման հետևանքների համար
			գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, և նման գործառնությունների իրականացման հետևանքների համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարը
			գլխավոր հաշվապահը չպետք է իրականացնի այնպիսի տնտեսական գործառնություններ, որոնց հետ կապված առկա են տարաձայնություններ կազմակերպության ղեկավարի հետ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	5	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշվում	գլխավոր հաշվապահի կողմից
			հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու հաշվապահական ծառայության ղեկավարի կողմից
			կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից
			հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից
	6	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը	սահմանում է կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, եթե այդ իրավունքը օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված չէ կառավարման այլ մարմնի
			պատասխանատու է հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար
			պատասխանատու է հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	7	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ ֆինանսական հաշվետվությունները ստորագրվում են	միայն կազմակերպության ղեկավարի կողմից
			կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից
			կազմակերպության աուդիտոն իրականացրած աուդիտորական խմբի ղեկավարի կողմից
			միայն գլխավոր հաշվապահի կողմից, որը որակավորված է հաշվապահական հաշվառումը կարգավորող մարմնի կողմից
	8	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները ներառում են.	հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները
			ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները
			ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների մեկնաբանությունների կոմիտեի մեկնաբանությունները
			բոլոր պատասխանները ճիշտ են
	9	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառումը վարվում է՝	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների պահպանմամբ
			կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հիման վրա
			անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև նրա գործունեության դադարեցման գրանցման համար դիմումը պետական ռեգիստր մուտքագրելու օրը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	10	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ ներքոնշված սահմանումներից ո՞րն է ճիշտ՝	անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման տվյալները պետք է

			անալիտիկ (վերլուծական) հաշվառման տվյալները պետք է գերազանցեն սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման տվյալներին
			անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման տվյալները չեն կարող
			ճիշտ պատասխանը նշված չէ
	11	«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվապահական հաշվառման կարգավորումը վարկային կազմակերպություններում իրականացնում է	ՀՀ կենտրոնական բանկը՝ ֆինանսների նախարարության հետ համատեղ
			ՀՀ կենտրոնական բանկը
			Բանկերի միությունը՝ ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ
			Ֆինանսների նախարարությունը
	12	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նշել սխալ պատասխանը.	բոլոր կազմակերպությունները (ներառյալ՝ անվճարունակության կամ լուծարման գործընթացում գտնվողները) պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում
			կազմակերպության հաշվապահական հաշվառումը վարվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների պահպանմամբ
			բոլոր կազմակերպությունները (բացառությամբ՝ անվճարունակության կամ լուծարման գործընթացում գտնվողները) պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում
			կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու և ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար
	13	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նշել սխալ պատասխանը. ա) վարկային կազմակերպություններում հաշվապահական հաշվառումը վարվում է կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հիման վրա բ) վարկային կազմակերպություններում հաշվապահական հաշվառումը վարվում է անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև նրա գործունեության դադարեցման գրանցման համար դիմումը պետական ռեգիստր մուտքագրելու օրը գ) անվճարունակության կամ լուծարման գործընթացում գտնվող կազմակերպությունները հաշվապահական հաշվառում չեն վարում	միայն ա) և բ) տարբերակները
			միայն բ) և գ) տարբերակները
			միայն գ) տարբերակը
			միայն բ) տարբերակը
	14	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերում և էլեկտրոնային կրիչներում առկա տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, կազմակերպության կողմից պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան	մեկ տարի
			երկու տարի
			հինգ տարի
			տաս տարի
	15	Ընտրել ճիշտ պատասխանը. Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի	հաշվետու տարին տվյալ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանն է
			հաշվապահական հաշվառումը ՀՀ տարածքում վարվում է անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև նրա գործունեության դադարեցման գրանցման համար դիմումը պետական ռեգիստր մուտքագրելու օրը

			հաշվապահական հաշվառումը վարվում է կրկնակի գրանցման եղանակով
			բոլոր պատասխանները էլ ճիշտ են
	16	Եթե կազմակերպությունը պետական գրանցում է ստացել 2006թ. դեկտեմբերի 1-ին, ապա առաջին տարվա համար հաշվետու տարի է համարվում	2006թ. հունվարի 1-ից 2006թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանը
			2006թ. դեկտեմբերի 1-ից 2006թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանը
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			2006թ. դեկտեմբեր 1-ից 2007թ. դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակաշրջանը
	17	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում	նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է գլխավոր հաշվապահը
			գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, և նման գործառնությունների իրականացման հետևանքների համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարը
			գլխավոր հաշվապահը զեկուցագիր է ներկայացնում կարգավորող մարմին
			ճիշտ պատասխանը նշված չէ
	18	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նշված վավերապայմաններից, որի առկայությունը պարտադիր չէ սկզբնական հաշվառման	փաստաթղթի անվանումը
			հերթական համարը
			հարկ վճարողի հաշվառման համարը
			տնտեսական գործառնության չափման միավորները՝ դրամական և բնաիրային արտահայտությամբ
	19	«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվապահական հաշվառման կարգավորումը վարկային կազմակերպություններում իրականացվում է հետևյալ մարմինների կողմից (ա) Ֆինանսների նախարարություն (բ) ՀՀ կենտրոնական բանկ (գ) Հայաստանի բանկերի միություն	(ա) և (բ)
			(ա), (բ) և (գ)
			(ա) և (գ)
			(ա)
	20	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական հաշվետվությունները	կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացումն է
			կազմակերպության կողմից իրականացված ֆինանսական գործառնությունների մեկնաբանությունն է, որոնք ներկայացվում են սահմանված ժամանակաշրջանի համար
			կազմակերպության կողմից իրականացված ֆինանսական գործառնությունների մեկնաբանությունն է
			ճիշտ պատասխանը նշված չէ
	21	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական հաշվետվությունները	կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացումն է
			ստորագրում է կազմակերպության ղեկավարը
			ստորագրում է կազմակերպության գլխավոր հաշվապահը
			բոլոր պատասխանները էլ ճիշտ են
	22	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը կազմվում են	գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում
			բացառապես գործառնության կատարման պահին

			գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո
			գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից առնվազն մեկ օր հետո
	23	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ՝	պարտադիր է կազմակերպության միայն հաշվապահական հաշվառման ստորաբաժանման աշխատակիցների համար
			պարտադիր է կազմակերպության բոլոր աշխատողների համար
			պարտադիր է միայն կազմակերպության ղեկավարների և հաշվապահական հաշվառման ստորաբաժանման աշխատակիցների համար
			նշված երեք պատասխաններն էլ սխալ են
	24	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի,	հաշվապահական հաշվառման փաստաթղթերը կազմակերպությունը պահպանում է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներով, բայց ոչ պակաս, քան հինգ տարի ժամկետով
			սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո
			ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը առևտրային գաղտնիք չի համարվում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	25	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ ֆինանսական հաշվետվությունները ստորագրում է (են)՝	կազմակերպության ղեկավարը, գլխավոր հաշվապահը և ֆինանսական հաշվետվությունը կազմող աշխատակիցը
			միայն գլխավոր հաշվապահը
			ֆինանսական հաշվետվությունը կազմող աշխատակիցը և աուդիտորը
			կազմակերպության ղեկավարը և գլխավոր հաշվապահը
	26	Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար դրանց փոխանցման պատասխանատվությունը կրում է (են)՝	միայն կազմակերպության գլխավոր հաշվապահը
			այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք
			կազմակերպության ղեկավարը և գլխավոր հաշվապահը
			նշված բոլոր անձինք
	27	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», օգտակար ֆինանսական տեղեկատվության հիմնարար որակական բնութագրերն են. ա) տեղին լինելը բ) համադրելի լինելը գ) ճշմարիտ ներկայացումը	«ա» և «բ»
			«ա» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«բ» և «գ»
	28	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», տեղեկատվությունը համարվում է էական, եթե.	դրա բացթողումը կամ սխալ ներկայացումը կարևորվում է ընկերության ղեկավարության կողմից
			դրա բացթողումը կամ սխալ ներկայացումը կարող է ազդել օգտագործողների՝ հաշվետու կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա

			դրա բացթողումը կամ սխալ ներկայացումը կհանգեցնի խոշոր գումարների տատանման
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	29	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ճշմարիտ ներկայացման բնութագրերից են. ա) ամբողջական բ) չեզոք գ) սխալներից զերծ դ) համադրելի	«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«ա», «բ» և «դ»
			«բ» և «գ»
	30	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», օգտակար ֆինանսական տեղեկատվության որակական բնութագրերն են. ա) համադրելիությունը բ) ժամանակին լինելը գ) հասկանալիությունը	«բ»
			«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
	31	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ֆինանսական արդյունքի չափման հետ անմիջականորեն կապված տարրերն են. ա) սեփական կապիտալը բ) եկամուտներ գ) ծախսեր	«բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «բ»
	32	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ակտիվը ճանաչվում է, երբ ա) հավանական է, որ ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն բ) ընկերությունը նպատակահարմար է գտնում ծախսերը կապիտալացնել՝ վերածելով այն ակտիվի գ) ակտիվն ունի արժեք, որը կարելի է արժանահավատորեն չափել	«ա»
			«ա» և «գ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
	33	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», պարտավորությունը ճանաչվում է այն ժամանակ, երբ	հավանական է, որ ներկա պարտականությունը մարելու արդյունքում տեղի կունենա տնտեսական օգուտները պարունակող ռեսուրսների արտահոսք և այն գումարը, որով կմարվի պարտականությունը, հնարավոր է արժանահավատորեն չափել

			գումարը, որով կմարվի պարտականությունը, հնարավոր է արժանահավատորեն չափել
			ճիշտ պատասխան նշված չէ
			հավանական է, որ տեղի կունենա տնտեսական օգուտները պարունակող ռեսուրսների ներհոսք և այն գումարը, որով կմարվի պարտականությունը, հնարավոր է արժանահավատորեն չափել
	34	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ ա) ապագա տնտեսական օգուտների աճը կապված է ակտիվի ավելացման հետ բ) ապագա տնտեսական օգուտների աճը կապված է պարտավորության նվազման հետ գ) այն կարող է արժանահավատորեն չափվել	«ա»
			«ա» և «գ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
	35	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ծախսերը ճանաչվում են, երբ ա) ապագա տնտեսական օգուտների նվազումը կապված է ակտիվների նվազման հետ բ) ապագա տնտեսական օգուտների նվազումը կապված է պարտավորությունների աճի հետ գ) այն կարող է արժանահավատորեն չափվել	«ա»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
	36	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ֆինանսական տարրերի չափումը ներառում է հետևյալ հասկացությունները. ա) ընթացիկ արժեք բ) սկզբնական արժեք գ) մնացորդային արժեք դ) ներկա արժեք	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «դ»
			«ա», «բ», «գ» և «դ»
	37	Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ո՞րը չի հանդիսանում ֆինանսական տարրերի չափման հասկացություն. ա) հաշվեկշռային արժեք բ) սկզբնական արժեք գ) ներկա արժեք դ) մնացորդային արժեք	«ա» և «դ»
			«ա», «բ» և «դ»
			«ա», «գ» և «դ»

			«բ» և «գ»
	38	Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», ճշեք սխալ տարբերակը	ֆինանսական հաշվետվությունները լրացվում են հաշվապահական հաշվառման սկզբունքների կիրառմամբ
			ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության, լրացվում են հաշվեգրման սկզբունքի կիրառմամբ
			դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը լրացվում է հաշվեգրման սկզբունքի կիրառմամբ
			դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով
	39	Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», ստանդարտի նպատակն է ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման հիմունքների սահմանումը՝	ապահովելու համար կազմակերպության նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տվյալ կազմակերպության և այլ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների համադրելիությունը
			ապահովելու համար աուդիտորական ստուգման արդյունավետությունը
			ճիշտ պատասխան նշված չէ
			ապահովելու համար ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը
	40	Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», նշավճներից որը չի ներառվում ֆինանսական հաշվետվությունների փաթեթում.	հաշվապահական հաշվառման քաղաքականությունը
			շահութահարկի հաշվարկը
			ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը
			համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը
	41	Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են տեղեկություններ կազմակերպության	ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ
			եկամուտների և ծախսերի վերաբերյալ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
			սեփական կապիտալի և դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
	42	Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները պետք է պատրաստի անընդհատության հիմունքով, բացառությամբ ա) առկա է կազմակերպության ղեկավարության մտադրությունը կազմակերպությունը լուծարելու բ) առկա է կազմակերպության ղեկավարության մտադրությունը գործունեության դադարեցման գ) չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք	«ա»
			«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«գ»

	43	Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընդգրկի հետևյալ գումարները ներկայացնող տողային հոդվածները	ոչ նյութական ակտիվներ
			ներդրումային գույք
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
			դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
	44	Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», կազմակերպությունը պարտավորությունը պետք է դասակարգի որպես ընթացիկ, երբ ա) ակնկալում է պարտավորությունը մարել կազմակերպության սովորական գործառնական փուլի ընթացքում բ) պահում է պարտավորությունը հիմնականում առևտրական նպատակներով գ) պարտավորությունը ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում դ) պահում է պարտավորությունը հիմնականում մինչև մարման ժամկետը և կազմակերպությունը չունի անվերապահ իրավունք՝ մարելու պարտավորությունը մարման ժամկետից շուտ	«ա» և «բ»
			«բ», «գ» և «դ»
			«ա», «բ» և «գ»
			«բ» և «դ»
	45	Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ՝	կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական վիճակի մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա
			կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ սեփական կապիտալի փոփոխությունների մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա
			կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական արդյունքների մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա
			կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա
	46	Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում», կազմակերպությունները հաշվեգրման սկզբունքի հիման վրա չեն պատրաստում	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը
			Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը և Սեփական կապիտալի մասին հաշվետվությունը
			Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը

			Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը
	47	Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարները չափվում են	ինքնարժեքով
			իրացման զուտ արժեքով
			ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից առավելագույնով
			ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով
	48	Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», երբ պաշարները վաճառվում են, ապա	դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը
			դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես հասույթ այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված ծախսը
			դրանց վաճառքից ստացված հասույթի և պաշարների հաշվեկշռային արժեքի տարբերությունը պետք է ճանաչվի որպես ծախս կամ եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, որում կատարվել է գործարքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	49	Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարների ինքնարժեքի տարրեր են՝ ա) ձեռք բերման ծախսումները բ) արտադրանքի վերամշակման ծախսումները գ) գերնորմատիվային ծախսումները	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
	50	Նշել սխալ պատասխանը: Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարների ինքնարժեքը կարող է չփոխհատուցվել, եթե	դրանք մասամբ կամ ամբողջությամբ օգտագործելի չեն՝ վնասվել են, փչացել են, հնացել են
			աճել են այնպիսի ենթադրվող ծախսումները, որոնք պետք է կատարվեն վաճառքը կազմակերպելու համար
			դրանց վաճառքի գինը նվազել է
			դրանց վաճառքի գինը աճել է
	51	Նշել սխալ պատասխանը: Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարները դրանք ակտիվներ են, որոնք	պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար
			արտադրության ընթացքում են՝ հետագայում վաճառելու նպատակով
			արտահայտված են հումքի և նյութերի ձևով, որը նախատեսվում է սպառել արտադրության գործընթացում կամ ծառայությունների մատուցման ժամանակ
			ձեռք են բերվել առաջիկա տարիների ընթացքում կազմակերպության գործունեությունը ապահովելու համար

	52	Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարներն այն ակտիվներն են, որոնք՝ ա) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար բ) արտադրության ընթացքում են հետագա վաճառքի համար գ) արտադրվում են ընկերության գործունեության արդյունքում ծառայելու նպատակով դ) հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար	«ա» և «բ»
			«ա», «բ» և «դ»
			«ա», «բ» և «գ»
			«ա», «բ», «գ» և «դ»
	53	Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարների ինքնարժեքի բանաձևերն են. ա) ՖԻՖՕ բ) ԼԻՖՕ գ) միջին կշռված արժեք	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
	54	Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», իրացման զուտ արժեքը	վաճառքի ձևավորվող գինն է
			վաճառքի գնի և արժեզրկման կորուստի տարբերությունն է
			սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները
			այն գումարն է, որով պաշարի միավորը առևտրական գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև
	55	Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», իրական արժեքը	այն գումարն է, որով պաշարի միավորը առևտրական գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև
			ճիշտ պատասխանը նշված չէ
			վաճառքի ձևավորվող գինն է
			գին, որը չափման ամսաթվի դրությամբ, շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց
	56	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», բանկը միանվագ վճարել է նույն մատակարարից ձեռք բերված հիմնական միջոցի և ապրանքների համար, հետևաբար	մատակարարին վճարված գումարն ամբողջությամբ դասակարգվում է որպես գործառնական հոսք
			մատակարարին վճարված գումարն ամբողջությամբ դասակարգվում է որպես ներդրումային հոսք
			հիմնական միջոցի համար վճարված գումարը դասակարգվում է որպես գործառնական հոսք, իսկ ապրանքների համար վճարված գումարը՝ որպես ներդրումային հոսք

			հիմնական միջոցի համար վճարված գումարը դասակարգվում է որպես ներդրումային, իսկ ապրանքների համար վճարված գումարը՝ որպես գործառնական հոսք
	57	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», դրամական գործառնություններ չեն և հետևաբար դրամական հոսքերի մասին հաշվետվությունում չեն ներառվում	փոխառությունների ներգրավումը
			բաժնետոմսերի թողարկման միջոցով կազմակերպության ձեռքբերումը:
			կրեդիտորական պարտքի մարումը
			հարկերի վճարումը
	58	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», աշխատակիցներին և նրանց անունից (օրինակ՝ կենսաթոշակային ապահովության վճար, եկամտահարկ) դրամական վճարումները դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են	գործառնական գործունեության արդյունքում
			ներդրումային գործունեության արդյունքում
			ֆինանսական գործունեության արդյունքում
			բոլոր պատասխանները սխալ են
	59	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից դրամական մուտքերը, դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են	ներդրումային գործունեության արդյունքում
			բոլոր պատասխանները սխալ են
			ֆինանսական գործունեության արդյունքում
			գործառնական գործունեության արդյունքում
	60	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», սեփական բաժնետոմսերի կամ բաժնային այլ գործիքների թողարկումից դրամական մուտքերը դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են	ներդրումային գործունեության արդյունքում
			ֆինանսական գործունեության արդյունքում
			գործառնական գործունեության արդյունքում
			բոլոր պատասխանները սխալ են
	61	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», դիլերային և առևտրային պայմանագրերից դրամական մուտքերը և վճարումները դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են	ներդրումային գործունեության արդյունքում
			բոլոր պատասխանները սխալ են
			գործառնական գործունեության արդյունքում
			ֆինանսական գործունեության արդյունքում
	62	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռք բերման դրամական վճարումները դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են	ներդրումային գործունեության արդյունքում
			գործառնական գործունեության արդյունքում
			ֆինանսական գործունեության արդյունքում
			բոլոր պատասխանները սխալ են

	63	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», այլ կազմակերպությունների պարտքային գործիքների համար դրամական վճարումները (բացի այն գործիքների, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեք, կամ որոնք պահվում են դիլերային կամ առևտրային նպատակներով) դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են	ներդրումային գործունեության արդյունքում
			բոլոր պատասխանները սխալ են
			գործառնական գործունեության արդյունքում
			ֆինանսական գործունեության արդյունքում
	64	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ֆինանսական հաստատությունների նշված դրամական միջոցների հոսքերից, որո՞նք են որ կարող են բանկի «Դրամական միջոցների հաշվետվությունում» ներկայացվել զուտ հիմունքով՝	բանկի հաճախորդների անունից կատարվող դրամական վճարումները և մուտքերը, եթե այս դրամական միջոցների հոսքերն արտահայտում են հաճախորդների, և ոչ թե բանկի գործունեությունը
			բանկի հաճախորդների անունից կատարվող դրամական վճարումները և մուտքերը, եթե այս դրամական միջոցների հոսքերն արտահայտում են բանկի, և ոչ թե հաճախորդի գործունեությունը
			բանկի հիմնական միջոցների ձեռք բերման դիմաց վճարումները և վաճառքից դրամական մուտքերը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	65	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից ո՞րն է (որո՞նք են) համարվում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝	ապահովագրական կազմակերպության դրամական մուտքերը ապահովագրավճարներից
			բոլոր պատասխանները ճիշտ են
			վարձակալի կողմից կատարվող դրամական վճարումները՝ ֆինանսական վարձակալությանը վերաբերող պարտավորությունների մարման նպատակով
			ֆյուչերսային, ֆորվարդային, օպցիոն և սվոպային պայմանագրերի դիմաց դրամական վճարումները, բացի այն դեպքերից, երբ նշված պայմանագրերը կնքվում են դիլերային և առևտրային նպատակով կամ նշված վճարումները դասակարգվում են որպես ֆինանսական գործունեություն
	66	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից ո՞րն է (որո՞նք են) համարվում գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝	այլ կազմակերպությունների սեփական կապիտալի մասնակցության և պարտքային գործիքների (արժեթղթերի), ինչպես նաև համատեղ գործունեությունում մասնակցության վաճառքից դրամական մուտքերը (բացի այն գործիքների (արժեթղթերի) դիմաց մուտքերից, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեք, կամ որոնք պահվում են դիլերային կամ առևտրային նպատակներով)
			բաժնետոմսերի կամ սեփական կապիտալի մասնակցության այլ գործիքների թողարկումից դրամական մուտքերը
			ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց մատակարարներին վճարված դրամական միջոցները

			բոլոր պատասխանները ճիշտ են
	67	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից ո՞րն է (որո՞նք են) համարվում ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝	ապրանքների (արտադրանքի) վաճառքից, աշխատանքների կատարումից և ծառայությունների մատուցումից ստացված դրամական միջոցների մուտքերը
			բոլոր պատասխանները ճիշտ են
			դրամական վճարումները սեփականատերերին՝ կազմակերպության բաժնետոմսերը ձեռք բերելու կամ մարելու համար
			դրամական միջոցներով տրամադրված փոխատվությունները և վարկերը (բացի ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված փոխատվություններից)
	68	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից ո՞րը չի (որո՞նք չեն) համարվում ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	դրամական վճարումները սեփականատերերին՝ կազմակերպության բաժնետոմսերը ձեռք բերելու կամ մարելու համար
			սեփական բաժնետոմսերի կամ բաժնային այլ գործիքների թողարկումից դրամական մուտքերը
			այլ կազմակերպությունների պարտքային գործիքների համար դրամական վճարումները
			բոլոր պատասխանները սխալ են
	69	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով
			նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են
			ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ
			որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի
	70	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ներդրումային գործունեությունը	երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ
			գործունեություն է, որը հանգեցնում է կազմակերպության ներդրված սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխությունների
			կազմակերպության հասույթ բերող հիմնական գործունեությունն է և ներդրումային կամ ֆինանսավորման գործունեություն չհանդիսացող այլ գործունեություններ
			դրամական միջոցների և դրանց համարժեքների ներհոսքերն ու արտահոսքերն են

	71	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ֆինանսական գործունեությունը	երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ
			դրամական միջոցների և դրանց համարժեքների ներհոսքերն ու արտահոսքերն են
			կազմակերպության հասույթ բերող հիմնական գործունեությունն է և ներդրումային կամ ֆինանսավորման գործունեություն չհանդիսացող այլ գործունեություններ
			գործունեություն է, որը հանգեցնում է կազմակերպության ներդրված սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխությունների
	72	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», գործառնական գործունեությունը	երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ
			գործունեություն է, որը հանգեցնում է կազմակերպության ներդրված սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխությունների
			կազմակերպության հասույթ բերող հիմնական գործունեությունն է և ներդրումային կամ ֆինանսավորման գործունեություն չհանդիսացող այլ գործունեություններ
			դրամական միջոցների և դրանց համարժեքների ներհոսքերն ու արտահոսքերն են
	73	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ապրանքների (արտադրանքի) վաճառքից և ծառայությունների մատուցումից ստացած դրամական միջոցների մուտքերը դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են	ներդրումային գործունեության արդյունքում
			բոլոր պատասխանները սխալ են
			գործառնական գործունեության արդյունքում
			ֆինանսական գործունեության արդյունքում
	74	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից որը չի հանդիսանում գործառնական գործունեության արդյունքում առաջացած դրամական միջոցների հոսքերի օրինակներ.	առևտրային պայմանագրերից դրամական միջոցների մուտքերը և վճարումները
			աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումները
			միջնորդավճարներից ստացված դրամական միջոցների մուտքերը
			հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ երկարաժամկետ ակտիվների վաճառքից դրամական միջոցների մուտքերը
	75	Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից որո՞նք են հանդիսանում գործառնական գործունեության արդյունքում առաջացած դրամական միջոցների հոսքերի օրինակներ.	բաժնետոմսերի կամ բաժնային այլ գործիքների թողարկումից դրամական միջոցների մուտքերը
			շահութահարկի գծով դրամական միջոցների վճարումները կամ հետստացումները
			փոխառությունների՝ դրամական միջոցներով մարումները
			ֆյուչերսային, ֆորվարդային, օպցիոն և սվոպային պայմանագրերից ստացվող դրամական միջոցների մուտքերը

	76	Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», հաշվապահական հաշվառման քաղաքականությունը դա	ՖՀՄՍ-ներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներն ու ցուցումներն են, որոնք ընդունված են հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից
			որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ, ձևեր և արարողակարգեր են, որոնք ընդունված են Կենտրոնական բանկի կողմից՝ բանկերի հաշվապահական հաշվառումը վարելու նպատակով
			կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով
			կազմակերպության կողմից ընդունված որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ, ձևեր և արարողակարգեր են, որոնք կիրառվում են կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու նպատակով
	77	Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», հոդվածների բացթողումները կամ ոչ ճիշտ ներկայացումները համարվում են էական,	եթե դրանք առանձին կամ միասին կարող են ազդել օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա
			եթե դրանք ազդում են վերահսկողի կողմից պատժամիջոցների կիրառման վրա
			ճիշտ պատասխանը նշված չէ
			եթե դրանք ազդում են օգտագործողների հաշվետվությունների կազմման վրա
	78	Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», նշվածներից ո՞րը չի դիտարկվում որպես հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը այնպիսի գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համար, որոնք իրենց բովանդակությամբ տարբերվում են նախկինում կատարված գործառնություններից և տեղի ունեցած իրադարձություններից բ) նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը այնպիսի գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համար, որոնք նախկինում տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական	«ա»
			ճիշտ պատասխանը նշված չէ
			«ա» և «բ»
			«բ»
	79	Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	կազմակերպությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը այն դեպքում, եթե այդ փոփոխությունը պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով

			կազմակերպությունը պետք է հաշվառի ՖՀՄՍ-ի առաջին կիրառման արդյունքում առաջացող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը տվյալ ՖՀՄՍ-ի կոնկրետ անցումային դրույթների համաձայն
			նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են
			հետընթաց կիրառումը, դա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականության կիրառումն է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների նկատմամբ այնպես, կարծես այդ քաղաքականությունը միշտ կիրառվել է
	80	Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», նշված պնդումներից ո՞րն է սխալ.	կազմակերպությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը այն դեպքում, եթե այդ փոփոխությունը պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով
			կազմակերպությունը պետք է հաշվառի ՖՀՄՍ-ի առաջին կիրառման արդյունքում առաջացող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը տվյալ ՖՀՄՍ-ի կոնկրետ անցումային դրույթների համաձայն
			հոդվածների բացթողումները կամ խեղաթյուրումները համարվում են էական, եթե դրանք, առանձին կամ միասին, չեն կարող ազդել օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա
			հետընթաց կիրառումը, դա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականության կիրառումն է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների նկատմամբ այնպես, կարծես այդ քաղաքականությունը միշտ կիրառվել է
	81	Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»,	հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի բացառապես առաջընթաց
			հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության կիրառման եղանակը կախված է վերահսկող մարմնի դիրքորոշումից
			ճիշտ պատասխանը նշված չէ
			հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի բացառապես հետընթաց
	82	Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»,	քաղաքականության փոփոխությունից առաջացող ցանկացած ճշգրտում պետք է ներկայացվի որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում
			ճիշտ պատասխանը նշված չէ
			հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններից առաջացող ճշտգրտումներ չեն կատարվում, միայն ներկայացվում է համադրելի տեղեկատվություն
			քաղաքականության փոփոխությունից առաջացող ցանկացած ճշգրտում պետք է ներառվի ընթացիկ ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասը որոշելիս

	83	Համաձայն ՀՀՄՍ 12-ի՝ «Շահութահարկեր», հարկի գծով ծախսը (հարկի գծով եկամուտը).	տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի/վնասի հաշվարկում ներառված ընթացիկ հարկի մեծությունն է
			ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով
			հարկվող շահույթի մեծությունն է
			տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի/վնասի հաշվարկում ներառված հետաձգված հարկի մեծությունն է
	84	Համաձայն ՀՀՄՍ 12-ի՝ «Շահութահարկեր», ժամանակավոր տարբերությունները կարող են լինել. ա) հարկվող բ) նվազեցվող գ) հետաձգված Նշեք առավել ամբողջական պատասխանը.	«ա»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «բ»
			«բ» և «գ»
	85	Նշեք սխալ պատասխանը. Համաձայն ՀՀՄՍ 12-ի՝ «Շահութահարկ», հետաձգված հարկային ակտիվը ապագա ժամանակաշրջաններում փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարներն են, կապված	նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ
			հարկվող ժամանակավոր տարբերությունների հետ
			չօգտագործված հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ
			չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ
	86	Համաձայն ՀՀՄՍ 12-ի՝ «Շահութահարկ», ակտիվի կամ պարտավորության հարկային բազան	ապագա ժամանակաշրջաններում փոխհատուցման ենթակա շահութահարկերի գումարներն են
			ժամանակաշրջանի հարկվող շահույթի (հարկային վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկերի գումարն է
			ապագա ժամանակաշրջաններում վճարման ենթակա շահութահարկերի գումարներն են
			այդ ակտիվի կամ պարտավորության հարկային նպատակներով վերագրվող գումարն է
	87	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք առկա են կազմակերպությունում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար և	որոնք նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով
			որոնց ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից
			որոնք նախատեսվում է օգտագործել մինչև մեկ տարի ժամկետով և որոնց ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից
			որոնք իրենց ծառայության ընթացքում պահպանում են իրենց բնաիրային տեսքը

	88	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», նշված ակտիվներից ո՞րը չի համարվի հիմնական միջոց	նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում արտադրանքի արտադրության համար, նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը պակաս է 25.000 ՀՀ դրամից
			բոլոր նշվածներն էլ կհամարվեն հիմնական միջոց
			նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում վարձակալության տալու համար և որը նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով
			նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում այլ կողմերին վարձակալության տալու նպատակներով և նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից
	89	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», նշված պնդումներից ո՞րն է սխալ.	երբ հիմնական միջոցների միավորը վերագնահատվում է, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերագնահատվի
			հիմնական միջոցները դրանք այն նյութական ակտիվներ են, որոնք իրենց ծառայության ընթացքում պահպանում են իրենց բնաիրային տեսքը
			հիմնական միջոցների միավորը ճանաչվում է որպես ակտիվ, երբ դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել
			հիմնական միջոցները դրանք այն նյութական ակտիվներ են, որոնք նախատեսվում են օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով
	90	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցների դասերի օրինակ չի հանդիսանում.	գրասենյակային գույքը
			հեղինակային իրավունքը
			հողամասերը և շենքերը
			մեքենա-սարքավորումներ
	91	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», ո՞ր պնդումն է ճիշտ	Հիմնական միջոցի միավորը, համաձայն սկզբնական արժեքի մոդելի, որպես ակտիվ ճանաչելուց հետո, պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները
			եթե հիմնական միջոցների միավորը վերագնահատվում է, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերագնահատվի
			բոլոր պնդումներն էլ ճիշտ են

			Հիմնական միջոցի միավորը (համաձայն վերագնահատման մոդելի), որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, որպես ակտիվ ճանաչելուց հետո պետք է հաշվառվի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները
	92	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», երբ անհրաժեշտ է դառնում մաշվածության հաշվարկման մեթոդի փոփոխությունը, այն պետք է դիտվի	որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատականներում
			որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատականներում, և նախորդ ժամանակաշրջանների համար հաշվարկված մաշվածության գումարները պետք է վերահաշվարկվեն՝ ըստ նոր մեթոդի
			որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում, և նախորդ, ընթացիկ ու հետագա ժամանակաշրջանների համար հաշվարկվող մաշվածության գումարները պետք է ճշգրտվեն
			որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման քաղաքականությունում, և ընթացիկ ու հետագա ժամանակաշրջանների համար հաշվարկվող մաշվածության գումարները պետք է ճշգրտվեն
	93	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը,	հատուցման իրական արժեքը ակտիվի ձեռքբերման պահի դրությամբ, կամ, որտեղ կիրառելի է, ակտիվի սկզբնապես ճանաչման ժամանակ նրան վերագրված գումարն է
			ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների կամ դրանց համարժեքների գումարն է
			ճիշտ պատասխանը նշված չէ
			այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում է կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները հանելուց հետո
	94	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Մաշվող գումարը ակտիվի ինքնարժեքն է կամ դրան փոխարինող այլ գումարն է հանած դրա մնացորդային արժեքը
			Սկզբնական արժեքը ակտիվի ձեռք բերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների կամ դրանց համարժեքների գումարն է
			Մաշվածությունը ակտիվի մաշվող գումարի պարբերական բաշխումն է դրա օգտակար ծառայության ընթացքում
			Հաշվեկշռային արժեքը ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների կամ դրանց համարժեքների գումարն է
	95	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցի իրական արժեքը, դա	այն գումարն է, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը

			այն արժեքն է, որով ակտիվը ճանաչվում է կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները հանելուց հետո
			այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց
			այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում և ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում
	96	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը	իրենից ներկայացնում է ակտիվի իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը
			ճիշտ պատասխանը նշված չէ
			այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում է կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները հանելուց հետո
			այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում»
	97	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», նշված ակտիվներից ո՞րն է համարվում հիմնական միջոց ա) նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում արտադրանքի արտադրության համար, նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը պակաս է 25.000 ՀՀ դրամից բ) նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում վարչական նպատակներով օգտագործելու համար և նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից գ) նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում վարձակալության տալու համար և որը նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով	«ա»
			«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«բ» և «գ»
	98	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», սկզբնական արժեքի մոդելում՝ հիմնական միջոցները որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո պետք է.	հաշվառվեն սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները
			ճիշտ պատասխանը նշված չէ
			կամ սկզբնական արժեքով, կամ վերագնահատված գումարով
			հաշվառվեն վերագնահատված գումարով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները
	99	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», ո՞ր պնդումն է ճիշտ.	Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ են և հաշվառման նպատակով դիտվում են առանձին-առանձին, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք ձեռք են բերվում միասին

			Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ են և հաշվառման նպատակով դիտվում են առանձին-առանձին, սակայն եթե վերջիններս ձեռք են բերվում միասին ապա հաշվառվում են որպես մեկ ակտիվ
			ճիշտ պատասխանը նշված չէ
			Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ չեն և հաշվառման նպատակով դիտվում են միասին, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք ձեռք են բերվում առանձին - առանձին
100	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, ապա աճը պետք է ճանաչվի.		բացառապես համապարփակ ֆինանսական արդյունքներում
			այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվի սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում, եթե այդ աճը չի վերականգնում նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը
			ճիշտ պատասխանը նշված չէ
			շահույթում կամ վնասում
101	Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցների միավորի ինքնարժեքն ընդգրկում է		գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
			ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում
			հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնապես գնահատված ծախսումների գումարը
102	Բանկը 2002թ հունվարի 1-ին ձեռք է բերել համակարգիչ, որի օգտակար ծառայության ժամկետը սահմանվել է 5 տարի: 2003 թվականի հունվարի 1-ին համակարգչի օգտակար ծառայության ժամկետը վերանայվել է, որի համաձայն գնահատվել է 2 տարի: Այլ հավասար պայմաններում.		համակարգչի մաշվածության գումարը 2003թ. համար կկազմի ավելի փոքր գումար քան նախորդ տարի և կտրվեն համապատասխան ճշգրտումներ 2002 թ. ֆինանսական հաշվետվություններում
			համակարգչի մաշվածության գումարը 2003թ. համար կկազմի ավելի մեծ գումար, քան նախորդ տարի և 2002 թ.-ի ֆինանսական հաշվետվություններում համապատասխան ճշգրտումներ չեն տրվի
			ճիշտ տարբերակը նշված չէ
			համակարգչի մաշվածության գումարը 2003թ. համար կկազմի ավելի մեծ գումար, քան նախորդ տարի և կտրվեն համապատասխան ճշգրտումներ 2002 թ. ֆինանսական հաշվետվություններում
103	Համաձայն հաշվային պլանի, հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրումը ձևակերպվում է		Դտ - հիմնական միջոցների մաշվածություն Կտ - հիմնական միջոցներ,
			ճիշտ պատասխանը նշված չէ

			Դտ - հիմնական միջոցների մաշվածություն Կտ - մաշվածության գծով ծախսեր
			Դտ - մաշվածության գծով ծախսեր Կտ - հիմնական միջոցների մաշվածություն
	104	Համաձայն հաշվային պլանի, էտարված հիմնական միջոցների կուտակված մաշվածության գումարները դուրս գրելիս ձևակերպվում է.	Դտ - հիմնական միջոց Կտ - հիմնական միջոցների մաշվածություն
			Դտ - հիմնական միջոցների մաշվածություն Կտ - մաշվածության գծով ծախսեր
			Դտ - հիմնական միջոցների մաշվածություն Կտ - հիմնական միջոց
			Դտ - մաշվածության գծով ծախսեր Կտ - հիմնական միջոց
	105	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը. վաճառված հիմնական միջոցների կուտակված արժեզրկման գումարները դուրսգրելիս ձևակերպվում է.	Դտ - հիմնական միջոցների արժեզրկում Կտ - հիմնական միջոց
			ճիշտ պատասխանը նշված չէ
			Դտ - արժեզրկման գծով ծախս Կտ - հիմնական միջոցների արժեզրկում
			Դտ - հիմնական միջոցների արժեզրկում Կտ - արժեզրկման գծով ծախս
	106	Բանկը ձեռք է բերել հիմնական միջոց, որի համար մատակարարին վճարել է 200 միավոր: Հիմնական միջոցը տեղակայելու համար բանկը կատարել է որոշակի ծախսեր՝ 50 միավորի չափով: Այդ դեպքում բանկն իր հաշվապահական գրքերում կճանաչի.	հիմնական միջոցը՝ 250 միավորով
			հիմնական միջոցը՝ 150 միավորով
			ճիշտ պատասխանը նշված չէ:
			հիմնական միջոցը՝ 200 միավորով և հաշվետու ժամանակաշրջանի ծախս՝ 50 միավորով
	107	Բանկը 01.01.2000թ ձեռք է բերել սարքավորում 5000 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 7 տարի, մնացորդային արժեքը 500 միավոր: Սարքավորման մաշվածությունը պետք է հաշվարկվի գծային մեթոդով: 2003թ համար սարքավորման մաշվածության գումարը կկազմի.	482 միավոր
			892 միավոր:
			643 միավոր
			714 միավոր
	108	Բանկը 01.01.2001թ. ձեռք է բերել շենք 10000 միավորով: Մնացորդային արժեքը գնահատվել է 0 միավոր: Շենքի մաշվածության հաշվարկը կատարվում է գծային մեթոդով: 2004թ ընթացքում բանկը շենքի վրա կատարել է ընթացիկ վերանորոգում, որի համար ծախսվել է 1000 միավոր: 2004 թ-ից սկսած շենքի տարեկան մաշվածության գումարը այլ հավասար պայմաններում	կփոքրանա
			սկզբում կավելանա, հետո կփոքրանա
			կավելանա
			չի փոփոխվի

	109	Բանկը 01.01.2000թ. ձեռք է բերել շենք՝ 3000 միավոր արժեքով, օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 20 տարի, մնացորդային արժեք՝ 0 միավոր: 01.01.2002թ. օրենքով սահմանված կարգով վերագնահատման իրականացման արդյունքում շենքի արժեքը ավելացել է 10 տոկոսով: Բանկն ընտրել է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հարկման նպատակով համախառն եկամտից հիմնական միջոցի գծով մաշվածության գումարի նվազեցվող մեծությունը 2003 թվականի համար կկազմի	220 միավոր
			143 միավոր:
			165 միավոր
			200 միավոր
	110	Բանկը ձեռք է բերել շենք՝ 5000 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 20 տարի: Ամորտիզացիայի հաշվարկը բանկը կատարում է մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդով (մաշվածության տոկոսադրույքը՝ 10%): Հարկվող շահույթն որոշելիս համախառն եկամտից նվազեցվող գումարը շենքի մաշվածության գծով 2-րդ տարվա համար կկազմի	250 միավոր
			450 միավոր
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			500 միավոր
	111	Նշել ճիշտ պատասխանը Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 140 միավոր է, մաշվածության գումարը՝ 50 միավոր: Հիմնական միջոցի իրական արժեքը նվազել է 10% չափով: Հիմնական միջոցի վերագնահատումն (համամասնության մեթոդով) արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ - հիմնական միջոց 14 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 14 միավոր և Դտ - հիմնական միջոցների վերագնահատումիցհամապարփակ կորուստներ 5 միավոր Կտ - հիմնական միջոցի մաշվածություն 5 միավոր է Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 9 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 9 միավոր
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			Դտ - հիմնական միջոց 14 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 14 միավոր և Դտ - հիմնական միջոցի վերագնահատման պահուստ 5 միավոր Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 5 միավոր

			Դտ - հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ 14 միավոր Կտ - հիմնական միջոց 14 միավոր և Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 5 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումիցհամապարփակ կորուստներ 5 միավոր է Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 9 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 9 միավոր
	112	Նշել ճիշտ պատասխանը Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 200 միավոր է, մաշվածության գումարը՝ 50 միավոր, հիմնական միջոցի նախորդ դրական վերագնահատումից հիմնական միջոցների վերագնահատման պահուստում գրանցված է 20 միավոր: Հետագայում հիմնական միջոցի իրական արժեքը նվազում է 10%-ի չափով: Հիմնական միջոցի (զուտ մեթոդով) վերագնահատումն արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 50 միավոր Կտ - հիմնական միջոց 50 միավոր և Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր Կտ - հիմնական միջոց է Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր
			Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 50 միավոր Կտ - հիմնական միջոց 50 միավոր և Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր Կտ - հիմնական միջոց 15 միավոր է Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 15 միավոր
			ճիշտ պատասխանը նշված չէ
			Դտ - հիմնական միջոց 50 միավոր Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 50 միավոր և Դտ - հիմնական միջոցի վերագնահատման պահուստ 15 միավոր Կտ - հիմնական միջոց 15 միավոր

	113	Նշել ճիշտ պատասխանը Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 300 միավոր է, մաշվածության գումարը՝ 150 միավոր, հիմնական միջոցի նախորդ դրական վերագնահատումից հիմնական միջոցների վերագնահատման պահուստում գրանցված է 50 միավոր: Հետագայում հիմնական միջոցի իրական արժեքը նվազում է 10%-ի չափով: Հիմնական միջոցի վերագնահատումն (համամասնության մեթոդով) արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ - կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից 30 միավոր Կտ - հիմնական միջոց 30 միավոր, և Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 15 միավոր Կտ -հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			Դտ - հիմնական միջոց 30 միավոր Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 30 միավոր և Դտ -հիմնական միջոցի մաշվածություն 15 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 15 միավոր և Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր Կտ - հիմնական միջոց 15 միավոր
			Դտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 30 միավոր Կտ - հիմնական միջոց 30 միավոր և Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 15 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 15 միավոր է Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 15 միավոր
	114	Նշել ճիշտ պատասխանը Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 200 միավոր է, մաշվածության գումարը՝ 50 միավոր, հիմնական միջոցի նախորդ վերագնահատման արդյունքում կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից հաշվում գրանցված է 50 միավոր: Հետագայում հիմնական միջոցի իրական արժեքը բարձացել է 10%-ի չափով: Հիմնական միջոցի վերագնահատումն (համամասնության մեթոդով) արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ -հիմնական միջոցներ 20 միավոր Կտ -հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 20 միավոր և Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 5 միավոր Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 5 միավոր և Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր

			Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 20 միավոր Կտ - հիմնական միջոց 20 միավոր և Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 5 միավոր Կտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 5 միավոր և Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր Կտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր
			ճիշտ պատասխանը նշված չէ
			Դտ - հիմնական միջոց 20 միավոր Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 20 միավոր, և, Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 5 միավոր Կտ - հիմնական միջոց 5 միավոր
	115	Նշել ճիշտ պատասխանը Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 200 միավոր է, մաշվածության գումարը՝ 50 միավոր, հիմնական միջոցի նախորդ բացասական վերագնահատման արդյունքում Կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից հաշվում գրանցված է 50 միավոր: Հետագայում հիմնական միջոցի իրական արժեքը բարձացել է 10%-ի չափով: Հիմնական միջոցի վերագնահատումն (զուտ մեթոդով) արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ - հիմնական միջոցներ 50 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ 50 միավոր և Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 15 միավոր և Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր Կտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր
			ճիշտ պատասխանը նշված չէ
			Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 50 միավոր Կտ - հիմնական միջոց 50 միավոր և Դտ - հիմնական միջոց 15 միավոր Կտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր և Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր

			Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 50 միավոր Կտ - հիմնական միջոց 50 միավոր և Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 15 միավոր Կտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր
	116	Բանկը 01.01.2002թ ձեռք է բերել սարքավորում 7400 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 8 տարի, մնացորդային արժեքը 500 միավոր: Սարքավորման մաշվածությունը պետք է հաշվարկվի գծային մեթոդով: Առ 01.01.2006թ սարքավորման կուտակված մաշվածության գումարը կկազմի.	2587.5 միավոր
			5175 միավոր
			4312.5 միավոր:
			3450 միավոր
	117	Բանկը 01.01.2002թ. ձեռք է բերել շենք 8800 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 20 տարի: Մնացորդային արժեքը գնահատվել է 300 միավոր: 2004թ ընթացքում բանկը շենքի վրա կատարել է ընթացիկ վերանորոգում, որը ավարվվել է 31.12.2004 և որի համար ծախսվել է 1000 միավոր: Շենքի մաշվածության հաշվարկը կատարվում է գծային մեթոդով: Մնացած հավասար պայմաններում, առ 01.01.2006թ շենքի կուտակված մաշվածության գումարը կկազմի.	1900միավոր
			2125 միավոր
			1700 միավոր
			2375 միավոր
	118	Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի ավարտին արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն	կիրառելով գործարքի օրվա փոխանակման փոխարժեքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
			կիրառելով փակման փոխարժեքը
			կիրառելով տվյալ ամսվա միջին ամսական փոխարժեքը
	119	Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», ֆինանսական վիճակի մասին ներկայացված յուրաքանչյուր հաշվետվության ակտիվները և պարտավորությունները պետք է	վերահաշվարկվեն այդ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ առկա փակման փոխարժեքով
			արտարժույթով դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով գործարքի օրվա փոխանակման փոխարժեքը, իսկ արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն կիրառելով փակման փոխարժեքը
			արտարժույթով դրամային հոդվածները և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով գործարքի օրվա փոխանակման փոխարժեքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	120	Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ	սփոթ փոխանակման փոխարժեքը անհապաղ փոխանակման համար մատչելի փոխարժեքն է

			նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են
			ներկայացման արժույթը այն արժույթն է, որով ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են
			իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց
	121	Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», արտարժույթով գործարքն այնպիսի գործարք է, որը սահմանված է արտարժույթով, կամ որը պահանջում է արտարժույթով կարգավորում, ներառյալ այն գործարքները, որոնք առաջանում են, երբ կազմակերպությունը. ա) գնում կամ վաճառում է ապրանքներ կամ ծառայություններ, որոնց գինը սահմանված է արտարժույթով բ) այլ ձևով ձեռք է բերում կամ օտարում է ակտիվներ, ստանձնում կամ մարում է պարտավորություններ, որոնք սահմանված են արտարժույթով գ) ստանում կամ հատկացնում է միջոցներ, որոնց վճարման կամ ստացման ենթակա գումարները սահմանված են արտարժույթով	«ա» և «բ»
			«ա» և «գ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
	122	Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», դրամային հոդվածներ են ա) առկա դրամական միջոցները բ) դրամական միջոցներով վճարման ենթակա նպաստներ և աշխատակիցների այլ հատուցումները գ) ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված կանխավճարները դ) որպես պարտավորություն ճանաչվող դրամական միջոցներով վճարման ենթակա շահաբաժինները	«ա», «բ» և «գ»
			«ա», «բ», «գ» և «դ»
			«ա», «բ» և «դ»
			«բ», «գ» և «դ»
	123	Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», փոխարժեքային տարբերությունը դա	տարբերություն է, որն առաջանում է մեկ արժույթով մեկ այլ արժույթի միևնույն քանակը տարբեր փոխարժեքներով վերահաշվարկելու արդյունքում
			դրամային հոդվածներ են, որոնք առաջանում են դրամային գործառնություններից, և առկա է գործառնության ամսաթվի և մարման ամսաթվի միջև փոխանակման փոխարժեքի փոփոխություն
			երբ դրամային հոդվածները փոխարինվում են արտարժութային հոդվածներով
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	124	Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», արտերկրյա ստորաբաժանման վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները, որոնք նախկինում ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝	սեփական կապիտալից չեն վերադասակարգվում որպես շահույթ կամ վնաս՝ մինչև ստորաբաժանման օտարումը

			պարբերաբար բաշխվի ակտիվի օգտակար ծառայության ընթացքում
			ճշգրտվեն արտերկրյա միավորի հաշվեկշռային արժեքի իջեցմանը համապատասխան
			վերանայվի առնվազն տարին մեկ անգամ
	125	Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», ֆունկցիոնալ արժույթը	այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը իրականացնում է գործունեություն
			այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը պատրաստվում է իրացնել իր կողմից արտադրված արտադրանքը
			երկու փոխարժեքների փոխանակման հարաբերակցությունն է
			արժույթ է, որով ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են
	126	Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», նեկայացման արժույթը	այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը իրականացնում է գործունեություն
			արժույթ է, որով ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են
			այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը պատրաստվում է իրացնել իր կողմից արտադրված արտադրանքը
			մեկ արժույթի արտահայտումն է մեկ այլ արժույթով
	127	Նշել սխալ պատասխանը: Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները»,	փոխարժեքային տարբերությունը առաջանում է մեկ արժույթով մեկ այլ արժույթի միևնույն քանակը տարբեր փոխանակման փոխարժեքներով վերահաշվարկելու արդյունքում
			փոխանակման փոխարժեքը երկու արժույթների փոխանակման հարաբերակցությունն է
			փոխարժեքային տարբերությունը առաջանում է մեկ արժույթով մեկ այլ արժույթի միևնույն քանակը փոխանակելու արդյունքում
			արտարժույթը արժույթ է, որը տարբերվում է կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից
	128	ՀՀ ԿԲ հրապարակած հաշվարկային փոխարժեքի նվազման դեպքում արտարժույթով ակտիվների վերագնահատումը ձևակերպվում է.	Դտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ Կտ - արտարժույթի վերագնահատման պահուստ
			Դտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ Կտ - արտարժույթի վերագնահատումից օգուտներ
			Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ Կտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ
			Դտ - արտարժույթի վերագնահատման պահուստ Կտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ
	129	ՀՀ ԿԲ հրապարակած հաշվարկային փոխարժեքի բարձրացման դեպքում արտարժույթով ակտիվների վերագնահատումը ձևակերպվում է	Դտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ Կտ- արտարժույթի վերագնահատման պահուստ
			Դտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ

			Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ Կտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	130	ԿԲ հաշվարկային փոխարժեքը մեկ հաշվետու ժամանակաշրջանից մյուսը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ 410 դրամից բարձրացել է 419 դրամի: Առևտրային բանկի ակտիվների արտարժույթով դրամային հոդվածների վերագնահատումը արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 9 դր Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 9 դր
			Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 419 դր Կտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 419 դր
			Դտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 419 դր Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 419 դր
			Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 9 դր Կտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 9 դր
	131	ԿԲ հաշվարկային փոխարժեքը մեկ հաշվետու ժամանակաշրջանից մյուսը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ 410 դրամից բարձրացել է 419 դրամի: Առևտրային բանկի պարտավորությունների արտարժույթով դրամային հոդվածների վերագնահատումը արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 9 դր Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 9 դր
			Դտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 419 դր Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 419 դր
			Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 9 դր Կտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 9 դր
			Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 419 դր Կտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 419 դր
	132	ԿԲ հաշվարկային փոխարժեքը մեկ հաշվետու ժամանակաշրջանից մյուսը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ 400 դրամից նվազել է մինչև 380 դրամ: Առևտրային բանկի ակտիվային մասի արտարժույթով դրամային հոդվածների վերագնահատումը արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 20 դր Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 20 դր
			Դտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 380 դր Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 380 դր
			Դտ -արտարժույթի վերագնահատումից կորուստներ 20 դր Կտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 20 դր
			Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 380 դր Կտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 380 դր
	133	ԿԲ հաշվարկային փոխարժեքը մեկ հաշվետու ժամանակաշրջանից մյուսը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ 500 դրամից նվազել է մինչև 495 դրամ: Առևտրային բանկի պարտավորությունների արտարժույթով դրամային հոդվածների վերագնահատումը արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 5 դր Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 5 դր

			Դտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 495 դր Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 495 դր
			Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 5 դր Կտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 5 դր
			Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 495 դր Կտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 495 դր
	134	Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», փոխառության ծախսումները կարող են ներառել. ա) ֆինանսական վարձակալությանը վերաբերող ֆինանսական վճարը (տոկոսը)՝ ճանաչված համաձայն «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ի բ) փոխառության տրամադրման հետ կապված բոլոր տոկոսային վճարները գ) փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով փոխառություններիցէ այնքանով, որքանով դրանք դիտվում են որպես տոկոսների գծով ծախսումների ճշգրտում դ) փոխառության ներգրավման և/կամ տրամադրման հետ կապված բոլոր գործառնական ծախսումները	«ա» և «բ»
			«ա», «բ» և «դ»
			«ա» և «գ»
			«բ» և «դ»
	135	Նշեք սխալ տարբերակը. Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», փոխառության ծախսումներ են.	արդյունավետ տոկոսային մեթոդի կիրառմամբ հաշվարկված տոկոսային ծախսը
			ֆինանսական վարձակալությանը վերաբերող ֆինանսական վճարները
			արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով այդ արտարժույթով ստացված փոխառությունների վերագնահատման բացասական արդյունքները
			փոխառությունների ստացման հետ կապված ծախսումները:
	136	Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», կապիտալացման համար մեկնարկի ամսաթիվը այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը առաջին անգամ բավարարում է հետևյալ պայմաններին (ներին)՝ ա) ակտիվի համար կատարում է ծախքեր բ) սկսվում է եկամուտների ներհոսքը դեպի կազմակերպություն գ) կատարում է փոխառության ծախսումներ դ) ձեռնարկում է այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար	«ա» և «բ»
			«ա» և «գ»
			«բ» և «դ»
			«ա», «գ» և «դ»
	137	Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», կազմակերպությունը փոխառության ծախսումների կապիտալացումը պետք է կասեցնի և սկսի դրանց ծախս ճանաչումը, երբ	որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար անհրաժեշտ աշխատանքներն ըստ էության կատարված են
			կապիտալացումը չի կասեցվում

			երկարատև ժամանակահատվածի ընթացքում ակտիվի վրա կատարվող աշխատանքներն ընդհատվում են
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	138	Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», փոխառության ծախսումները, որոնք պետք է կազմակերպության կողմից կապիտալացվեն որպես այդ ակտիվի արժեքի մաս, ա) անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը բ) անմիջականորեն վերագրելի են կառուցմանը գ) անմիջականորեն վերագրելի են արտադրությանը դ) անմիջականորեն վերագրելի են ապագա վաճառքի ծախսումներին	«ա» և «բ»
			«ա», «բ», «գ» և «դ»
			«ա», «բ» և «դ»
			«ա», «բ» և «գ»
	139	Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», փոխառության ծախսումները.	փոխառու միջոցների ստացման հետ կապված՝ բացառապես տոկոսների վճարման ծախումներն են, որոնք կատարում է կազմակերպությունը
			կազմակերպության բոլոր գործառնական ծախսերն են՝ կապված փոխառության տրամադրման և/կամ ստացման հետ
			տոկոսների վճարման և այլ ծախսումներն են, որոնք կազմակերպությունը կատարում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	140	Համաձայն ՀՀՄՍ 27-ի՝ «Առանձին ֆինանսական հաշվետվություններ», համախմբված ֆինանսական հաշվետվությունները դրանք՝	չվերահսկվող բաժնեմասի սեփականատերերի համաձայնությամբ խմբի՝ որպես մեկ կազմակերպության կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվություններն են
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			այն ֆինանսական հաշվետվություններ են, որոնք արտացոլում են մայր կազմակերպության ֆինանսական վիճակի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը, անկախ խմբի կազմում գտնվող առանձին իրավաբանական անձանց գործունեության ոլորտի իրավական սահմանափակումների
			խմբի ֆինանսական հաշվետվություններն են, որտեղ մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտները և ծախսերը, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են որպես մեկ տնտեսական կազմակերպության համար ներկայացվող ֆինանսական հաշվետվություններ

	141	Համաձայն ՀՀՄՍ 27-ի՝ «Առանձին ֆինանսական հաշվետվություններ», առանձին ֆինանսական հաշվետվություններում ներդրումները դուստր և ասոցիացված կազմակերպություններում, ինչպես նաև համատեղ ձեռնարկումներում պետք է հաշվառվեն. ա) բաժնեմասնակցության մեթոդով բ) ինքնարժեքով գ) իրական արժեքից և ինքնարժեքից նվազագույնով դ) համաձայն ՖՀՄՍ 9-ի	«ա» և «բ»
			«ա», «բ» և «դ»
			«ա» և «գ»
			«ա», «բ», «գ» և «դ»
	142	Համաձայն ՀՀՄՍ 27-ի՝ «Առանձին ֆինանսական հաշվետվություններ», առանձին ֆինանսական հաշվետվություններում դուստր և ասոցիացված կազմակերպություններից, ինչպես նաև համատեղ ձեռնարկումներից ստացվող շահաբաժինները ա) ճանաչվում են , երբ ձևավորվում է շահաբաժինների ստացման իրավունքը բ) ճանաչվում են եկամուտներում/ծախսերում, բացառությամբ ներդրման բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման դեպքի գ) ճանաչվում են եկամուտներում/ծախսերում՝ անկախ ներդրման հաշվառման մեթոդի դ) ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում	«ա» և «բ»
			«ա», «բ» և «դ»
			«ա», «բ» և «գ»
			«բ» և «գ»
	143	Համաձայն ՀՀՄՍ 28-ի, «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ասոցիացված կազմակերպություններում ներդրումները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման ժամանակ շահաբաժինները հայտարարելուց հետո, ներդրողը ձևակերպվում է	Դտ - էտացվելիք շահաբաժիններ Կտ - եկամուտ շահաբաժիններից
			Դտ - դրամական միջոցներ Կտ - էտացվելիք շահաբաժիններ
			Դտ - եկամուտ շահաբաժիններից Կտ- էտացվելիք շահաբաժիններ
			Դտ - էտացվելիք շահաբաժիններ Կտ - համապատասխան ներդրման հաշիվ
	144	Համաձայն ՀՀՄՍ 28-ի, «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ո՞ր տարբերակներն են բնորոշ բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման համար. ա) ներդրումը սկզբնապես ճանաչվում է ինքնարժեքով բ) հետագա չափումների շրջանակում ներդրումը ճշգրտվում է ձեռքբերումից հետո ներդրման օբյեկտի զուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխությունների չափով գ) ներդրումից ստացվող շահաբաժինները ավելացնում են ներդրման հաշվեկշռային արժեքը	«ա»
			«ա», «բ» և «գ»
			«բ» և «գ»
			«ա» և «բ»

	145	Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», կազմակերպություններում ներդրումները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման դեպքում շահաբաժինները ստանալիս, տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը	Դտ - դրամական միջոցներ Կտ - էտացվելիք շահաբաժիններ
			Դտ - դրամական միջոցներ Կտ - համապատասխան եկամտի հաշիվ
			Դտ - դրամական միջոցներ Կտ - համապատասխան ներդրման հաշիվ
			Դտ - էտացվելիք շահաբաժիններ Կտ - համապատասխան ներդրման հաշիվ
	146	Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», բաժնեմասնակցության մեթոդով հաշվառումը ենթադրում է, որ	ներդրումը սկզբնապես գրանցվում է իրական արժեքով, իսկ հետո ճշգրտվում է ձեռք բերումից հետո ներդրման օբյեկտի կողմից հայտարարած՝ ներդրողին վերագրվող շահաբաժինների մեծության չափով
			ներդրումը սկզբնապես գրանցվում է սկզբնական արժեքով, իսկ հետո ճշգրտվում է իրական արժեքի փոփոխության դեպքում
			ներդրումը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումը
			ներդրումը սկզբնապես գրանցվում է ինքնարժեքով, իսկ հետո ճշգրտվում է ձեռքբերումից հետո ներդրման օբյեկտի զուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխությունների չափով
	147	Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝«Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ներդրումը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառելու դեպքում ներդրման օբյեկտի կողմից հայտարարած՝ ներդրողին վերագրվող շահաբաժինները ներդրողի մոտ ճանաչվում են	որպես եկամուտ
			որպես ներդրման հաշվեկշռային արժեքի նվազում
			որպես ծախս
			ուղղակիորեն սեփական կապիտալում
	148	Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ասոցիացված կազմակերպությունը այնպիսի կազմակերպություն է	որում ներդրողն ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր, բայց որը չի հանդիսանում ներդրողի ոչ դուստր ընկերությունը, ոչ էլ համատեղ կազմակերպությունը
			որտեղ սահմանված է համատեղ պայմանագրային կարգավորում
			որի ֆինանսական և գործառնական քաղաքականությունը կառավարվում է ներդրողի կողմից
			որի նկատմամբ ներդրողն ունի նշանակալի ազդեցություն
	149	Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ասոցիացված կազմակերպությունը այնպիսի կազմակերպություն է	որում ներդրողն ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր
			որում ներդրողն ունի տվյալ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 75%-ից ավելին
			որում ներդրողն ունի տվյալ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50%-ից ավելին
			ճիշտ պատասխանը նշված չէ

	150	Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ստանդարտը պետք է կիրառվի	բոլոր այն կազմակերպությունների կողմից, որոնք հանդիսանում են ներդրման օբյեկտի նկատմամբ համատեղ վերահսկողություն կամ նշանակալի ազդեցություն ունեցող ներդրողներ
			նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
			ասոցիացված կազմակերպություններում այն ներդրումների նկատմամբ, որոնք պահվում են փոխադարձ ֆոնդերի կողմից
			ասոցիացված կազմակերպություններում այն ներդրումների նկատմամբ, որոնք պահվում են վենչուրային կապիտալով կազմակերպությունների կողմից
	151	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», նշվածներից ո՞րն է, որ չի դասակարգվի որպես ֆինանսական ակտիվ	դրամական միջոցները
			այլ ընկերության բաժնային գործիքը
			մեկ այլ կազմակերպությունից դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ ստանալու պայմանագրային իրավունքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	152	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», նշվածներից ո՞րը չի դասակարգվի որպես ֆինանսական ակտիվ	առաջնային շուկայում թողարկողից ձեռք բերված բաժնետոմսերը
			դրամական միջոցներով մարման ենթակա դեբիտորական պարտքը
			ապրանքների ձեռք բերման համար տրված կանխավճարը
			երկորդային շուկայում ձեռք բերված այլ թողարկողի բաժնետոմսերը
	153	Համաձայն ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ստանդարտի, նշվածներից ո՞րը չի դասակարգվում որպես ֆինանսական ակտիվ	դրամական միջոցներով մարման ենթակա դեբիտորական պարտքը
			հիմնական միջոցները
			այլ ֆինանսական ակտիվով մարման ենթակա դեբիտորական պարտքը
			նշված բոլոր ակտիվներն էլ ֆինանսական ակտիվներ են
	154	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», նշվածներից ո՞րն (որո՞նք) է (են) դասակարգվում որպես ֆինանսական ակտիվ	դրամական միջոցներով մարման ենթակա դեբիտորական պարտքը
			նշված բոլոր ակտիվներն էլ ֆինանսական ակտիվներ են
			այլ կազմակերպության կողմից թողարկված պարտատոմսը
			այլ ֆինանսական ակտիվով մարման ենթակա դեբիտորական պարտքը
	155	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», նշվածներից ո՞րը չի դասակարգվում որպես ֆինանսական պարտավորություն	այլ կազմակերպությունից ստացված և դրամական միջոցներով մարման ենթակա փոխառությունը
			իր իսկ կողմից թողարկված բաժնետոմսը
			իր իսկ կողմից թողարկված պարտատոմսը
			այլ ֆինանսական ակտիվով մարման ենթակա կրեդիտորական պարտքը
	156	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», հետագայում սովորական բաժնետոմսերի փոխարկման իրավունք տվող պարտատոմսը թողարկողի մոտ	ներկայացվում է որպես բաժնային գործիք

			դասակարգվում է որպես ֆինանսական պարտավորություն
			ներկայցվում է որպես ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք՝ համաձայն կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության
			ներկայացվում է ըստ գործիքի բաղկացուցիչ 2 մասերի առանձին դասակարգման՝ որոնցից մեկը՝ որպես ֆինանսական պարտականություն, և մյուսը՝ որպես բաժնային գործիք
	157	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», հետագայում արտոնյալ բաժնետոմսերի փոխարկման իրավունք տվող պարտատոմսը թողարկողի մոտ	ներկայացվում է որպես սեփական կապիտալի գործիք
			դասակարգվում է որպես ֆինանսական պարտավորություն և ենթակա է վերանայման՝ որպես փոխարկում իրականացնելու հավանականության փոփոխության հետևանք
			ներկայցվում է որպես ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք՝ համաձայն կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության
			ճիշտ պատասխանը նշված չէ
	158	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», ո՞րը չի դասակարգվի որպես ֆինանսական պարտավորություն	դրամական միջոցներով վճարման ենթակա կրեդիտորական պարքը
			այլ կազմակերպությունից ստացված փոխառությունը
			իր կողմից թողարկված սովորական բաժնետոմսը
			իր կողմից թողարկված պարտատոմսը
	159	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», որ՞ն է համարվում ֆինանսական գործիք	ցանկացած պայմանագիր, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպությունում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք
			ցանկացած պայմանագիր, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն, իսկ մյուս կազմակերպությունում՝ սեփական կապիտալի գործիք
			ցանկացած պայմանագիր, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպությունում՝ միայն ֆինանսական պարտավորություն
			ցանկացած պայմանագիր, որը նախատեսված է բավարարել կազմակերպության ցանկացած գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջմունքները
	160	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», որ՞ն է համարվում սեփական կապիտալի գործիք	ցանկացած պայմանագիր, որը հավաստում է կազմակերպության՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո մնացորդային ակտիվների բաժնի նկատմամբ իրավունքը
			ցանկացած պայմանագիր, որը չի հավաստում կազմակերպության՝ բոլոր պարտավորությունների և ակտիվնեի բաժնի նկատմամբ իրավունքը

			ցանկացած պայմանագիր, որը հավաստում է կազմակերպության կողմից բաժնեմասնակցության գործիքի ձեռքբերման կամ թողարկման իրավունքը
			ցանկացած պայմանագիր, որը հավաստում է կազմակերպության՝ բոլոր պարտավորությունների և ակտիվների բաժնի նկատմամբ իրավունքը
	161	Ընտրեք ամբողջական ճիշտ պատասխանը. Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», որ՞ դեպքերում են ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում. (ա) երբ առկա է հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք (բ) կազմակերպությունը մտադիր է հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով (գ) կազմակերպությունը մտադիր է իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ (դ) երբ դրանք նույն անձի գծով են	ճիշտ են (ա), (բ) և (գ)
			ճիշտ են (բ) և (դ)
			ճիշտ են (ա), (բ), (գ) և (դ)
			ճիշտ են (ա) և (բ)
	162	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժինը թողարկողի կողմից	ճանաչվում է ծախս, եթե այդ արտոնյալ բաժնետոմսը բավարարում է ֆինանսական պարտավորության սահմանմանը
			ճանաչվում է բացառապես որպես շահույթի բաշխում
			ճանաչվում է բացառապես որպես ծախս
			ճանաչվում է ծախս կամ որպես շահույթի բաշխում, ըստ կազմակերպության հայեցողությանը
	163	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», բաժնային գործիքը, դա	ֆինանսական պարտավորություններ են, որոնք առաջացել են հիմնականում դիլերային հավելագների կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով
			ճիշտ տարբերակը նշված չէ:
			ֆինանսական պարտավորություններ են, որոնք առաջացել են ուղղակիորեն կրեդիտորին դրամ, ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով,
			ցանկացած պայմանագիր է, որը հավաստում է կազմակերպության մնացորդային ակտիվների բաժնի նկատմամբ իրավունք՝ կազմակերպության պարտավորությունները հանելուց հետո
	164	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», կազմակերպությունը իր սեփական բաժնային գործիքները հետ գնելիս, այդ գործիքները	ճանաչվում են որպես ակտիվ
			ճանաչվում են որպես պարտավորություն
			ճիշտ պատասխանը նշված չէ
			նվազեցվում են սեփական կապիտալից
	165	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», կազմակերպությունը իր սեփական բաժնային գործիքների ձեռք բերման, վաճառքի, թողարկման կամ մարման արդյունքում	առաջացող արդյունքը չի ճանաչվում որպես եկամուտ/ծախս
			ճիշտ պատասխանը նշված չէ

			առաջացող արդյունքը ճանաչվում է ուղղակիորեն շահույթ/վնասում
			առաջացող արդյունքը ճանաչվում է որպես եկամուտ/ծախս
	166	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», պայմանագիրը, որը հանդիսանում է ոչ ածանցյալ գործիք, ըստ որի կազմակերպությունը պարտավորված է կամ կարող է պարտավորված լինել ստանալ փոփոխական քանակով իր իսկ սեփական բաժնային գործիքներ,	Ֆինանսական պարտավորություն է
			Ֆինանսական ակտիվ է
			Սեփական կապիտալի գործիք է
			Բաղադրյալ գործիք է
	167	Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», ապաճանաչման չափանիշներին չբավարարող փոխանցված ֆինանսական ակտիվը և համապատասխան ֆինանսական պարտավորությունը,	ֆինանսական հաշվետվություններում չեն ներկայացվում
			ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են զուտ հիմունքով /հաշվանցվում են/
			չպետք է հաշվանցվի
			հաշվանցվում են համապատասխան «հաշվանցման համաձայնության» առկայության դեպքում
	168	Ընտրեք ամբողջական ճիշտ պատասխանը. Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը պետք է հաշվանցվեն, երբ	կազմակերպությունը տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք
			կազմակերպությունը մտադիր է իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ
			նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
			կազմակերպությունը մտադիր է հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով
	169	Ընտրեք ամբողջական ճիշտ պատասխանը. Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», երբ կազմակերպությունն իրականացնում է ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության հաշվանցում, ապա	ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ներկայացվի զուտ գումարը
			ճիշտ պատասխանը նշված չէ
			համապարփակ ֆինանսաական հաշվետվությունում պետք է ներկայացվի զուտ գումարը
			Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը չպետք է հաշվանցվեն, սակայն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ներկայացվի զուտ գումարը
	170	Համաձայն ՀՀՄՍ 33-ի՝ «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ», պոտենցիալ սովորական բաժնետոմսը , դա	ֆինանսական գործիք կամ այլ պայմանագիր է, որը դրա տիրապետողին կարող է տալ սովորական բաժնետոմսեր ունենալու (ձեռք բերելու) իրավունք

			այն սովորական բաժնետոմսն է, որը դրա տիրապետողին չի տալիս ձայնի իրավունք
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			ֆինանսական գործիք կամ այլ պայմանագիր է, որը դրա տիրապետողին կարող է տալ արտոնյալ բաժնետոմսեր ունենալու (ձեռք բերելու) իրավունք
	171	Համաձայն ՀՀՄՍ 33-ի՝ «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ», սովորական բաժնետոմսը , դա	ֆինանսական գործիք կամ այլ պայմանագիր է, որը դրա տիրապետողին տալիս է բաժնետոմսեր ունենալու (ձեռք բերելու) իրավունք
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			սեփական կապիտալի գործիք է, որը ստորադասված է սեփական կապիտալի գործիքների բոլոր այլ դասերին
			պարտքային գործիք է
	172	Համաձայն ՀՀՄՍ 33ի՝ «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ», պոտենցիալ սովորական բաժնետոմսերը պետք է համարվեն նոսրացնող այն և միայն այն դեպքում, եթե դրանց փոխարկումը սովորական բաժնետոմսերի ա) կնվազեցներ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը բ) կավելացներ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնասը՝ շարունակական գործունեությունից գ) կնվազեցներ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնասը՝ շարունակական գործունեությունից դ) կավելացներ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«բ» և «դ»
			«ա» և «գ»
	173	Համաձայն ՀՀՄՍ 33-ի՝ «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ», մեկ բաժնետոմսին բաժին ընկնող մեկ բաժնետոմսին նոսրացված շահույթը հաշվարկելու նպատակով կազմակերպությունը պետք է մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող բազային շահույթը կամ վնասը ճշգրտի՝ հաշվի առնելով հետևյալի ազդեցությունը հարկումից հետո	նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի գծով ցանկացած շահաբաժինները կամ այլ հոդվածներ, որոնք նվազեցվել են մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին հոդվածներ, որոնք նվազեցվել են մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող բազային շահույթը կամ վնասը հաշվարկելիս
			բոլոր պատասխանները ճիշտ են
			նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի գծով այդ ժամանակաշրջանի ընթացքում ճանաչված ցանկացած տոկոս
			եկամուտներում ու ծախսերում ցանկացած այլ փոփոխություններ, որոնք կառաջանային նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի փոխարկման արդյունքում
	174	Համաձայն ՀՀՄՍ 34-ի՝ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ», միջանկյալ ժամանակաշրջան է.	բոլոր կազմակերպությունների համար խիստ պարտադիր ֆինանսական հաշվետու ժամանակաշրջան է
			լրիվ ֆինանսական տարուց ավելի երկար ժամանակաշրջանը
			Ճիշտ պատասխանը նշված չէ

			ֆինանսական հաշվետու ժամանակաշրջան է, որն ավելի կարճ է, քան լրիվ ֆինանսական տարին
	175	Նշել ամբողջական պատասխանը: Համաձայն ՀՀՄՍ 34-ի՝ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ», միջանկյալ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացվում է հետևյալ ժամանակաշրջանների համար.	ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ
			միայն անմիջապես նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ
			ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ, նախորդող երկու ֆինանսական տարիների վերջի դրությամբ
			ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ և անմիջապես նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ
	176	Համաձայն ՀՀՄՍ 34-ի՝ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ», միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները նվազագույնը պետք է ներառեն հետևյալ բաղկացուցիչները. ա) ֆինանսական վիճակի մասին խտացված հաշվետվությունը, բ) շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին խտացված հաշվետվությունը, գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին խտացված հաշվետվությունը, դ) դրամական միջոցների հոսքերի մասին խտացված հաշվետվությունը, ե) ընտրված բացատրական ծանոթագրությունները:	«ա», «բ», «գ» և «դ»
			«ա», «բ», «գ», «դ» և «ե»
			«ա»-ն
			«ա» և «բ»
	177	Համաձայն ՀՀՄՍ 34-ի՝ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ», կազմակերպությունը իր միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում առնվազն պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը, եթե դրանք էական են և չեն բացահայտվել միջանկյալ ֆինանսական հաշվետվության որևէ այլ հատվածում.	հայտարարություն այն մասին, որ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կիրառվել են հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը և հաշվարկման մեթոդները, որոնք կիրառվել էին ամենավերջին տարեկան ֆինանսական հաշվետվություններում
			նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
			պարտքային և բաժնային արժեթղթերի թողարկումները, հետգնումները և մարումները
			միջանկյալ գործառնությունների սեզոնային կամ ցիկլային բնույթի վերաբերյալ բացատրական մեկնաբանություններ
	178	Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Փոխհատուցվող գումարը սահմանվում է որպես ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած օտարման ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը
			նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են
			Ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է նվազեցվի մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը

			Ակտիվի արժեզրկումից կորուստը ճանաչվում է որպես ծախս շահույթ/վնասում՝ բացառությամբ եթե ակտիվը, համաձայն այլ ստանդարտի, հաշվառվում է վերագնահատված արժեքով
	179	Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», արժեզրկման հակադարձման արդյունքում ակտիվի հաշվեկշռային արժեքը չպետք է՝	փոքր լինի հաշվեկշռային արժեքից, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով նախորդ տարիներին արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ
			գերազանցի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից նվազագույնը
			գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով նախորդ տարիներին արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ
			փոքր լինի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից նվազագույնից
	180	Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», ակտիվի օգտագործման արժեքը որոշելու նպատակով ապագա դրամական հոսքերի գնահատումները պետք է ներառեն՝ ա) այն դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատականները, որով կազմակերպությունը ակնկալում է ստանալ տվյալ ակտիվից բ) դրամի արժեքը ժամանակի մեջ՝ ներկայացված ռիսկային շուկայական տոկոսադրույքով գ) այդ դրամական միջոցների ապագա հոսքերի գումարների և ժամկետների հնարավոր տատանումների վերաբերյալ սպասումները	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
	181	Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», գուդվիլի արժեզրկումից կորուստը	հակադարձվում է, երբ արժեզրկումից կորստի պատճառ է հանդիսացել բացառիկ բնույթի յուրահատուկ արտաքին իրադարձություն, որի կրկնվելն ապագայում չի ակնկալվում,
			չպետք է հակադարձվի հետագա ժամանակաշրջանում
			հակադարձվում է, երբ հետագայում տեղի են ունեցել արտաքին իրադարձություններ, որոնք վերացրել են արժեզրկում առաջացնող իրադարձության ազդեցությունը:
			ցանկացած դեպքում հակադարձվում է
	182	Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», երբ ակտիվի արժեզրկումից կորստի գնահատված մեծությունը գերազանցում է ակտիվի հաշվեկշռային արժեքը, ապա	Տարբերությունը վերագրվում է սեփական կապիտալին
			Պարտավորություն է ճանաչվում միայն այն դեպքում, երբ դա պահանջվում է մեկ այլ էտանդարտով
			Տարբերությունը նվազեցվում է սեփական կապիտալից
			Արժեզրկում չի ճանաչվում

	183	Համաձայն «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Եթե արժեզրկումից կորստի գնահատված գումարն ավելի մեծ է, քան այդ ակտիվի հաշվեկշռային արժեքը, ապա կազմակերպությունը պետք է ճանաչի պարտավորություն այն և միայն այն դեպքում, եթե դա պահանջվում է մեկ այլ ստանդարտով
			Նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
			Գուդվիլի գծով ճանաչված արժեզրկումից կորուստը չպետք է հակադարձվի հետագա ժամանակաշրջանում
			Փոխհատուցվող գումարը սահմանվում է որպես ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը
	184	Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», ո՞րն է ակտիվի օգտագործման արժեքը	ապագա դրամական հոսքերի ներկա (զեղչված) արժեքը, որն ակնկալվում է ստանալ ակտիվից կամ դրամաստեղծ միավորից
			այն գումարը, որը կարելի է ստանալ ակտիվի վաճառքից իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում
			այն գումարն է, որը ակնկալվում է ստանալ միայն ակտիվի շարունակական օգտագործումից՝ համապատասխան ծախսումների գծով խնայողությունները հաշվի առնելով
			այն գումարը, որը կարելի է ստանալ ակտիվի վաճառքից իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում՝ հանած օգտագործման և օտարման ծախսումները
	185	Համաձայն ՀՀՄՍ 36-ի «Ակտիվների արժեզրկում», ո՞րն է որ չի կարող հանդիսանալ ակտիվների հնարավոր արժեզրկման հայտանիշ	տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ակտիվի շուկայական արժեքը նվազել է զգալիորեն ավելի մեծ չափով, քան կակնկալվեր որոշակի ժամանակ անցնելու կամ սովորական օգտագործման արդյունքում
			ներքին հաշվետվական համակարգը վկայում է, որ ակտիվի տնտեսական ցուցանիշները ավելի ցածր են կամ կլինեն ավելի ցածր, քան ակնկալվում էր
			հաշվետու կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը ավելի փոքր է, քան նրա շուկայական կապիտալացումը
			վկայություն կա ակտիվի բարոյական մաշվածության կամ ֆիզիկական վնասվածության վերաբերյալ
	186	Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», արժեզրկումից կորուստը պետք է անմիջապես ճանաչվի	որպես ծախս շահույթ/վնասում՝ բացառությամբ եթե ակտիվը, համաձայն այլ ստանդարտի, հաշվառվում է վերագնահատված արժեքով
			կամ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ սեփական կապիտալում, ըստ կազմակերպության ընտրած հաշվապահական հաշվառման քաղաքականության
			բացառապես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում
			բացառապես ուղղակիորեն սեփական կապիտալում

	187	Համաձայն ՀՀՄՍ-ի 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», փոխհատուցվող գումարը սահմանվում է	որպես ակտիվի վաճառքից ստացվող զուտ գումար
			որպես ակտիվի՝ ակտիվի իրական արժեքից նվազեցրած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից նվազագույնը
			որպես առավելագույնը՝ ակտիվի իրական արժեքից նվազեցրած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից
			որպես ակտիվի օգտագործումից ստացվող զուտ գումար
	188	Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», ե՞րբ է ճանաչվում ակտիվի գծով արժեզրկումից կորուստը	երբ ակտիվի իրական արժեքը մեծ է փոխհատուցվող գումարից
			երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը մեծ է փոխհատուցման գումարից
			երբ նրա փոխհատուցվող գումարը մեծ է իրական արժեքից
			երբ նրա փոխհատուցվող գումարը մեծ է նրա հաշվեկշռային արժեքից
	189	Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», վերագնահատված արժեքով հաշվառվող ակտիվների գծով	արժեզրկում պետք է ճանաչվի, միայն եթե այդ ակտիվները ունեն գործող շուկա և այդ ակտիվի օտարման ծախսումները աննշան են
			արժեզրկում կարող է ճանաչվել, եթե այդ ակտիվի օտարման ծախսումները աննշան չեն
			արժեզրկում պետք է ճանաչվի ակտիվի օգտագործմանը համամասնորեն
			արժեզրկում երբեք չի ճանաչվում
	190	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», ակտիվների ակնկալվող օտարումից օգուտները	պետք է հաշվառվեն պահուստը չափելիս
			չպետք է գերազանցեն պահուստի գումարը
			չպետք է հաշվառվեն պահուստը չափելիս
			պետք է հաշվառվեն պահուստը չափելիս, եթե ակնկալվող օտարումը սերտորեն կապված է այն դեպքի հետ, որը հանեցնում է պահուստի առաջացմանը
	191	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», նշված սահմանումներից ո՞րն է սխալ.	Դեպքը, որը հանգեցնում է իրավական կամ կառուցողական պարտականության, որի մարումից խուսափելու ոչ մի իրատեսական այլընտրանք կազմակերպությունը չունի, կոչվում է պարտավորեցնող դեպք
			Պարտականությունը, որը բխում է պայմանագրից (բացահայտորեն նշված լինելու կամ անուղղակիորեն պայմանագրի դրույթներից հետևելու միջոցով), օրենսդրությունից կամ այլ գործադրումներից կոչվում է իրավական
			Ծրագիրը, որը պլանավորվում և վերահսկվում է կազմակերպության ղեկավարության կողմից և էականորեն փոփոխում է կազմակերպության կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեության ոլորտը, կամ այն եղանակը, որով վարվում է այդ գործունեությունը, կոչվում է անբարենպաստ պայմանագիր

			Անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորությունը կոչվում է պահուստ
	192	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», պայմանագիրը, որով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները, կոչվում է	կառուցողական պայմանագիր
			շահավետ պայմանագիր
			պայմանական պայմանագիր
			անբարենպաստ պայմանագիր
	193	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», ստեղծված պահուստը կարող է օգտագործվել	ցանկացած տեսակի ծախսերի համար
			միայն դատական ծախսերի համար
			միայն ֆինանսական ծախսերի համար
			միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր
	194	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», ապագա գործառնական վնասների գծով	ճանաչվում է պահուստ, և պահուստի վերաբերյալ բացահայտումներ չեն կատարվում
			ճիշտ տարբերակը նշված չէ
			ճանաչվում է պահուստ,և պահուստի վերաբերյալ կատարվում են բացահայտումներ
			պահուստ չի ճանաչվում
	195	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», նշված սահմանումներից ո՞րն է ճիշտ.	Պայմանագիրը, որով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները, կոչվում է անբարենպաստ պայմանագիր
			Պարտականությունը, որը բխում է պայմանագրից (բացահայտորեն նշված լինելու կամ անուղղակիորեն պայմանագրի դրույթներից հետևելու միջոցով), օրենսդրությունից կամ յալ գործադրումներից կոչվում է իրավական
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
			Անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորությունը կոչվում է պահուստ
	196	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», պահուստը պետք է ճանաչվի, երբ ա) կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել	«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
			«բ» և «գ»

	197	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», նշվածներից ո՞րն է հանգեցնում իրավական կամ կառուցողական պարտականության, որի մարումից խուսափելու ոչ մի իրատեսական այլընտրանք կազմակերպությունը չունի.	պահուստ
			պայմանական դեպք
			ճիշտ պատասխանը նշված չէ
			պարտավորեցնող դեպք
	198	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», եթե կազմակերպությունն ունի անբարենպաստ պայմանագիր,	ապա այդ պայմանագրի գծով ներկա պարտականությունը չպետք է ճանաչվի որպես պահուստ
			ճիշտ պատասխանը նշված չէ
			ապա այդ պայմանագրի գծով պահուստ չի ճանաչվում, սակայն պահուստի վերաբերյալ կատարվում են բացահայտումներ
			ապա այդ պայմանագրի գծով ներկա պարտականությունը պետք է ճանաչվի և չափվի որպես պահուստ
	199	Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	ակտիվների ակնկալվող օտարումից օգուտները պետք է հաշվի առնվեն պահուստը չափելիս
			ապագա գործառնական վնասների համար պահուստներ պետք է ճանաչվեն
			նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
			եթե կազմակերպությունն ունի անբարենպաստ պայմանագիր, ապա այդ պայմանագրի գծով ներկա պարտականությունը պետք է ճանաչվի և չափվի որպես պահուստ
	200	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», նշվածներից որո՞նք են հանդիսանում ոչ նյութական ակտիվներ. ա) համակարգչային ծրագրեր, բ) հաճախորդների ցուցակները գ) ներստեղծված գուդվիլ դ) արտոնագրեր	«ա», «բ» և «գ»
			«գ»
			«ա» և «դ»
			«ա», «բ» և «դ»
	201	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», այն ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն անորոշ օգտակար ծառայության ժամկետ (ՕՕԺ)	ամորտիզացվում են նվազող մնացորդի մեթոդով
			ամորտիզացվում են գծային մեթոդով
			ամորտիզացվում են գծային մեթոդով, ընդ որում՝ որպես ՕՕԺ ընդունվում է 10 տարին
			չեն ամորտիզացվում
	202	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», ոչ նյութական ակտիվը պետք է ապաճանաչվի	օտարման պահին
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
			երբ դրա օգտագործումից այլևս չեն ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ

			երբ դրա հետագա օտարումից այլևս չեն ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ
	203	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի, նշվածներից որո՞նք չեն հանդիսանում ոչ նյութական ակտիվներ. ա) համակարգչային ծրագրեր, բ) ներստեղծված գուդվիլ, գ) մարկետինգային իրավունքները դ) ապրանքներ	«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
			«դ»
			«բ» և «դ»
	204	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», օգտակար ծառայությունը դա. ա) այն ժամանակահատվածն է, որի ընթացքում կազմակերպությունն անկնկալում է օգտագործել ակտիվը բ) արտադրանքի կամ այլ նմանատիպ միավորների այն քանակը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ տվյալ ակտիվից գ) ստացվելիք ծառայությունների ծավալը դրամային արտահայտությամբ նվազեցրած դրանց համար կատարվելիք ծախսումներով	«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
			«բ» և «գ»
	205	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի միմիայն այն դեպքում. երբ. ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն բ) ակտիվը իրացվելի է գ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
	206	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», ոչ նյութական ակտիվը սկզբնապես պետք է չափվի	իրական արժեքով
			իրական արժեքով՝ հանած ձեռքբերման ծախսումները
			ներկա արժեքով
			սկզբնական արժեքով
	207	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է. ա) դրա գնման գինը բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները գ) նոր արտադրանքի կամ ծառայության շուկայում ներկայացնելու ծախսումները	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»

	208	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», հետազոտության փուլում ներդրված միջոցները պետք է ճանաչվեն որպես	ոչ նյութական ակտիվներ
			ճիշտ պատասխանը նշված չէ
			հետաձգված եկամուտ
			ծախս
	209	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», մշակումից առաջացող միջոցները որպես ոչ նյութական ակտիվ ճանաչման անհրաժեշտ պայմաններից են. ա) ոչ նյութական ակտիվը այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար բ) նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, համակարգերի կամ ծառայությունների համար այլընտրանքների որոնում գ) ոչ նյութական ակտիվին մշակման ընթացքում վերագրելի ծախսումներն արժանահավատորեն չափելու իր կարողությունը	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
	210	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», սկզբնական ճանաչումից հետո ոչ նրութական ակտիվը պետք է հաշվառվի. ա) սկզբնական արժեքով բ) վերագնահատված արժեքով գ) ներկա արժեքով	«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
			«բ» և «գ»
	211	Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվի	ամորտիզացիան կատարվում է միայն գծային մեթոդով
			ամորտիզացիան չի իրականացվում
			ճիշտ պատասխանը նշված չէ
			ամորտիզացիոն հատկացումները կապիտալացվում են
	212	Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», ո՞ր պայմաններն են առավել բնութագրում ներդրումային գույքը: Ներդրումային գույք՝ գույք (հող կամ շինություն, շինության մի մաս կամ և հող, և շինություն), որը պահվում է՝ ա) դրա արժեքի աճի նպատակով բ) արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով օգտագործելու համար գ) վարձակալությունից եկամուտ վաստակելու նպատակով դ) սովորական (ամենօրյա) գործունեության ընթացքում վաճառքի նպատակով	«ա» և «բ»
			«գ» և «դ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
	213	Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», նշվածներից որը ՉԻ համարվում ներդրումային գույք	գույք, որը պահվում է՝ սովորական գործունեության ընթացքում վաճառելու համար,

			մեկ այլ կազմակերպությանը ֆինանսական վարձակալությամբ տրված գույք
			Նշված բոլոր պատասխանները ճիշտ են
			գույք, որը գտնվում է կառուցման կամ բարելավման գործընթացում՝ հետագա վերավաճառքի նպատակով
	214	Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», նշվածներից որը ՉԻ համարվում ներդրումային գույք	հող, որը պահվում է երկար ժամկետի ընթացքում դրա արժեքի աճի, այլ ոչ թե սովորական գործունեության ընթացքում կարճաժամկետ վաճառքի նպատակով
			կազմակերպությանը պատկանող շինություն, որը տրված է մեկ կամ ավելի գործառնական վարձակալությունների
			հող, որը պահվում է ներկայումս չորոշված նպատակով ապագա օգտագործման համար
			գույք, որը կառուցվում կամ բարելավվում է երրորդ կողմի պատվերով
	215	Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», ներդրումային գույքը պետք է ճանաչվի որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ ա) հավանական է, որ այդ ներդրումային գույքի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն բ) ներդրումային գույքի ինքնարժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել գ) ներդրումային գույքի ինքնարժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել	«ա» և «բ»
			«ա»
			«գ»
			«ա» և «գ»
	216	Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	ներդրումային գույքը սկզբնապես պետք է չափվի իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով)
			Նշված բոլոր պատասխանները ճիշտ են
			գործառնության հետ կապված ծախսումները պետք է ներառվեն սկզբնապես չափման մեջ
			ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտը կամ վնասը պետք է ներառվի այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում այն առաջանում է:
	217	Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», ներդրումային գույքը սկզբնապես պետք է չափվի	իրական արժեքով
			սկզբնական արժեքով
			սկզբնական արժեքով՝ հանած ձեռքբերման ծախսումները
			ներկա արժեքով
	218	Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», երբ պաշարները վերադասակարգվում են որպես ներդրումային գույք, որը հաշվառվելու է իրական արժեքով, ապա	այդ ամսաթվի դրությամբ գույքի իրական արժեքի և նախորդ հաշվեկշռային արժեքի միջև ցանկացած տարբերության գծով ձևավորվում է պահուստ կապիտալում
			ճիշտ պատասխան նշված չէ
			այդ ամսաթվի դրությամբ գույքի իրական արժեքի և նախորդ հաշվեկշռային արժեքի միջև ցանկացած տարբերություն պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում

			այդ ամսաթվի դրությամբ գույքի իրական արժեքի և նախորդ հաշվեկշռային արժեքի միջև ցանկացած տարբերություն պետք է ճանաչվի ակտիվներում կամ պարտավորություններում
	219	Համաձայն ՖՀՄՍ 3-ի՝ «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ», գուդվիլը սահմանվում է որպես ո՞ր ստորև նշված հոդվածի (ների) և ձեռքբերման դրությամբ ՖՀՄՍ 3-ի համաձայն չափված ձեռքբերված որոշելի ակտիվների ստանձնած պարտավորությունների զուտ գումարէ դրական տարբերություն ա) փոխանցված հատուցում, որը ՖՀՄՍ 3-ի համաձայն, ընդհանուր առմամբ պետք է չափվի ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով բ) ձեռքբերվողում ցանկացած չվերահսկող բաժնեմասի գումար՝ չափված ՖՀՄՍ 3-ի համաձայն գ) ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում ձեռքբերվողի սեփական կապիտալում ձեռքբերողի նախկինում ունեցած բաժնեմասի՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեք.	«ա»
			«ա», «բ» և «գ»
			«բ»
			«ա» և «բ»
	220	Ա կազմակերպությունը ձեռք է բերել Բ կազմակերպության զուտ ակտիվների 70%-ը վճարելով 1.700.000 ՀՀ դրամ: Բ կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը այդ պահի դրությամբ կազմել է 1.600.000 ՀՀ դրամ, իսկ իրական արժեքը՝ 1.650.000 ՀՀ դրամ: Համաձայն ՖՀՄՍ 3-իէ «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ», Ա ընկերության մոտ ձեռքբերումից առաջացել է	բացասական գուդվիլ 545. 000 ՀՀ դրամ
			գուդվիլ 580.000 ՀՀ դրամ
			գուդվիլ 545. 000 ՀՀ դրամ
			եկամուտ 50.000 ՀՀ դրամ
	221	Համաձայն ՖՀՄՍ 3-ի՝ «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ», ձեռքբերման մեթոդի պահանջներից է (են)է ա) ձեռքբերողի որոշակիացում բ) ձեռքբերման ամսաթվի որոշում գ) ձեռքբերման դիմաց վճարում դ) գուդվիլի կամ զեղչով ձեռքբերումից օգուտի ճանաչում և չափում	«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«ա», «բ» և «դ»
			«բ» և «դ»
	222	Ա կազմակերպությունը ձեռք է բերել Բ կազմակերպության զուտ ակտիվների 70%-ը վճարելով 1.000.000 ՀՀ դրամ: Բ կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը այդ պահի դրությամբ կազմել է 1.600.000 ՀՀ դրամ, իսկ իրական արժեքը՝ 1.650.000 ՀՀ դրամ: Համաձայն ՖՀՄՍ 3-իէ «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ», Ա ընկերության մոտ ձեռքբերումից առաջացել է	եկամուտ 600.000 ՀՀ դրամ
			ճիշտ պատասխան նշված չէ
			գուդվիլ 155.000 ՀՀ դրամ
			բացասական գուդվիլ 155.000 ՀՀ դրամ

	223	Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», կազմակերպությունը որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) պետք է չափի	դրա հաշվեկշռային արժեքով
			դրա հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից նվազագույնով
			դրա հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից առավելագույնով
			դրա հաշվեկշռային արժեքից և, իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներից նվազագույնով
	224	Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», կազմակերպությունը պետք է դասակարգի ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) որպես վաճառքի համար պահվող, եթե դրա հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով	վարձակալության գծով վճարումների միջոցով
			ճիշտ պատասխան նշված չէ
			շարունակական օգտագործման միջոցով
			դրա հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի միջոցով
	225	Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», եթե վաճառքի տեղի ունենալն ակնկալվում է մեկ տարուց հետո, ապա կազմակերպությունը պետք է	վաճառքի ծախսումները կրկնապատկի
			վաճառքի ծախսումները անտեսի
			վաճառքի ծախսումները չափի դրանց ներկա արժեքով
			վաճառքի ծախսումները չափի դրանց իրական արժեքով
	226	Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների հետագա չափումը իրականացվում է	իրական արժեքով
			ճիշտ պատասխան նշված չէ
			ներկա արժեքով
			սկզբնական գումարով
	227	Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», ընդհատված գործառնությունը կազմակերպության բաղադրիչ մաս է, որը կամ օտարվել է, կամ դասակարգված է որպես վաճառքի համար պահվող, և ա) իրենից ներկայացնում է գործունեության առանձին խոշոր ուղղություն կամ գործառնությունների իրականացման աշխարհագրական տարածք բ) կազմում է գործունեության առանձին խոշոր ուղղության կամ գործառնությունների իրականացման աշխարհագրական տարածքի օտարման մեկ համակարգված պլանի մաս գ) բացառապես վերավաճառելու նպատակով ձեռք բերված դուստր կազմակերպություն է	«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«գ»
			«բ» և «գ»

	228	Համաձայն ՖՀՄՍ 7-ի՝ «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ», կազմակերպությունը	պետք է բացահայտի միայն այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է հարկային մարմիններին որոշումներ իրականացնելու համար
			պարտավոր չէ բացահայտել որևէ տեղեկատվություն
			պետք է բացահայտի տեղեկատվություն, որը թույլ կտա իր ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին գնահատել ֆինանսական գործիքների նշանակությունը (ազդեցությունը) իր ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների համար (վրա)
			ներկայացնում է որոշակի տեղեկատվություն՝ միայն պահանջի ներկայացման դեպքում
	229	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», էկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները պետք է չափվեն	ամորտիզացված արժեքով
			իրական արժեքով, բացառությամբ թողարկված պարտատոմսերի և այլ ներգրավված միջոցների
			ճիշտ պատասխանը նշված չէ
			իրական արժեքով
	230	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները այն ակտիվներն են, որոնք	առաջանում են կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ, ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով
			հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիք
			չեն հանդիսանում ամորտիզացված արժեքով հաշվառվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
			ունեն ֆիքսված մարման ժամկետ
	231	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինասական ակտիվները չափվում են՝	իրական արժեքից և սկզբնական արժեքից նվազագույնով
			շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով
			նշված բոլոր պատասխանները սխալ են
			սկզբնական արժեքից և իրացման արժեքից առավելագույնով
	232	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», նշված ակտիվներից որը, սովորաբար, չի կարող դասակարգվել որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրում.	մինչև 1 տարի մարման ժամկետով պարտատոմսը
			1 տարուց ավելի մարման ժամկետով պարտատոմսը
			ոչ կապակցված կազմակերպության սովորական բաժնետոմսը
			նշված բոլոր ֆինանսական ակտիվներն էլ կարող են դասակարգվել որպես մինչև մարման ժամկետը պահվող
	233	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», կազմակերպության կողմից տրամադրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը սովորաբար հաշվառվում են	ամորտիզացված արժեքով
			այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով
			իրական արժեքից և ամորտիզացված արժեքից նվազագույնով

			շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով
	234	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով չեն հաշվառվում	ածանցյալ գործիքները
			ճիշտ պատասխանը նշված չէ
			վերավաճառքի համար ձեռք բերված արժեթղթերը
			տրամադրված վարկերը
	235	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով են հաշվառվում	ածանցյալ գործիքները
			տրամադրված երկարաժամկետ վարկերը
			ճիշտ պատասխանը նշված չէ
			ներգրավված ժամկետային ավանդները
	236	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», այլ համապարփակ եկամուտներով վերաչափվող իրական արժեքով են հաշվառվում այն ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են ա) պայմանագրային դարամական հոսքերի հավաքագրման բ) վաճառքի նպատակով գ) մայր գումարների և տոկոսների վճարները տեղի են ունենում պայմանագրով սահմանված ժամկետներում	«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
			«բ» և «գ»
	237	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», պարտավորություններում ընդգրկվող ածանցյալները հաշվառվում են՝	ամորտիզացված արժեքով
			այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով
			ամորտիզացված արժեքից և շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքից նվազագույնով
			շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով
	238	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես	ամորտիզացված արժեքով հաշվառվող
			բոլոր պատասխանները ճիշտ են
			իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող
			շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող
	239	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», առևտրային դեբիտորական պարտքերը հաշվառվում են.	ամորտիզացված արժեքով
			շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով
			բոլոր պատասխանները սխալ են
			այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով
	240	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», եթե պարունակվող ածանցյալ գործիքը հնարավոր չէ առանձին հաշվառել, ապա ողջ բաղադրյալ գործիքը դասակարգվում է որպես՝	ամորտիզացված արժեքով

			ամորտիզացված արժեքից և շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքից առավելագույնով
			այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով
			շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով
	241	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», առևտրային դեբիտորական պարտքերը հաշվառվում են.	ամորտիզացված արժեքով
			շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով
			գործարքի գնով
			այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով
	242	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները չափելիս օգտագործվող արդյունավետ տոկոսադրույքը	շուկայում գործող փոխառության միջին դրույքն է
			ճիշտ պատասխանը նշված չէ
			ԿԲ կողմից սահմանված հաշվարկային դրույքն է
			այն դրույքն է, որով ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գոյության ակնկալվող ժամանակահատվածում, դրամական միջոցների ակնկալվող վճարումների հոսքերը զեղչվում են ճշգրտորեն մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ընթացիկ հաշվեկշռային արժեքը
	243	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվների եկամուտները հաշվառվում են	համամասնական մեթոդով
			տարիների հանրագումարի մեթոդով
			տարիների նվազման մեթոդով
			արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով
	244	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ինչպես կազդի որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող դասակարգված ֆիքսված դրույքով պարտատոմսի հաշվեկշռային արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների աճը (ենթադրվում է, որ ֆինանսական ակտիվները չեն արժեզրկվել)	կմեծացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը
			բոլոր պատասխաններն էլ սխալ են
			կփոքրացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը
			չի ազդի

	245	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ինչպես կազդի որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող դասակարգված ֆիքսված դրույքով պարտատոմսի հաշվեկշռային արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների նվազումը	կմեծացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը
			չի ազդի
			բոլոր պատասխաններն էլ սխալ են
			կփոքրացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը
	246	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ինչպես կազդի որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆիքսված դրույքով պարտատոմսի հաշվեկշռային արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների նվազումը	կմեծացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը
			բոլոր պատասխաններն էլ սխալ են
			կփոքրացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը
			չի ազդի
	247	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ինչպես կազդի որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆիքսված դրույքով պարտատոմսի հաշվեկշռային արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների աճը	կմեծացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը
			չի ազդի
			բոլոր պատասխաններն էլ սխալ են
			կփոքրացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը
	248	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», նշվածներից ո՞րը չի հանդիսանում ֆինանսական ակտիվների առանձին կատեգորիա	ամորտիզացված արժեքով հաշվառվող
			հեջավորման ածանցյալ գործիքներ
			շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող
			այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող
	249	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», կազմակերպությունը կճանաչի ֆինանսական ակտիվը իր հաշվեկշռում այն դեպքում, երբ	կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ
			եթե նա իրացնում է պայմանագրով սահմանված օգուտների նկատմամբ իրավունքներy
			ճիշտ պատասխանը նշված չէ
			ունենում է դրամական միջոցներ ստանալու կամ վճարելու իրավական պարտականություն
	250	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են՝	Իրական արժեքով՝ ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը
			Իրական արժեքով՝ առանց գործարքի հետ կապված ծախսումների, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը
			Սկզբնական արժեքով
			Սկզբնական արժեքից և իրական արժեքից նվազագույնով

	251	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող, դասակարգված ներդրումները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են՝	Իրական արժեքով՝ ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը
			Սկզբնական արժեքից և իրական արժեքից նվազագույնով
			Սկզբնական արժեքով
			Իրական արժեքով՝ առանց գործարքի հետ կապված ծախսումների, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը
	252	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումների գծով դրամական հոսքերի փոփոխության դեպքում որպես ապագա դրամական հոսքերի զեղչման դրույք կիրառվում է՝	սկզբնական ճանաչման ժամանակ որոշված արդյունավետ տոկոսադրույքը
			տվյալ պահին ակնկալվող ապագա հոսքերի վրա հիմնված՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքը
			նմանատիպ ֆինանսական ակտիվների շուկայական եկամտաբերության տոկոսադրույքը
			լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը
	253	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ֆինանսական ակտիվները կարող են վերադասակարգվել.	շաբաթական պարբերականությամբ
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			ֆինանսական ակտիվների վերադասակարգման ենթակա չեն
			բիզնես մոդելի վերանայման դեպքում
	254	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ստորև թվարկած ո՞ր հատկանիշներով է օճտված ածանցյալ գործիքը. ա) նրա արժեքը փոփոխվում է՝ ի պատասխան սահմանված տոկոսադրույքի, ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի, գների կամ դրույքների ինդեքսի, վարկունակության, վարկային ինդեքսի կամ համանման այլ փոփոխականի փոփոխությունների բ) չի պահանջում սկզբնական զուտ ներդրում կամ էլ պահանջում է աննշան սկզբնական զուտ ներդրում՝ պայմանագրերի այլ տեսակների համեմատ, որոնք շուկայական պայմանների փոփոխություններին հակազդում են համանման ձևով գ) նրա գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա որևէ ամսաթվին	«ա» և «բ»
			«ա» և «գ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
	255	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ֆինանսական ակտիվը ենթակա է ապաճանաչման, եթե ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը բ) այն փոխանցվում է և փոխանցվում են նրա սեփականության հետ կապված, ըստ էության բոլոր ռիսկերն ու հատուցումները գ) այն փոխանցվում է ռեպո համաձայնագրի շրջանակներում	«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«բ» և «գ»
			«ա» և «գ»

	256	Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», նշվածներից որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումներ են դասակարգվում այն ներդրումները,	որոնց կազմակերպությունը սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսում է որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով
			որոնց կազմակերպությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի
			ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք կազմակերպությունը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը
			Նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
	257	«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն՝ չաշխատող դասակարգված (բացառությամբ անհուսալի դասի) ակտիվի գծով հաշվեգրվող տոկոսների գծով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.	Դտ - տոկոսային եկամուտ Կտ - չճանաչված տոկոսային եկամուտ
			Դտ - էտացվելիք տոկոսներ Կտ - չճանաչված տոկոսային եկամուտ
			Դտ - տրամադրված վարկ Կտ - տոկոսային եկամուտ
			Դտ - տրամադրված վարկ Կտ - չճանաչված տոկոսային եկամուտ
	258	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկը տրամադրել է վարկ.	Դտ - դրամական միջոց Կտ - տրամադրված վարկ
			Դտ - տրամադրված վարկ Կտ - դրամական միջոց
			Դտ - տրամադրված վարկ Կտ - տոկոսային եկամուտ
			Դտ - էտացվելիք տոկոսներ Կտ - տոկոսային եկամուտ
	259	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Տրամադրված վարկի գծով ստացվելիք եկամուտը արդյունավետ տոկոսադրույքով հաշվեգրելիս.	Դտ - դրամական միջոց Կտ - տոկոսային եկամուտ
			Դտ - էտացվելիք տոկոսներ Կտ - տոկոսային եկամուտ
			Դտ - տրամադրված վարկ Կտ - տոկոսային եկամուտ
			Դտ - տոկոսային եկամուտ Կտ - տրամադրված վարկ
	260	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Տրամադրված վարկի գծով հաշվեգրված եկամուտը ստանալիս.	Դտ - դրամական միջոց Կտ - էտացվելիք տոկոսներ
			Դտ - տոկոսային եկամուտ Կտ - տրամադրված վարկ
			Դտ - տրամադրված վարկ Կտ - տոկոսային եկամուտ
			Դտ - էտացվելիք տոկոսներ Կտ - տոկոսային եկամուտ

	261	Բանկի կողմից տրամադրվել է 1000 միավոր գումարով վարկ: Ընդհանուր պահուստ ձևավորելիս տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.	Դտ - վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր Կտ - վարկ 10 միավոր
			Դտ - եկումուտ 10 միավոր Կտ - վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր
			Դտ -վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր Կտ - եկամուտ 10 միավոր
			Դտ - ծախս 10 միավոր Կտ - վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր
	262	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկը 2003 թ.-ի նոյեմբեր ամսին 200 միավորով ձեռք է բերել մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ, որի անվանական արժեքը 190 միավոր է:	Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ 200 միավոր Կտ - դրամական միջոցներ 200 միավոր
			Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ 190 միավոր Դտ - համապատասխան ծախսային հաշիվ 10 միավոր Կտ - դրամական միջոցներ 200 միավոր
			Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ 190 միավոր Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթի հավելավճար 10 միավոր Կտ - դրամական միջոց 200 միավոր
			Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ 200 միավոր Կտ - համապատասխան եկամտային հաշիվ 10 միավոր Կտ - դրամական միջոցներ 190 միավոր:
	263	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկն իրացնում է առևտրական նպատակով պահվող իր արժեթուղթը 170 միավորով: Արժեթղթի ձեռքբերման արժեքը 140 միավոր է: Ձեռքբերումից մինչև վաճառք ընկած ժամանակահատվածում արժեթուղթը վերագնահատվել է, որի արդյունքում ձևավորվել է բացասական վերագնահատման արդյունք՝ 15 միավոր:	Դտ - դրամական միջոցներ 170 միավոր, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 125 միավոր, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 45 միավոր
			Ճիշտ պատասխանը նշված չէ:
			Դտ - դրամական միջոցներ 170 միավոր, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 140 միավոր, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթի վաճառքից ստացված եկամուտ 30 միավոր Դտ - Վաճառքի համար մատչելի արժեթղթի վերագնահատումից ստացված կորուստ 15 միավոր

			Դտ - դրամական միջոցներ 170 միավոր, Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթի շուկայական գնի ճշտման հաշիվ 15 միավոր, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 140 միավոր, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 45 միավոր
	264	Բանկը 2004թ.-ի ապրիլի 7-ին 100 միավորով վերավաճառքի նպատակով ձեռք է բերել արժեթուղթ: 2004 թ.ի մայիսի 5-ին այդ արժեթուղթը վաճառել է 115 միավորով: Ձեռքբերումից մինչև վաճառք ընկած ժամանակահատվածում արժեթուղթը վերագնահատվել է, որի արդյունքում ձևավորվել է դրական վերագնահատման արդյունք՝ 9 միավոր: Արժեթուղթը իրացնելիս ի՞նչ ձևակերպում է տրվում.	Դտ - դրամական միջոցներ 115 միավոր, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 100 միավոր, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին. ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 15 միավոր,
			Դտ - դրամական միջոցներ 115 միավոր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 100 միավոր Կտ - արժեթղթի վերագնահատումից եկամուտ 9 միավոր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին. ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 6 միավոր
			Դտ - դրամական միջոցներ 115 միավոր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 109 միավոր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին. ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 6 միավոր
			Դտ - դրամական միջոցներ 115 միավոր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթի շուկայական գնի ճշտման հաշիվ 9 միավոր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 100 միավոր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին. ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 6 միավոր
	265	Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի շուկայական գնի բարձրացման դեպքում ձևակերպվում է.	Դտ - արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ
			Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր Կտ - արժեթղթերի վերագնահատումից օգուտներ
			Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր Կտ - արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ:

			Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ
	266	Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի շուկայական գնի անկման դեպքում ձևակերպվում է.	Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր, Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ
			Դտ - արժեթղթերի վերագնահատումից կորուստներ, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
			Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ, Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր
			Դտ - արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ, Կտ - արժեթղթերի վերագնահատումից օգուտներ
	267	Համաձայն հաշվային պլանի, ո՞ր հաշիվներում է արտացոլվում շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխության հետևանքով առաջացող ճանաչված շահույթը	շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ
			կազմակերպության կողմից ընտրված տարբերակով
			վերագնահատման պահուստներ
			շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ
	268	Համաձայն հաշվային պլանի, ո՞ր հաշիվներում է արտացոլվում շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխության հետևանքով առաջացող ճանաչված վնասը	կորուստներ շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից
			վերագնահատման պահուստներ
			կորուստներ շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից
			կորուստներ շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից կամ վերագնահատման պահուստ հաշիվներում
	269	Համաձայն հաշվային պլանի, շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի վաճառքից առաջացած դրական արդյունքը արտացոլվում է՝	«շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ» հաշվում
			«արժեթղթերի հավելավճար» հաշվում
			«շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ» հաշվում
			«արժեթղթերի վերագնահատման պահուստ» հաշվում
	270	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: «Ա» բանկը «Բ» բանկից առևտրային նպատակով ձեռք է բերել արժեթղթեր 90.000 դրամով: Մեկ ամիս անց արժեթղթի իրական արժեքը կազմում է 92.000 դրամ: «Ա» բանկը արժեթղթերի դասակարգել է որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող:	Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 2.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 2.000դր

			Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 2.000դր
			Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 2.000դր
			Դտ - արժեթղթերի վերագնահատումից առաջացած վնասներ 2.000դր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր
	271	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: «Ա» բանկը «Բ» բանկից առևտրային նպատակով ձեռք է բերել արժեթղթեր 90.000 ՀՀ դրամով: Մեկ ամիս անց արժեթղթի իրական արժեքը կազմում է 88.000 ՀՀ դրամ: «Ա» բանկը արժեթղթերի դասակարգել է որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող:	Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 2.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 2.000դր
			Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 2.000դր
			ճիշտ պատասխանը նշված չէ
			Դտ - կորուստներ արժեթղթերի վերագնահատումից 2.000դր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր
	272	Համաձայն հաշվային պլանի, մինչև մարման ժամկետը պահվող տոկոսային արժեթղթերի (ներառյալ հաշվեգրված տոկոսները) մարման հաշվապահական ձևակերպումը	Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ Կտ - տոկոսային արժեթղթեր (անվանական արժեքի և հաշվեգրված և չհավաքագրված տոկոսների հանրագումարի չափով)
			Դտ - տոկոսային արժեթղթեր Կտ - հաշվեգրված տոկոսներ Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ
			Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ Կտ - տոկոսային արժեթղթեր Կտ - հաշվեգրված տոկոսներ (հաշվեգրված և չհավաքագրված տոկոսների չափով)
			Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ Կտ - տոկոսային արժեթղթեր (անվանական արժեք) Կտ - հաշվեգրված տոկոսներ (անվանական արժեքի և հաշվեգրված տոկոսների գումարի տարբերության չափով)
	273	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Ա բանկը Բ բանկից իրական արժեքով ձեռք է բերել 100.000 ՀՀ դրամ անվանական արժեք ունեցող արժեթուղթ՝ վճարելով 90.000 ՀՀ դրամ: Այդ արժեթղթերը դասակարգվել են որպես վաճառքի համար մատչելի	Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 100.000 Կտ - էգուտներ արժեթղթերի առք ու վաճառքից 10.000 Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000
			Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 90.000 Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000

			Ճիշտ պատասխանը նշված չէ
			Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 100.000 Կտ - վաճառքի համար մատչելի արժեթղթերի զեղչատոկոս 10.000 Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000
	274	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Ա բանկը Բ բանկից իրական արժեքով ձեռք է բերել 80.000 ՀՀ դրամ անվանական արժեք ունեցող արժեթղթեր, վճարելով 90.000 դրամ: Այդ արժեթղթերը դասակարգվել են որպես վաճառքի համար մատչելի:	Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 80.000 Դտ - վնասներ արժեթղթերի առք ու վաճառքից 10.000 Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000
			Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 90.000 Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000
			Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 80.000 Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթերի հավելավճար 10.000 Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	275	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Մինչև մարման ժամկետը պահվող առանց տոկոսի արժեթղթերը ձեռք են բերվել զեղչով:	Դտ - առանց տոկոսի արժեթղթեր (ձեռքբերման գին) Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ (ձեռքբերման գին)
			Դտ - առանց տոկոսի արժեթղթեր (անվանական արժեք) Կտ - առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս (ձեռքբերման գնի և անվանական արժեքի տարբերություն) Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ (ձեռքբերման գին)
			Դտ - առանց տոկոսի արժեթղթեր (ձեռքբերման գին) Դտ - առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս (ձեռքբերման գնի և անվանական արժեքի տարբերություն) Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ
			Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ (ձեռքբերման գին) Կտ - առանց տոկոսի արժեթղթեր (անվանական արժեք) Կտ - առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս (ձեռքբերման գնի և անվանական արժեքի տարբերություն)
	276	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկը 830.000,00 ՀՀ դրամով ձեռք է բերել այլ կազմակերպության տոկոսային պարտատոմս և մտադիր է այն պահել մինչև մարման ժամկետը: Արժեթղթի անվանական արժեքը 800.000,00 ՀՀ դրամ է:	Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 800.000 Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի հավելավճար 30.000 Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 830.000
			Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 830.000 Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 830.000
			Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 800.000 Դտ - հաշվեգրված տոկոսներ 30.000 Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 830.000
			Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 800.000 Կտ - արժեթղթերի հավելավճար 70.000 Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 730.000

	277	Համաձայն հաշվային պլանի, երբ բանկը ընդունում է հաճախորդի ներկայացրած ճանապարհային չեկը և վճարում է հաճախորդին՝ ներկայացված չեկի դիմաց: Ընտրել ճիշտ հաշվապահական ձևակերպումը	Դտ - կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր Կտ - բղթակցային հաշիվ կամ դրամարկղ
			Դտ - դեբիտորական պարտքեր Կտ - բղթակցային հաշիվ կամ դրամարկղ
			ճիշտ պատասխանը նշված չէ
			Դտ - հաճախորդի չեկային հաշիվ Կտ - բղթակցային հաշիվ կամ դրամարկղ
	278	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Մինչև ՀՀ ԿԲ կողմից սահմանված կարգով կանոնադրական հիմնադրամի գրանցումը, գործող բանկերի կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով փոխանցված գումարները հաշվառելու համար տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները	Դտ - կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվ ՀՀ ԿԲ-ում Կտ - կրեդիտորական պարտքեր կանոնադրական հիմնադրամի համալրման գծով
			Դտ - բղթակցային հաշիվ ՀՀ ԿԲ- ում Կտ - կրեդիտորական պարտքեր կանոնադրական հիմնադրամի համալրման գծով
			Դտ - կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվ ՀՀ ԿԲ-ում Կտ - բղթակցային հաշիվ
			Դտ - կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվ ՀՀ ԿԲ-ում Կտ - հաճախորդի հաշիվ
	279	Կազմակերպությունը գնել է 2.000.000 ՀՀ դրամ արժեքով հիմնական միջոցներ՝ 5-րդ տարվա վերջում մարվելիք փոխառությամբ: Ինչպիսի ազդեցություն կունենա տվյալ գործարքը կազմակերպության ընթացիկ ակտիվների հանրագումարի, ընթացիկ պարտավորությունների հանրագումարի և շահույթի վրա՝	ընթացիկ ակտիվների, ընթացիկ պարտավորությունների հանրագումարները և շահույթը չի փոխվի
			ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հանրագումարը կփոխվի իսկ շահույթը կմնա նույնը
			ընթացիկ ակտիվների հանրագումարը և շահույթը կփոխվի, իսկ ընթացիկ պարտավորությունների հանրագումարը կմնա նույնը
			ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հանրագումարը և շահույթը կփոխվի
	280	Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ներդրման օբյեկտի համախմբումը պետք է սկսվի	ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի կողմից վերահսկողություն ձեռք բերելու մտադրություն առաջանալու ամսաթվից
			ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի կողմից վերահսկողություն ձեռք բերելու ամսաթվից
			ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի կողմից վերահսկողություն ձեռք բերելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից
			բոլոր պատասխանները սխալ են
	281	Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ներդրման օբյեկտի համախմբումը պետք է դադարի	ներդրման օբյեկտի օտարման վերաբերյալ նախնական համաձայնության գալու ամսաթվից
			ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի կողմից վերահսկողության կորստի տարվա հունվարի 1-ից

			բոլոր պատասխանները սխալ են
			ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի վերահսկողությունը կորցնելուն պես
	282	Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության կազմման կանոններից, ո՞րն է սխալ՝	մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների, ծախսերի և դրամական հոսքերի նմանատիպ հոդվածները համախմբվում են
			յուրաքանչյուր դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության ներդրման հաշվեկշռային արժեքը և յուրաքանչյուր դուստր կազմակերպության սեփական կապիտալում մայր կազմակերպության բաժինը հաշվանցվում է (բացառվում է)
			դուստր ընկերության ակտիվները արտացոլվում են համախմբման ամսաթվի դրությամբ իրական արժեքով
			մայր կազմակերպությունը պետք է չվերահսկող բաժնեմասերը ներկայացնի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես սեփական կապիտալի հոդված՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին
	283	Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ընկերությունը ունի վերահսկողություն ներդրման օբյեկտի նկատմամբ, երբ ունի ա) իշխանություն ներդրման օբյեկտի նկատմամբ բ) ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկային ենթարկվածություն գ) ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանությունն օգտագործելու կարողություն՝ ներդրողի հատույցների գումարն իր ազդեցությանը ենթարկելու նպատակով	«ա»
			«ա» և «բ»
			«ա», «բ» և «գ»
			«բ» և «գ»
	284	Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», չվերահսկող բաժնեմասին վերաբերվող ո՞ր պնդումն է ճիշտ.	մայր կազմակերպությունը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում բոլոր տողերը պետք է ներկայացնի տրոհված՝ առանձնացնելով չվերահսկող բաժնեմասերին վերաբերվող գումարները
			մայր կազմակերպությունը պետք է չվերահսկող բաժնեմասերը ներկայացնի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես սեփական կապիտալի հոդված՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին
			մայր կազմակերպությունը ֆինանսական հաշվետվություններում չվերահսկող բաժնեմասը չի ներառում
			ճիշտ պատասխանը նշված չէ

	285	Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», իրական արժեքը չափելիս, կազմակերպությունը պետք է հաշվի առնի տվյալ ակտիվի կամ պարտավորության հետևյալ բնութագրերը	ակտիվի վիճակը
			գտնվելու վայրը
			բոլոր պատասխանները ճիշտ են
			ակտիվի վաճառքի կամ օգտագործման նկատմամբ սահմանափակումները
	286	Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», իրական արժեքի չափումը ենթադրում է, որ ակտիվը վաճառելու կամ պարտավորությունը փոխանցելու գործարքը տեղի է ունենում ա) կազմակերպության համար առավել բարենպաստ շուկայում բ) այդ ակտիվի կամ պարտավորության համար հիմնական շուկայում գ) հիմնական շուկայի բացակայության դեպքում, տվյալ ակտիվի կամ պարտավորության համար առավել բարենպաստ շուկայում	«ա»
			«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
	287	Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում ա) շուկայի մասնակցի տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը ակտիվի առավելագույն և լավագույն օգտագործումից բ) շուկայի մասնակցի կողմից ակտիվի գնման արժեքը գ) այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավելագույն և լավագույն կերպով	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա», «բ» և «գ»
			«ա» և «գ»
	288	Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», կազմակերպությունը պետք է օգտագործի գնահատման մեթոդներ, ա) որոնք տեղին են տվյալ հանգամանքներում բ) որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույն ին հասցնելով համապատասխան (տեղին) դիտելի ելակետային տվյալների օգտագործումը գ) որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ նվազագույնին հասցնելով ոչ դիտելի ելակետային տվյալների օգտագործումը	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա» և «գ»
			«ա», «բ» և «գ»
	289	Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», իրական արժեքի հիերարխիայում 1-ին մակարդակի ելակետային տվյալներ են.	այն տվյալներներն են, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի են ակտիվի կամ պարտավորության համար
			նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաների գնահաշվող գներ (չճշգրտվող) են, որոնք կազմակերպության համար կարող են հասանելի լինել չափման ամսաթվի դրությամբ
			ճիշտ պատասխանը նշված չէ

			ակտիվի կամ պարտավորության համար ոչ դիտելի տվյալներ են
	290	Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», իրական արժեքի հիերարխիայում 2-րդ մակարդակի ելակետային տվյալներ են. ա) ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների համար գնանշվող գները բ) նույնական կամ համանման ակտիվների կամ պարտավորությունների համար գնանշվող գներն այն շուկաներում, որոնք ակտիվ չեն գ) շուկայի տվյալներով հաստատված (հիմնավորված) ելակետային տվյալներ	«ա» և «բ»
			«բ» և «գ»
			«ա» և «գ»
			«ա», «բ» և «գ»
	291	Համաձայն հաշվային պլանի, բանկի և մասնաճյուղերի միջև փոխադարձ հաշվարկների արդյունքները	հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ ենթակա չեն զրոյացման
			հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ ենթակա են զրոյացման, իսկ զրոյացման արդյունքում առաջացած մնացորդը դասակարգվում է համապատասխան հաշիվներին
			հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ ենթակա չեն զրոյացման, սակայն պահանջվում է դրանց բացահայտումը հաշվետվություններին կից ծանոթագրություններում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	292	Համաձայն հաշվային պլանի, բանկը առաջնային շուկայում անվանականից ցածր արժեքով ձեռք է բերել պետական տոկոսային արժեթուղթ և մտադիր է այն պահել մինչև մարման ժամկետը: Արժեթուղթը ձեռք բերելիս տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.	Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Կտ - պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս Կտ - դրամական միջոցներ
			Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Կտ - դրամական միջոցներ
			Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Դտ - պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ Կտ - դրամական միջոցներ
			Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Դտ - պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար Կտ - դրամական միջոցներ
	293	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկը առաջնային շուկայում անվանականից բարձր արժեքով ձեռք է բերել պետական տոկոսային արժեթուղթ և մտադիր է այն պահել մինչև մարման ժամկետը: Արժեթուղթը ձեռք բերելիս տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.	Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Կտ - պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս Կտ - դրամական միջոցներ
			Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Դտ - պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար Կտ - դրամական միջոցներ

			Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Դտ - պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ Կտ - դրամական միջոցներ
			Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Կտ - դրամական միջոցներ
	294	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկը առաջնային շուկայում անվանականից ցածր արժեքով ձեռք է բերել պետական տոկոսային արժեթուղթ և մտադիր է այն վերավաճառել: Արժեթուղթը ձեռք բերելիս տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.	Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Կտ -պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս Կտ - դրամական միջոցներ
			Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Կտ - դրամական միջոցներ
			Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Կտ - պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ Կտ - դրամական միջոցներ
			Դտ - պետական տոկոսային արժեթղթեր Դտ - պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար Կտ - դրամական միջոցներ
	295	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկն իր կողմից թողարկված առանց տոկոսի արժեթուղթերն անվանական արժեքից ցածր գնով տեղաբաշխելիս ձևակերպվում է.	Դտ - դրամական միջոցներ Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր
			Դտ - դրամական միջոցներ Դտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր
			Դտ - տոկոսային ծախսեր Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր
			Դտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս Կտ - դրամական միջոցներ Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր
	296	Համաձայն հաշվային պլանի, արժեղթերից ստացվելիք տոկոսները հաշվեգրելիս ձևակերպվում է՝	Դտ - դրամական միջոցներ Կտ - տոկոսային եկամուտներ
			Դտ - արժեթուղթ Դտ - դրամական միջոցներ Կտ - տոկոսային եկամուտներ
			Դտ - արժեթղթերից ստացվելիք տոկոսներ Կտ - տոկոսային ծախսեր
			Դտ - արժեթուղթ Կտ - տոկոսային եկամուտներ

	297	«Ա» բանկը «Բ» բանկից վերավաճառելու նպատակով ձեռք է բերել արժեթղթեր 120.000 դրամով: Մեկ ամիս անց արժեթղթի իրական արժեքը կազմում է 125.000 դրամ: «Ա» բանկը արժեթղթերի վերագնահատումը արտացոլելու նպատակով իրականացնում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը	Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 5.000դր
			Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 5.000դր
			Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 5.000դր
			Դտ - արժեթղթերի վերագնահատումից առաջացած վնասներ 5.000դր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր
	298	«Ա» բանկը «Բ» բանկից վերավաճառելու նպատակով ձեռք է բերել արժեթղթեր 120.000 ՀՀ դրամով: Մեկ ամիս անց արժեթղթի իրական արժեքը կազմում է 115.000 ՀՀ դրամ: «Ա» բանկը արժեթղթերի վերագնահատումը արտացոլելու նպատակով իրականացնում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը	Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 5.000դր
			Դտ - կորուստներ արժեթղթերի վերագնահատումից 5.000դր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր
			Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 5.000դր
			բոլոր պատասխանները սխալ են
	299	Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Մինչև մարման ժամկետը պահվող տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի գծով արժեթղթի մարման պահին հաշվեգրվել է 2.000 ՀՀ դրամի տոկոսային եկամուտ; արժեթղթի անվանական արժեքը կազմում է 100.000 ՀՀ դրամ: Արժեթղթի (ներառյալ տոկոսների) մարման դեպքում	Դտ -թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 102.000 Կտ - տոկոսային արժեթղթեր (անվանկան արժեք) 102.000
			Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 102.000 Դտ - տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթեր (անվանկան արժեք) 100.000 Կտ - հաշվեգրված տոկոսներ (հաշվեգրված տոկոսների չափով) 2.000
			Դտ - տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթեր (անվանկան արժեք) 100.000 Կտ - հաշվեգրված տոկոսներ (հաշվեգրված տոկոսների չափով) 2.000 Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 102.000

			Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 102.000 Կտ - տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթեր (անվանական արժեք) 100.000 Կտ - հաշվեգրված տոկոսներ (հաշվեգրված տոկոսների չափով) 2.000
300		Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկը 100 միավորով ձեռք է բերել 120 միավոր անվանական արժեքով 6%-ոց մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթը:	Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 120 միավոր Կտ - դրամական միջոցներ 120 միավոր
			Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 100 միավոր Կտ - դրամական միջոցներ 100 միավոր
			Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 120 միավոր Կտ - մինչև մարման ժամկետը պահվող արժթղթերի զեղչատոկոս 20 միավոր Կտ - դրամական միջոցներ 100 միավոր
			Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 100 միավոր Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի հավելավճար 20 միավոր Կտ -դրամական միջոցներ 120 միավոր:
301		Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Արժութային սվոպ կնքելիս՝ արտարժույթ վերցնելու դեպքում, տոկոսներ ստացողի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝	Չնակերպում չի կատարվում
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			Կտ - Թղթակցային հաշիվ կամ դրամարկղ արտարժույթով Կտ - Արժութային սվոպ արտարժույթով (պասիվ) և Դտ - Արժութային սվոպով վաճառված արժույթ դրամով Կտ - Թղթակցային հաշիվ կամ դրամարկղ դրամով
			Դտ - Արժութային սվոպ արտարժույթով (ակտիվ) Կտ - Թղթակցային հաշիվ կամ դրամարկղ արտարժույթով, և Դտ - Թղթակցային հաշիվ կամ դրամարկղ դրամով Կտ - Պարտավորություններ արժութային սվոպի գծով դրամով
302		Բանկի գործադիր մարմինը 2004թ. մարտի 5-ին կազմել է 2003թ. ֆինանսական հաշվետվությունների նախագիծը, 2004թ. մարտի 10-ին նախագիծը գործադիր մարմինը վավերացվել է բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացնելու համար: 2004թ. մարտի 17-ին բաժնետերերի ժողովի կողմից դրանք հաստատվել են: 2004թ. ապրիլի 1-ին հանձնվել է Կենտրոնական բանկին: Ֆինանսական հաշվետվությունները համարվում են ներկայացման համար վավերացված	2004թ. մարտի 10-ին
			2004թ. ապրիլի 1-ին
			2004թ. մարտի 17-ին

			Ճիշտ պատասխանը նշված չէ
	303	Բանկի վերաբերյալ ունենք հետևյալ տվյալները. - հիմնական միջոցի վերագնահատումից օգուտներ՝ 500 միավոր, - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ՝ 200 միավոր, - արտարժույթի առք ու վաճառքից ստացված օգուտներ՝ 800 միավոր, - հիմնական միջոցի իրացումից ստացված օգուտներ՝ 150 միավոր, - հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախս՝ 120 միավոր, - վարկերի և այլ փոխատվություններից ստացված տոկոսներ՝ 450 միավոր, - հիմնական միջոցի մաշվածություն՝ 50 միավոր, - գործուղման ծախսեր՝ 180 միավոր (օրենսդրությամբ սահմանված չափը չգերազանցող): Բանկի շահութահարկի գումարը կկազմի (դրույքը՝ 20%)	330 միավոր
			310 միավոր:
			210 միավոր
			350 միավոր
	304	Բանկի վերաբերյալ առկա են հետևյալ տվյալները. - ծառայությունների իրացումից հասույթ՝ 700 միավոր - հիմնական միջոցների իրացումից հասույթ՝ 80 միավոր - արտարժութային ակտիվների վերագնահատումից դրական արդյունք՝ 50 միավոր - հիմնական միջոցի վերագնահատման դրական արդյունք՝ 300 միավոր, - աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարումներ՝ 110 միավոր, - շահաբաժինների վճարում մասնակիցներին՝ 70 միավոր, - այլ անձանց կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներ՝ 20 միավոր, - հիմնական միջոցի ընթացիկ վերանորոգում՝ 10 միավոր, - ֆակտորինգային գործառնությունների գծով եկամուտներ 60 միավոր, - կապիտալացվող ծախսեր՝ 60 միավոր: Հարկվող շահույթը կկազմի	840 միավոր
			720 միավոր
			660 միավոր
			960 միավոր: